Նանա Իոսելիանի
Սոփիո Քեբուրիա
Մայա Իոսելիանի

1

Արվեստ

Ուսուցչի գիրք

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից, 2023 թվականին։

 სულაკაურის გამომცემლობა

Արվեստ 1
Ուսուցչի գիրք
Հեղինակներ՝ **Նանա Իոսելիանի, Սոփիո Քեբուրիա, Մայա Իոսելիանի**

Խմբագիր՝ **Վերիկո Էնուքիձե**
Դիզայներ՝ **Իա Մախաթաձե**
Տեխնիկական դիզայներ՝ **Գիորգի Լոմսաձե**

Առաջին հրատարակություն, 2023
© Սուլակաուրիի հրատարակչություն, 2023
Բոլոր իրավունքները պաշտպանված են։

ՍՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցեն. Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-431-9

ART 1
Teacher's Book

© Sulakauri Publishing, 2023
all rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

Բովանդակություն

Կերպարվեստ և կիրառական արվեստ....6
I-IV դասարանների չափորոշիչը, տարրական աստիճան....6
Նպատակային հասկացություններ և ենթահասկացություններ....7
Նպատակային հասկացությունները և դրանց կայուն պատկերացումները....8
Թեմատիկ բաժինները և դրանց կայուն պատկերացումները տարրական աստիճանում .9
Պարտադիր թեմատիկ բաժինները....10
Հասկացություններ և ենթահասկացություններ....10
Ներածություն....11
Ներածական դասեր....14
Դաս 1. Արվեստի աշխարհը (երկու մաս)....14
Դաս 2. Ես արվեստագետ եմ....15
Համալիր առաջադրանքների ուղեցույց....17
Թեմատիկ մատրիցա 1....22
Թեմատիկ մատրիցա 2....40
Թեմատիկ մատրիցա 3....58
Թեմատիկ մատրիցա 4....74
Թեմատիկ մատրիցա 5....87
Ամփոփիչ դաս «Ես արդեն գիտեմ»....101
Հավելված....103
Ուսանողի ինքնագնահատման ձև....106

Աշակերտի գրքի բովանդակությունը

Ինչ անհրաժեշտ կլինի մեզ **4**
1. Արվեստի աշխարհը **6**
2. Ես արվեստագետ եմ **10**

Գծերի և գույների թագավորություն
3. Գծերի թագավորություն **14**
4. Արվեստանոց **16**
5. Նկարում ենք երաժշտություն **18**
6. Նկարում ենք գունավոր գծերով **20**
7. Երեք հրաշագործները **22**
8. Բաղադրյալ գույներ. **24**
9. Գույների ձայնը **26**
Ի՞նչ սովորեցի: **28**

Ո՞վ է մեզ նայում նկարից:
10. Ժամանակ չունեմ: Ես խաղում եմ: **32**
11. Գիծ և տրամադրություն.. . . . . **34**
12. Երկու ընկեր **36**
13. Դիմանկար **38**
14. Ինքնադիմանկար. **40**
15. Տխրություն ուրախ գույներով **42**
16. Ի՞նչ գույնի է ուրախությունը:. **44**
17. Արվեստանոց **46**
18. Փոքրիկ ընկերները **48**
19. Շրջանակ **50**
Ի՞նչ սովորեցի: **51**

Զմեռ պապի արվեստանոցը

20. Ամանոր է գալիս: **54**
21. Զվարճալի ձևեր **56**
22. Արվեստանոց **58**
23. Թվային նկար **60**
24. Ամանորյա զարդարանքներ. **62**
25. Տոնածառ **64**
26. Շնորհավորական բացիկ **66**
Ի՞նչ սովորեցի: **68**

Բնությունն իմ շուրջը

27. Բնապատկեր **72**
28. Գիշերային բնապատկեր **74**
29. Զմեռային բնապատկեր **76**
30. Նկարենք ծով **78**
31. Նկարենք սար **80**
32. Նկարենք անտառ. **82**
33. Արվեստանոց **84**
Ի՞նչ սովորեցի: **86**

Կենդանի բնություն

34. Նախնիների պատմությունները **90**
35. Քանդակ **92**
36. Ինչի՞ց է պատրաստվում քանդակը:. **94**
37. Ապլիկացիա **96**
38. Թղթե քանդակ **98**
Ի՞նչ սովորեցի: **100**

Հիշենք **102**
Ես արդեն գիտեմ **104**

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

I-IV ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ, ՏԱՐՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Կերպարվեստի և կիրառական արվեստի չափորոշիչը		
Արդյունքների դասիչներ	**Չափորոշչի արդյունքները**	**Նպատակային հասկացություններ**
	Աշակերտը պետք է կարողանա.	**1. Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները (Արդյունք 1,3,4)** **2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան (Արդյունք 2,3,4)** **3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները (Արդյունք 1,2,3,4)** **4. Կերպարվեստի ժանրերը (Արդյունք 1,2,3,4)**
Կ.կ.տարր.(Ի).1.	Աշխատության մեջ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (զգացմունքները), տպավորությունները փոխանցելու համար նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները։	
Կ.կ.տարր.(Ի).2.	Նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկա՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրականացնելու համար։	
Կ.կ.տարր.(Ի).3.	Համապատասխան տերմինների կիրառմամբ ներկայացնել անհատական և համատեղ աշխատանքը՝ իր, համադասարանցիների կամ անվանի արվեստագետների աշխատությունների մասին տպավորություններով կիսվելու և իմաստը, գաղափարները հասկանալու համար։	
Կ.կ.տարր.(Ի).4.	Արվեստի տարբեր բնագավառների և ժանրերի նմուշները կապել ամենօրյա կյանքի և սեփական ստեղծագործական գործունեության հետ՝ արվեստի բազմազանության ընկալման և վերաբերմունքի զարգացման համար։	

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարրական աստիճան I-IV դասարաններ	
Նպատակային հասկացություն	**Ենթահասկացություն**
(1) Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները	**Կերպարվեստի և կիրառական արվեստի միջոցներ (տարրեր):** **Գիծ** (տարբեր տեսակի հաստ, բարակ, ուղիղ, ալիքաձև, բեկյալ, ընդհատվող, զիգզագաձև, հորիզոնական, ուղղահայաց, կոր, անկյունագծային, ուրվագիծ, նրբագիծ): **Գույն** (հիմնական և բաղադրյալ, սառը և տաք, բաց և մուգ, հակադիր, տոն, կիսատոն): **Ձև** (պարզ երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող, հարթ (2D) և տարածական (3D), համաչափ և անհամաչափ: **Ֆակտուրա, ֆոն:** **Կերպարվեստի և կիրառական արվեստի միջոցներ (սկզբունքներ).** ռիթմ, տարրերի կրկնություն, հիմնականի տարանջատում, առաջին և հետին պլան, հակադրություն, ստատիկա, դինամիկա, պատկերների բաշխում աշխատության մեջ, ուղղահայաց կամ հորիզոնական ձևաչափի ընտրություն:
(2) Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան	**Տեխնիկա.** նկարչություն, ծեփակերտում, ապլիկացիա, կոլաժ, խճանկար, դրոշմ, կառուցքավորում, համակարգչային նկարչության ծրագիր և այլն:
(3) Կերպարվեստի բնագավառներ	**Բնագավառներ.** նկարչություն (գեղանկարչություն, գրաֆիկա), քանդակագործություն, ճարտարապետություն, դեկորատիվ-կիրառական արվեստ:
(4) Կերպարվեստի ժանրեր	**Ժանրեր.** բնանկար, դիմանկար, նատյուրմորտ, կենցաղային և այլն:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

I-IV դասարաններ	
Նպատակային հասկացություններ	**Նպատակային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ**
(1) Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները	● Ասելիքը (պատմություն, զգացում, միտք, տպավորություն, տրամադրություն, հույզեր, վերաբերմունք, դիտարկման արդյունքները), գեղարվեստական մտահղացումը փոխանցելու համար մարդիկ օգտագործում են արվեստի լեզուն, այսինքն՝ կերպարվեստի տարրերը (գույն, գիծ, ձև) և սկզբունքները (օր.՝ ռիթմ, հիմնականի տարանջատում, հակադրություն և այլն)։
(2) Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան	● Արվեստի նմուշ ստեղծելու համար մարդ կիրառում է տարբեր նյութեր և տեխնիկա։
(3) Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները	● Արվեստի բաժանումը տարբեր բնագավառների պայմանավորում են օգտագործված նյութը, տեխնիկան, նպատակը։ ● Կերպարվեստի և կիրառական արվեստի յուրաքանչյուր բնագավառին առավել բնորոշ է որևէ տարր։
(4) Կերպարվեստի ժանրերը	● Արվեստը ժանրերի է բաժանվում ըստ արտացոլված բովանդակության։

ԹԵՄԱՏԻԿ ԲԱԺԻՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՈՒՄ (I-VI ԴԱՍԱՐԱՆՆԵՐ).

Թեմատիկ բաժիններ	Կայուն պատկերացումներ
Ես և արտաքին աշխարհը	● Ես աշխարհի մի մասն եմ, ես կարող եմ շատ բան սովորել նրանից։ ● Արվեստը սահմաններ չունի, այն միավորում է ամբողջ աշխարհը։ ● Վրաց/այլ ազգերի արվեստն ուսումնասիրելով՝ կարող ես ավելի լավ հասկանալ, թե ով ես դու, և որն է քո տեղը աշխարհում։ ● Ես կարող եմ նաև փոխել արտաքին աշխարհը արվեստի միջոցով։ ● Արտաքին աշխարհի բազմազանությունը և իմ վերաբերմունքը դրա նկատմամբ ես կարող եմ փոխանցել արվեստի միջոցով։ ● Մեզանից յուրաքանչյուրն իր վերաբերմունքն աշխարհի նկատմամբ արվեստի միջոցով կարող է արտահայտել բոլորովին տարբեր կերպ։
Մարդիկ և արվեստը	● Արվեստը կարևոր դեր է խաղում մարդկանց կյանքում։ ● Արվեստի միջոցով մարդկանց, նրանց բնավորության, կյանքի մասին շատ բան կարելի է իմանալ։ ● Արվեստն օգնում է մարդկանց ավելի լավ հասկանալ միմյանց և օգնել տարբեր տեսակի խնդիրների լուծմանը։ ● Արվեստի միջոցով մենք կարող ենք իմանալ, թե ինչպիսին են եղել մարդիկ տարբեր ժամանակներում, տարբեր երկրներում։ ● Արվեստի միջոցով հնարավոր է ավելի լավ ծանոթանալ ինքներդ ձեզ, ուրիշներին և արտաքին աշխարհին։
Արվեստը մեր շուրջը	● Մարդու գոյությունից մինչև մեր օրերը արվեստը նրա կյանքի անբաժանելի մասն է։ ● Մարդիկ արվեստի գործեր ստեղծում էին և այսօր էլ ստեղծում են տարբեր նպատակներով։ ● Արվեստը կարելի է հայտնաբերել մեր շուրջը շատ վայրերում և տարբեր ձևերով։ ● Այն, ինչ մենք տեսնում ենք մեր շուրջը, ամեն ինչը արվեստը չէ։ ● Արվեստը բաժանվում է տարբեր բնագավառների։ Որոշ բնագավառների նմուշներ կարող է ստեղծել ինչպես համապատասխան բնագավառի մասնագետը, այնպես էլ մեզանից յուրաքանչյուրը։ ● Արվեստն իմ շրջապատում կարող է այնքան բազմազան լինել, ինչպես մարդն ու արտաքին աշխարհն է։

ՊԱՐՏԱԴԻՐ ԹԵՄԱՏԻԿ ԲԱԺԻՆՆԵՐ

Տարրական աստիճանում ուսումնական տարվա ընթացքում պետք է մշակվեն բոլոր երեք թեմատիկ բաժինները, որոնք իրենց հերթին կարող են բաղկացած լինել թեմաներից և ենթաթեմաներից: Կարելի է դրանք մի քանի անգամ նունիսկ կրկնել: Թեման/ենթաթեման պետք է լինի աշակերտի անձնական փորձի հետ կապված իմաստալից համատեքստ (թեմայի/ենթաթեմայի անվանումը չպետք է համընկնի նպատակային հասկացությունների, ենթահասկացությունների անվանման հետ), որը տալիս է նպատակային հասկացությունները և ենթահասկացությունները խորքային մշակելու հնարավորություն:

Թեմատիկ բաժիններ.

- **Ես և արտաքին աշխարհը**
- **Մարդիկ և արվեստը**
- **Արվեստը մեր շուրջը**

ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I դասարան	
Նպատակային հասկացություններ	**Ենթահասկացություն**
(1) Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները	**Միջոցներ (տարրեր):** ● **Գիծ** (տարբեր տեսակի հաստ, բարակ, ուղիղ, ալիքաձև, բեկյալ, ընդհատվող, զիգզագաձև, հորիզոնական, ուղղահայաց, կոր, անկյունագծային, ուրվագիծ, նրբագիծ): ● **Գույն** (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ):
(2) Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան	**Տեխնիկա.** նկարչություն, ծեփակերտում, ապլիկացիա, կոլաժ, խճանկար, դրոշմ, կառուցքավորում, համակարգչային նկարչության ծրագիր և այլն:
(3) Կերպարվեստի բնագավառները	**Բնագավառներ.** նկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն, դեկորատիվ-կիրառական արվեստ:
(4) Կերպարվեստի ժանրերը	**Ժանրեր.** բնանկար, դիմանկար, նատյուրմորտ, կենցաղային և այլն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտի գրքի հետ կապված.

Տվյալ դասագրքի նպատակն է երեխաներին սիրել տալ արվեստը, սովորեցնել ընկալել գեղեցկությունը, ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրություն առաջացնել և նրանց դարձնել ստեղծագործական գործընթացի համամասնակիցներ և նախաձեռնողներ:

Դասագիրքն առաջարկում է բոլոր երեք պարտադիր թեմատիկ բաժիններին համապատասխան թեմաներ: Թեմաների հաջորդականությունն այնպես է կառուցված, որ յուրաքանչյուր հաջորդ թեմա զարգացնի նախորդ թեմայում ուսումնասիրված նպատակային հասկացություններն ու ենթահասկացությունները և հիմնվի դրանց վրա: Միաժամանակ ներդրվում են նոր հասկացություններ և ենթահասկացություններ: Հետևաբար, յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու փորձը աշակերտին նախապատրաստում են նոր նպատակային հասկացության և համապատասխան ենթահասկացության յուրացման և ըմբռնման համար: Տարեվերջին աշակերտի մոտ, քայլ առ քայլ, իրար վրա կառուցած փորձի արդյունքում ձևավորվում են տիեզերքի մասին համարժեք կայուն պատկերացումներ:

Տարրական աստիճանի, հատկապես I-II դասարանների աշակերտները դժվարանում են կարդալ տեքստը: Աշակերտի գրքում տեքստերի ծավալը հնարավոր է գերազանցում է սպասվածը, բայց դա իր պառճառն ունի: Տարրական դասարանների աշակերտների ծնողները հատկապես ոգևորված են երեխաների ուսանմամբ, ցանկանում են օգնել փոքրիկներին հաղթահարել դժվարությունները: Միայն նկարազարդումով և մի քանի բառով տրամադրված նյութը բավարար չէ ծնողին գործի էության մեջ ընդգրկելու համար: Պետք է նկատի ունենալ այն, որ նա չունի Ուսուցչի գիրք, որտեղից սպառիչ տեղեկություններ կստանար: Այդ իսկ պատճառով ծնողները հաճախ դժգոհություն են հայտնում առարկայի դասավանդումից: Հեղինակներով մեզ իրավունք ենք վերապահել Աշակերտի գրքում ներառել ակնկալվողից ավելի շատ տեքստեր, ինչը կնպաստի աշակերտ-ծնող-ուսուցիչ համագործակցությանը:

Ուսուցչի գրքի հետ կապված.

Ուսուցչի գրքում թեմայի ուսումնասիրությունը բաժանված է քայլերի: Որոշ քայլեր ներառում են մի քանի դասեր, քանի որ դրանք վերաբերում են նույն հասկացություններին և ենթահասկացություններին: Յուրաքանչյուր հաջորդ քայլ սկսվում է այնտեղ, որտեղ ներկայացվում է նոր նպատակային հասկացությունը և դրա համապատասխան ենթահասկացությունը, որը միտված է նոր կայուն պատկերացման ձևավորման:

Ուսուցչի գրքում գործողությունները նկարագրված են մանրամասն. գիտելիքի ամրապնդման, մտածողական կարողությունների և ռեֆլեքսիայի զարգացման հարցերին կից տրված են ենթադրյալ պատասխաններ, յուրաքանչյուր գործնական աշխատանքին կից՝ նյութերի ցանկ, քայլ առ քայլ հրահանգներ, խորհուրդներ:

Ուսուցչի գիրքը պարունակում է տարիքային առանձնահատկություններին համապատասխան բազմազան ակտիվություններ, որոնք կնպաստեն աշակերտների մանր մոտորիկայի զարգացմանը, հաղորդակցության, համագործակցության, կազմակերպման, վերլուծության, մեկնաբանման, գնահատման և կշռադատման հմտությունների ձևավորմանը: Ակտիվությունները միտված են դիտարկման, դատողության, մեկնաբանման և համեմատության կարողությունների զարգացմանը: Կան նաև խաղեր, փորձեր, գործնական վարժություններ և միջանկյալ առաջադրանքներ, որոնք աշակերտներին կնախապատրաստեն համալիր առաջադրանքների կատարման համար: Ուսուցչի գրքում առաջարկված միջանկյալ ակտիվություններն ուղեկցվում են նաև

կշռադատությանը միտված հարցերով, քանի որ միջանկյալ քայլերը, փաստորեն, յուրօրինակ «փորձ» են համալիր առաջադրանքի կատարման-ներկայացման համար: Կշռադատման հարցերին պատասխանելն աշակերտին կնախապատրաստի խնդիրը հաջողությամբ հաղթահարելու, SOLO տաքսոնոմիայի հարաբերական մակարդակին հասնելու համար:

Տարբերակված ուսուցման նպատակով հնարավոր է ակտիվությունները բարդացնել կամ պարզեցնել՝ առաջադրանքի պայմանում եղած բաղադրիչներն ավելացնելով կամ նվազեցնելով:

Յուրաքանչյուր դասին նախորդում է մոտիվացիոն զրույց/ նախապես ունեցած գիտելիքներն ակտիվացնող հարցեր, ինչն աշակերտին կնախապատրաստի ակտիվորեն մասնակցելու դասի ընթացքին:

Գրեթե յուրաքանչյուր քայլի վերջում տրվում են քայլերի ամփոփիչ հարցեր, որոնք կօգնեն աշակերտներին համախմբել ձեռք բերված գիտելիքները/փորձը: Քայլի ամփոփիչ հարցեր չեն տրված միայն այն դասերի դեպքում, որոնք կատարվում են միջանկյալ առաջադրանքներով, որովհետև միջանկյալ առաջադրանքին հաջորդում է իր կշռադատման հարցաշարը, որն առանց այն էլ ամփոփում է ձեռք բերված փորձը/գիտելիքը:

Յուրաքանչյուր քայլ ուղեկցվում է պատկերազարդ նյութով, տեսադասերի կամ աուդիոձայնագրությունների ինտերնետային հղումներով, որոնք կօգնեն աշակերտներին յուրացնել նյութը, կզվարճացնեն և կբազմազանացնեն դասը:

Որոշ դասերին կցված է բառարան՝ յուրացվելիք տերմիններ՝ իրենց բացատրություններով:

Աշակերտի գրքում տրված փուլերով լուսանկարչական հրահանգներին Ուսուցչի գրքում ավելանում է մանրամասն նկարագրություն:

Ուսուցչի գիրքն ավարտվում է հավելվածով, որը պարունակում է պատճենման ենթակա ձևվածքներ:

Դասագրքի վրա աշխատելու ընթացքում մենք հնարավորություն ունեինք մեր պլանավորած դասերը ստուգելու անմիջապես դասասենյակում, տարբեր հմտություններ ու կարողություններ ունեցող երեխաների հետ: Հետևաբար, ակտիվությունները պլանավորված են՝ հիմնվելով միջին տվյալների վրա: Ուսուցիչը կարող է դասագրքում առաջադրված գաղափարները հարմարեցնել իրենց իսկ հանգամանքներին, աշակերտների հնարավորություններին կամ դպրոցի նյութատեխնիկական բազային: Օրինակ, ուսուցիչը կարող է առաջարկված ակտիվությունների մեջ փոփոխություններ կատարել՝ օգտագործել տարբեր նյութեր կամ տեխնիկա կամ տարբեր կարողություններ ունեցող աշակերտների համար նմանատիպ կամ տարբեր դժվարությունների ակտիվություններ ընտրել:

Դասերը ուղեկցվում են մի քանի ակտիվություններով՝ հարցերի և գործնական առաջադրանքների տեսքով:

I-II դասարանների աշակերտների հետաքրքրությունների ու կարողությունների նախատեսմամբ, հարցեր պարունակող առաջադրանքների նպատակն է երեխաներին սովորեցնել ընկալել արվեստի գործերը: Առաջադրանքները նրանց հարկադրում են ուշադիր դիտարկել նկարազարդումը, բացահայտել, մտածել, գնահատել, զարգացնել սեփական հուզական և ճանաչողական վերաբերմունք, որը նրանց կընտելացնի ապագայում տիեզերքն ընկալել ոչ թե մակերեսային, այլ՝ հիմնավոր, գիտակցված:

Հանձնարարական

Դասագրքում բոլոր ակտիվությունների համար անհրաժեշտ նյութերն ու անհրաժեշտ միջոցները ընտրված են առավելագույնը մատչելիության և անվտանգության պայմանների նախատեսմամբ, սակայն, շատ կարևոր է դրանք օգտագործելուց առաջ ուսուցիչը բացատրի/հիշեցնի աշակերտներին օգտագործման կանոնները:

Թեմատիկ մատրիցայի կառուցվածքը՝

- Դասարան.
- Թեմատիկ բլոկ.
- Թեմա.
- Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ.
- Հարցը.
- Նպատակային հասկացություններ և ենթահասկացություններ.
- Հանգուցային հարցեր.
- Համալիր առաջադրանքի պայմանը.
- Նպատակային հասկացություններ և դրանց հետ կապված կայուն պատկերացումներ.
- Գնահատման չափանիշներ (որոշակի համալիր ակտիվության համապատասխանեցված).
- Համալիր առաջադրանքի իրականացման փուլեր (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)։

I փուլ. Ծանոթացում համալիր առաջադրանքի պայմանին.

- Քննարկվելիք քեյսեր՝ համալիր առաջադրանքի իրականացման համար։
- Ռեսուրսներ համալիր առաջադրանքի իրականացման համար։
- Համալիր առաջադրանքի ըմբռնմանը միտված հարցեր։

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա.

Քայլերը ներառում են.

- կոնկրետ դասի նպատակներ,
- ակնկալվող արդյունքները և ստուգիչներ,
- տեսողական ռեսուրսների ցանկ,
- մոտիվացիոն զրուցելու տեքստ և/կամ հարցեր՝ նախապես ունեցած գիտելիքներն ակտիվացնելու համար,
- ակտիվության համար անհրաժեշտ նյութերի ցանկ,
- ակտիվության նկարագրություն,
- ակտիվության/միջանկյալ առաջադրանքի հետ կապված հարցեր և համապատասխան պատասխաններ,
- դասի թեմայի հետ կապված ամփոփիչ հարցեր։

III փուլ. Համալիր առաջադրանքի կատարում և ներկայացում (Աշակերտի գրքում. «Ի՞նչ սովորեցի»)։

- Գնահատումներ՝ զարգացնող՝ ըստ SOLO տաքսոնոմիայի։

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԵՐ

ԴԱՍ 1. ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԸ (ԵՐԿՈՒ ՄԱՍ)

Ծանոթանալ կերպարվեստի երկու ճյուղերին՝ **գեղանկարչությանը և քանդակագործությանը։**

Մոտիվացիոն տեքստ.

Արվեստի աշխարհն անծայրածիր է. բանաստեղծություններ, հեքիաթներ, ֆիլմեր, երաժշտություն, պար և երգ, նկարներ, քանդակներ, գեղեցիկ շենքեր, գեղեցիկ իրեր... Այս ամենն արվեստ է։

Այս անվերջանալի աշխարհում չմոլորվելու համար ես (ուսուցիչ) կդառնամ ձեր ուղեկցորդը։ Կծանոթացնեմ ձեզ արվեստի լեզվին։

Կսովորեցնեմ ձեզ.

- ինչպես նկարել, գունավորել, կերտել ձեր մտքերը, զգացմունքները, տպավորությունները,
- ինչպես են դա անում ուրիշները։

Արվեստի դասին դու կլինես և՛ նկարիչ, և՛ քանդակագործ։

Երբեմն կկերտես, երբեմն կնկարես, կսովորես հետաքրքիր ու գեղեցիկ իրեր պատրաստել։

Մեր առարկան կոչվում է կերպարվեստ։

Արվեստագետներն իրենց զգացմունքներն ու մտքերն այնպես են պատկերում, որ մեզ նույնպես ցույց տան այն։

Դուք նույնպես կսովորեք կերպարվեստի լեզվով արտահայտել ձեր մտքերը, տպավորությունները, զգացմունքները։

Առաջին մաս.

Հարց. Ի՞նչ է արվեստը, և ի՞նչ են ստեղծում արվեստագետները։

- Քանդակագործը քանդակ է պատրաստում։
- Նկարիչը նկար է նկարում։

Ակտիվություն 1. Դիտարկում, տեսակավորում.

Գուշակի՛ր.

- Ո՞րն է քանդակ։
- Ո՞րն է նկար։

Լրացուցիչ հարցեր.

- Ո՞րն է տարբերությունը նկարի և քանդակի միջև։

Պատասխան. Նկարը նկարվում է հարթ մակերևույթի վրա։ Արձանը տեղակայված է տարածության մեջ, և այն կարող ես դիտարկել բոլոր կողմերից։

- Որտե՞ղ և ի՞նչ ձևով ես կյանքում հանդիպել նկարչության կամ քանդակագործության։

Պատասխան. պատի վրա՝ նկար, փողոցում, հրապարակում՝ արձան...

- Ինչի՞ համար է անհրաժեշտ արվեստը։
- Ինչո՞ւ ենք մենք պատից նկարներ կախում։

Պատասխան. Արվեստը գեղեցկացնում է աշխարհը։ Փողոցում, հրապարակում, այգում արձաններ

կան: Դրանք նկատելի են և հիշարժան: Փոքր արձանիկները երբեմն դրվում են գրադարակի վրա և դրանով իսկ գեղեցկացնում սենյակը:
Պատից կախված նկարները զարդարում, գունավորում են սենյակը, ինչ-որ բան պատմում...

Երկրորդ մաս.

Մոտիվացիոն զրույց.

Արի՛ ներս նայենք արվեստագետի արվեստանոց:

- Ինչո՞վ է նկարում նկարիչը:
- Ինչո՞վ է քանդակում քանդակագործը:

Լրացուցիչ հարցեր.

- Ծեփակերտում է պլաստիլինով:
- Ինչպե՞ս է կոչվում ծեփակերտած պատրաստվածքը:
- Սիրո՞ւմ ես նկարել:
- Ինչո՞վ և ի՞նչ ես նկարում սովորաբար:
- Ինչի՞ն են պետք նկարչին ներկեր, վրձիններ, ներկապնակ, մատիտներ:
- Դիտարկի՛ր դասագրքում տրված լուսանկարները: Ի՞նչ են անում քո հասակակիցները:
- Ո՞ր նյութն է քեզ ծանոթ:
- Որո՞վ ես նկարել/կերտել:

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, նկարչություն

Որպեսզի ավելի լավ ճանաչենք միմյանց, նկարե՛ք ինքներդ ձեզ:

ԴԱՍ 2. ԵՍ ԱՐՎԵՍՏԱԳԵՏ ԵՄ

Տեսառեսուրս. Հեռուստադպրոց՝

«Մեր ձեռքերը». https://www.youtube.com/watch?v=5_lKZlwRvYk;

«Խխունջ». https://www.youtube.com/watch?v=_T1yh_u_Dk0;

Բառարան.

Արվեստանոց – նկարչի աշխատանքային տարածք:

Մոտիվացիոն զրույց.

Մարդիկ նկարել են անհիշելի ժամանակներից:

Ինչո՞ւ էր նախնադարյան մարդկանց մոտ նկարելու ցանկություն առաջանում:

Միգուցե նրանք դեռ բավարար բառեր չգիտեի՞ն, որպեսզի միմյանց պատմեին իրենց արկածները: Իսկ նկարներով շատ պատմություններ կարելի է «պատմել»: Նրանք նկարում էին կենդանիներ ու թռչուններ, քանի որ այն ժամանակ նախնադարյան մարդիկ իրենց ձեռքերի հույսին էին, այն ձեռքերի, որոնցով և՛ իրենց անհրաժեշտ իրերն էին պատրաստում, և՛ արվեստի նմուշներ ստեղծում:

- Ինչի՞ վրա էին նկարում նախնադարյան մարդիկ, չէ՞ որ նրանց թուղթ չունեին:

Պատասխան. Առաջին նկարները հայտնվել են քարանձավի պատերին:

Ակտիվություն 1. Դրոշմվածք, գործնական աշխատանք.

Նկարի՛ր նկար քո ձեռքի դրոշմով։

* Ներկերի բացակայության դեպքում աշակերտները մատիտով կամ մարկերով կուրվագծեն իրենց ձեռքի ափերը։

Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթեր, գուաշի ներկեր, ներկապնակ, վրձին, նշիչներ, անձեռոցիկ։

- Վրձնով ձեռքիդ ափին կամ մատներիդ քսի՛ր գուաշի ներկ։
- Ձեռքիդ ափը դի՛ր նկարչության թերթի վրա։
- Զգուշորեն վերցրո՛ւ ձեռքդ և ուշադիր դիտի՛ր դրոշմվածքը։ Դիտարկի՛ր տարբեր կողմերից և փորձի՛ր նմանեցնել որևէ բանի։
- Դրոշմին կցանկարի՛ր այնպիսի մանրամասեր, որ քո հայտնագործությունը ճանաչեն նաև ուրիշները։
- Ի՞նչ ստացվեց։ Ի՞նչ ճանաչեցին քո ընկերները։

Առարկա. Կերպարվեստ և կիրառական արվեստ **Դասարան. I**			
1 թեմատիկ բաժին. Մարդիկ և արվեստը		**Նպատակային հասկացություններ և ենթահասկացություններ**	**Համալիր առաջադրանքի պայմանը/գաղափարը**
1	**Թեմա.** Գծերի և գույների թագավորություն (Դասեր 3-9) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 7+2	Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները և եղանակները. **ենթահասկացություններ.** գիծ. տարբեր տեսակի։ Գույն. հիմնական և բաղադրյալ, բաց, մուգ։ Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան. **ենթահասկացություն.** նկարել Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները. **ենթահասկացություն.** նկարչություն։	**Նկարի՛ր ուրախ և թախծոտ նկար։** Արտահայտի՛ր տրամադրություն **հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ** գույներով։ Օգտագործի՛ր **տարբեր տեսակի գծեր** (ուղիղ, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, ալիքաձև, բարակ և հաստ)։ **Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.** ● Ի՞նչ տրամադրություն ես փոխանցել։ ● Ի՞նչ **գույներով** ես **նկարել** (հիմնական/ բաղադրյալ, բաց/մուգ) տրամադրություն։ ● Ո՞ր գույնն է զվարճացրել քո նկարը։ ● Ո՞րն է ստեղծել թախծոտ տրամադրություն։ ● Ինչպիսի՞ **գծեր** (ուղիղ, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, ալիքաձև, բարակ և հաստ) ես օգտագործել։ ● Ո՞ր գիծն է ամենաուժեղը, ամենաթույլը, զվարճալին, չարաճճին, զայրացածը։ ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

2	**Թեմա.** Ո՞վ է մեզ նայում նկարից։ (Դասեր 10-19) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 10+2	Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները և եղանակները. **ենթահասկացություններ.** գիծ. տարբեր տեսակի։ Գույն. հիմնական և բաղադրյալ, բաց, մուգ։ Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան. **ենթահասկացություն.** նկարել։ Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները. **ենթահասկացություն.** նկարչություն։ Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանրերը. **ենթահասկացություն.** դիմանկար։	**Նկարի՛ր ինքնադիմանկար։** ● Քեզ բնորոշող նշանները, արտաքինը, սանրվածքը, հագուստը և հետաքրքրությունները փոխանցելու համար ընտրի՛ր և օգտագործի՛ր **տարբեր տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներ։** ● Մտահղացմանդ համապատասխան, որոշի՛ր, թե դիմանկարը երկայնակի կնկարես, թե լայնակի։ ● Մտածի՛ր, թե ինչ կնկարես ֆոնի վրա։ ● Աշխատանքիդ համար պատրաստի՛ր շրջանակ։ Շրջանակը գեղեցկացրո՛ւ տարբեր տեսակի գծերով։ **Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.** ● Ի՞նչ ես նկարել։ ● Ի՞նչ գծեր ես օգտագործել քո ինքնադիմանկարում քո արտաքին հատկանիշների փոխանցման համար։ ● Ի՞նչ գույներ ես օգտագործել (հիմնական/բաղադրյալ, բաց և մուգ) բնավորություն, տրամադրություն փոխանցելու համար։ ● Ո՞ր գույներն են զվարճացրել քո նկարը։ ● Ո՞րն է ստեղծել թախծոտ տրամադրություն։ ● Ի՞նչ մանրամասներ օգնեցին քեզ փոխանցել քո հետաքրքրությունները։ ● Ի՞նչ ես նկարել ֆոնին։ ● Ինչպիսի՞ շրջանակ ես պատրաստել նկարի համար։ ● Ի՞նչն է քեզ դուր գալիս քո աշխատանքում։ ● Ի՞նչը կփոխեիր։ ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

2 թեմատիկ բաժին. Արվեստը մեր շուրջը			
1	**Թեմա.** Ձմեռ պապի արվեստանոցը (Դասեր 20-26) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 10+2	Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները և եղանակները. **Ենթահասկացություններ.** Գիծ (տարբեր տեսակի), ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող) Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան. **Ենթահասկացություն.** նկարել, ապլիկացիա, կառուցքավորել, մոդելավորել, կերտել. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ **Ենթահասկացություն.** դեկորատիվ-կիրառական արվեստ	Պատրաստի՛ր ամանորյա զարդարանք՝ դրասանգ, տոնածառի խաղալիքներ և այլն։ Օգտագործի՛ր տարբեր նյութեր (կոներ, ճյուղեր, տերևներ, գունավոր թղթեր, ստվարաթուղթ, պլաստիլին, կավ կամ քանդակելու խմոր, ժապավեններ, ուլունքներ, կոճակներ) և տեխնիկա (նկարել, ապլիկացիա, կառուցքավորել, ծեփել)։ Աշխատանքին տո՛ւր երկրաչափական կամ բնության մեջ գոյություն ունեցող ձև։ Գեղեցկացրո՛ւ պատրաստվածքը տարբեր գծերով (ուղիղ, զիգզագ, ալիքաձև, ընդհատվող և այլն)։ Քո և քո ընկերների կողմից պատրաստված զարդարանքներով գեղեցկացրե՛ք դպրոցի միջավայրը՝ միջանցքը կամ դասասենյակը։ **Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.** ● Ի՞նչ ես պատրաստել։ ● Ի՞նչ նյութ և **տեխնիկա** ես օգտագործել զարդարանքը պատրաստելու համար։ ● Ի՞նչ ձևեր ես օգտագործել։ ● Ինչո՞վ ես գեղեցկացրել աշխատանքը։ ● Ինչի՞ համար ես օգտագործել գիծը։ ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

3 թեմատիկ բաժին Ես և շրջակա միջավայրը			
1	**Թեմա.** Բնությունը իմ շուրջը (Դասեր 27-33) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 6+2	Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները և եղանակները. գույն (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ), գիծ (տարբեր տեսակի), ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող) Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան. **ենթահասկացություն.** նկարել, խառը և ոչ ավանդական տեխնիկա, ապլիկացիա։ Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ **ենթահասկացություն.** դեկորատիվ-կիրառական արվեստի ժանրերը **ենթահասկացություն.** բնապատկեր։	Քեզ համար սիրելի **տեխնիկայով** ստեղծի՛ր **բնանկար։** Օգտագործի՛ր մտահղացմանը համապատասխան ձևեր (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող), գույներ (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ) և տարբեր տեսակի գծեր (ուղիղ, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, ալիքաձև, բարակ և հաստ) **Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.** ● Ի՞նչ ես պատրաստել։ ● Ի՞նչ նյութ և տեխնիկա ես օգտագործել բնանկարը պատրաստելու համար։ ● Ինչպե՞ս ես օգտագործել տարբեր տեսակ գծերը, ձևերը և գույները բնապատկերը փոխանցելու համար։ ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

2	**Թեմա.** Կենդանի բնություն (Դասեր 34-38) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 5+3	Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները և եղանակները. **ենթահասկացություններ.** **ձև** (բնության մեջ գոյություն ունեցող) Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան. **ենթահասկացություն.** նկարել, ծեփակերտել, ապլիկացիա, կառուցքավորել Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ **Ենթահասկացություն.** նկարչություն, քանդակագործություն Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանրեր. **Ենթահասկացություններ.** բնանկար, անիմալիստական ժանր։	Ստեղծի՛ր դիորամա. Կենդանիները և միջավայրը, որում նրանք ապրում են։ Կենդանիների փոքր **քանդակներ** ստեղծելու համար օգտագործի՛ր քո ընտրած **նյութը** (ստվարաթուղթ, թուղթ, պլաստիլին, կավ կամ քանդակելու խմոր) և **տեխնիկա** (կերտում, մոդելավորում)։ Կենդանու փոքրիկ քանդակի մեջ փոխանցի՛ր նրան բնորոշ **ձևը** (բնության մեջ գոյություն ունեցող)։ Դիորամայում կենդանիների համար համապատասխան միջավայր ստեղծելիս՝ օգտագործի՛ր երկրաչափական կամ բնության մեջ գոյություն ունեցած ձևեր։ Նյութ (ստվարաթուղթ, թուղթ, ներկեր), ապլիկացիայի և նկարչության **տեխնիկա։** **Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.** ● Ի՞նչ ես պատրաստել։ ● Ի՞նչ նյութով և **տեխնիկայով** ես ստեղծել շրջակա միջավայր (բնապատկեր) քո կենդանու համար։ ● Ինչպիսի՞ **ձևեր** ես օգտագործել կենդանիների **քանդակներում** և ինչպիսի՞՝ **բնապատկերում։** ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

Դասարան I

Թեմատիկ բաժին 1. Մարդիկ և արվեստը

Թեմա. Գծերի և գույների թագավորություն (Դասեր 3-9) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 7+2

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ (ընդհանրացումներ թեմայի շրջանակներում)

- Իմ գաղափարները, տպավորությունները, զգացմունքները, հույզերը կարող եմ արտահայտել և ուրիշների հետ կիսվել արվեստի տարբեր **բնագավառներում** կատարված ստեղծագործություններով:
- Իմ տպավորությունները, զգացմունքները, հույզերն արտահայտելու մեջ ինձ օգնում են **գեղարվեստական պատկերավորման միջոցները, եղանակները, նյութը և տեխնիկան:**

1. **Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները).**

Ենթահասկացություններ՝ միջոցներ:

Գիծ (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, բարակ և հաստ):

Գույն (հիմնական/բաղադրյալ, բաց/մուգ):

2. Նպատակային հասկացություն. կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան

Ենթահասկացություն. նկարել

3. Նպատակային հասկացություն. կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ

Ենթահասկացություն. նկարչություն

Հարցը. Աշխատության մեջ փոխանցել սեփական հույզերը, տպավորությունները, տրամադրություն:

Հանգուցային հարցեր.

- Ինչպե՞ս են արվեստագետները փոխանցում իրենց հույզերը, տպավորությունները, տրամադրությունը:
- Ինչպե՞ս փոխանցեմ իմ հույզերը, տրամադրությունը, տպավորությունները աշխատության մեջ:
- Ինչպե՞ս կարող եմ օգտագործել կերպարվեստի լեզուն՝ տրամադրությունս փոխանցելու համար:
- Ո՞ր նկարչական նյութը կօգնի ինձ ավելի լավ փոխանցել իմ տրամադրությունը:

Համալիր առաջադրանքի պայմանը.

Նկարի՛ր ուրախ և թախծոտ նկար:

Փոխանցի՛ր տրամադրություն **հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներով:**

Օգտագործի՛ր տարբեր տեսակի գծեր (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, բարակ և հաստ):

Նպատակային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ	**Գնահատման չափանիշներ (Որոշակի համալիր ակտիվության համապատասխանեցված)** Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
1. Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները ● Ասելիքը (պատմություն, զգացմունք, գաղափար, տպավորություն, տրամադրություն, դիտարկման արդյունքներ), գեղարվեստական մտահղացումը փոխանցելու համար մարդը կիրառում է արվեստի լեզուն, կամ կերպարվեստի տարրերը (գույն, գիծ, ձև) և սկզբունքները (օրինակ՝ ռիթմ, հիմնականի ընդգծում, հակադրություն և այլն)։ **2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան** ● Մարդիկ արվեստի գործ ստեղծելու համար օգտագործում են տարբեր նյութեր և տեխնիկա։ **3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ** ● Արվեստի բաժանումը տարբեր բնագավառների պայմանավորված է օգտագործված նյութով, տեխնիկայով, նպատակով։ ● Կերպարվեստի և կիրառական արվեստի յուրաքանչյուր բնագավառին բնորոշ է որևէ գեղարվեստական տարր։ ● Կերպարվեստի ստեղծագործությունները ստեղծվում են կերպարվեստի տարրերի և սկզբունքների հիման վրա, չնայած որ ցանկացած տարր ավելի կոնկրետ է յուրաքանչյուր բնագավառի համար։ **4. Կերպարվեստի ժանրերը** ● Արվեստը ժանրերի է բաժանվում՝ ըստ արտացոլված բովանդակության։	**Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.** ● Ի՞նչ ես նկարել։ ● Ի՞նչ տրամադրություն ես փոխանցել։ ● Ի՞նչ միջոցներ ես օգտագործել։ ● Ի՞նչ գույներով (հիմնական/բաղադրյալ, բաց/մուգ) ես նկարել տրամադրությունը։ ● Ո՞ր գույնն է զվարճացրել քո նկարը։ ● Ո՞րն է ստեղծել թախծոտ տրամադրություն։ ● Ինչպիսի՞ գծեր (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, բարակ և հաստ) ես օգտագործել։ ● Ո՞ր գիծն է ամենաուժեղը, ամենաթույլը, զվարճալին, չարաճճին, զայրացկոտը։ ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում

Քննարկվելիք քեյսեր համալիր առաջադրանքի իրականացման համար.

- Նկարիչը մեզ հետ զրուցում է նկարներով։
- Գույներն ու գծերը նկարչի խոսքերն են։
- Փորձե՞լ ես խոսել նկարչության լեզվով։
- Փորձե՞լ ես գծերով և գույներով նկարում տրամադրություն փոխանցել։

Դու նույնպես կսովորես նկարչության լեզուն, կսովորես տրամադրությունը փոխանցել գծերով և գույներով։

Ռեսուրսներ համալիր առաջադրանքների համար.

Նկարազարդումներ. Էելա Ցուցքիրիձե, Վասիլի Կանդինսկի, Խոան Միրո, Պաբլո Պիկասո, Ալեքսանդր Քոլդեր։

Հեռուստադպրոց, տեսադասեր.
https://www.youtube.com/watch?v=vNvVRqmFxJM&t=306s;
https://www.youtube.com/watch?v=CXZoEIVA5hs;

Երաժշտության ակտիվ հղումներ.

Յոհան Շտրաուսի «Տրիշ-տրաշ պոլկա» (1:11 րոպե).
https://www.youtube.com/watch?v=pu50e_S4qMk;

Դմիտրի Շոստակովիչ, «Մարշ» (0:47 րոպե).
https://www.youtube.com/watch?v=kT7oqohP_Nc;

դ. Շոստակովիչ, «Վալս-կատակ» (1:16 րոպե).
https://www.youtube.com/watch?v=rv26WKc21UA;

դ. Շոստակովիչ, «Վալս N2» (3:43 ր.).
https://www.youtube.com/watch?v=wjSGiUmis-A;

Արամ Խաչատրյան, «Դաշույններով պար» (2:35ր.).
https://www.youtube.com/watch?v=mUQHGpxrz-8;

Կամիլ Սեն-Սանս, «Կարապը» (3:06 րոպե).
https://www.youtube.com/watch?v=3qrKjywjo7Q;

Ջոակինո Ռոսսինի, «Վիլհելմ Թելլ», նախերգանքի վերջը (2:05 րոպե).
https://www.youtube.com/watch?v=YIbYCOiETx0;

Համալիր առաջադրանքի ըմբռնմանը միտված հարցեր.

- Որո՞նք են քո սիրելի գույները։
- Ինչպիսի՞ տրամադրություն են հաղորդում նրանք քեզ։
- Ո՞ր գույներով ես նկարի մեջ փոխանցում քո տրամադրությունը։
- Ինչպիսի՞ գծեր կօգնեն քեզ փոխանցել տրամադրությունը։

ՓՈՒԼ 2. ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՎՐԱ

Քայլ 1. (Դասեր 3,4)

3. Գծերի թագավորություն

Տարբեր տեսակի գծերի և նրանց բնույթի ծանոթացում

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները և եղանակները: Ենթահասկացություն. գիծ (տարբեր տեսակի)
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան: Ենթահասկացություն. նկարել
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները: Ենթահասկացություն. նկարչություն

Ռեսուրսներ. Դասագիրք. Գծերի նմուշներ, Լելա Ցուցքիրիձեի նկարը:

Հեռուստադպրոց՝ «Ինչ կարող է անել գիծը». https://www.youtube.com/watch?v=vNvVRqmFxJM&t=306s;

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Մարդիկ տարբեր բնավորություններ ունեն: Երբ ինչ-որ բանի համար ուրախանում ենք, ծիծաղում ենք: Երբ վիրավորված ենք կամ զայրացած, մենք խոժոռվում ենք: Երբ վախենում ենք, թաքնվում ենք...

Դուք գիտե՞ք, որ ցանկացած տրամադրություն կարող եք արտահայտել նկարով և նաև այնպես, որ շուրջը բոլորը կռահեն, թե ինչ եք զգում:

Նկարիչը մեզ հետ զրուցում է նկարներով: Գույներն ու գծերը նկարչի խոսքերն են:

Դուք նույնպես կսովորեք նկարչության լեզուն՝ գծերով ու գույներով տրամադրություն փոխանցելը:

Նկարելը սկսվում է գիծ տանելով: Նկարը գծերի թագավորություն է: Պարզվում է՝ գիծն էլ ունի բնավորություն: Տեսե՛ք, թե ինչքան բան կարելի է փոխանցել գծով:

Ակտիվություն 1. Նկարազարդման դիտարկում.

Դիտարկի՛ր նկարը (Լելա Ցուցքիրիձեի նկարը):

- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում:

Պատասխան. գալարագիծ, ուղիղ, ալիքաձև, բեկյալ, ընդհատվող:

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, գծեր նկարել (վարժություն).

Անհրաժեշտ նյութ. նկարչության տետր, հասարակ մատիտ:

Տետրիդ մեջ արտագծի՛ր գծերը:

* Ուսուցիչը խնդրում է աշակերտներին նայել յուրաքանչյուր գծին և օդում մատով նկարել դրանք:

Միաժամանակ ուսուցիչը աշակերտների համար կկարդա այս գծերի անունները:

Այնուհետև նա հերթով անվանում է գծի անունը և նորից խնդրում, որ մատներով օդում գծեն զիգզագ, ընդհատվող, ոլորուն, ուղիղ, կոր գծեր:

Այնուհետև երեխաները տետրի մեջ արտանկարում են դասագրքում տրված գծերի նմուշները:

** Տարբերակված ուսուցման նպատակով կարելի է այս ակտիվությունը բարդացնել կամ պարզեցնել՝ փոփոխելով գծերի քանակը:

Ակտիվություն 3. Մեկնաբանություն, գծերի բնույթի ճանաչում.

Գտի՛ր գծերը.

զայրացած, չարաճճի, հանգիստ, սեթևեթող...

Ակտիվություն 4. Գործնական աշխատանք, գծեր նկարելը (վարժություն).

Անհրաժեշտ նյութ. նկարչության տետր, հասարակ մատիտ:

Նկարի՛ր տարբեր բնույթի գծեր

- Ինչպիսի՞ գծեր կնկարես, երբ զայրանում ես:
- Ինչպիսի՞ գծեր կնկարես, երբ ուրախ ես:

4. Արվեստանոց

Գծերը դիտարկել, տարբեր բնավորության գծեր նկարել

Ակտիվություն 1. Մեկնաբանություն, գործնական աշխատանք, նկարել (վարժություն).

Անհրաժեշտ նյութ. նկարչության տետր, հասարակ մատիտ:

Գտի՛ր գիծը և նկարի՛ր այն.

- ալիքաձև,
- ուղիղ,
- ընդհատվող,
- ոլորուն,
- զիգզագ,
- կոր:

Մտածի՛ր.

- Ինչպիսի՞ բնավորություն ունի ընդհատվող գիծը:
- Ինչպիսի՞ բնավորություն ունի ալիքաձև գիծը:
- Ո՞րն է ավելի նուրբ:

*Տարբերակված ուսուցման նպատակով կարելի է այս ակտիվությունը բարդացնել կամ պարզեցնել՝ փոփոխելով գծերի քանակը:

Ակտիվություն 2. Մեկնաբանություն.

Դիտարկի՛ր նկարը: Մտածի՛ր և պատմի՛ր համառոտ պատմություն գծի արկածի մասին. Ի՞նչ է պատահել գծին:

Ենթադրյալ պատասխանը. Գիծը դեռ ուղիղ է, կարծես քնած է, հետո արթնացավ, ձգվեց, հետո ծռմռվեց, սթափվեց, ինչ որ բանից ուրախացավ, սկսեց պարել, հետո հոգնեց, խաղաղվեց, պառկեց և նորից քնեց ...



Ակտիվություն 3. Գործնական աշխատանք. նկարել (վարժություն).
Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթ, գունավոր մատիտներ կամ նշիչներ:

Նկարի՛ր քո պատկերացրած գծերի թագավորությունը:
Ինչպիսի՞ գծեր են ապրում այս թագավորությունում:
Մտածի՛ր քո երևակայած գծերը:

- Ինչպիսի՞ն է չարաճճի գիծը:
- Ինչպիսի՞ն է ծույլ գիծը:
- Գծերին անուննե՛ր տուր:

Ակտիվություն 4. Լսածի ըմբռնում, գործնական աշխատանք, նկարել (վարժություն).
Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ

* Այս ակտիվությունը ներառված չէ Աշակերտի գրքի մեջ՝ ընթերցանության տեքստի մեծ չափի պատճառով: Ուսուցիչը տեքստը աշակերտների համար պետք է կարդա դեռ կապակցած, ամբողջությամբ, իսկ հետո նորից՝ դադարներով (յուրաքանչյուր նախադասությունը կարդալուց հետո աշակերտներին ժամանակ կտրվի (10-15 վայրկյան), որպեսզի գծերով նկարեն ունկնդրածի բովանդակությունը):

**Տարբերակված ուսուցման նպատակով հնարավոր է բարդացնել կամ պարզեցնել այս ակտիվությունը. աշակերտը կարող է նկարել ոչ թե բոլոր, այլ միայն 2-3 դրվագները կամ հարստացնել նկարը ավելի շատ մանրամասներով:

«Գիծը մի կետ է, որը գնացել է զբոսանքի», – ասել է գերմանացի նկարիչ Պաուլ Կլեեն:
Ինչպե՞ս եք հասկանում այս նախադասությունը:

Կետի արկածները

Մի անգամ կետը գնաց զբոսնելու:
Սկզբում նա բարձրացավ սարը:
Հետո նա գլորվեց սարից:
Ցատկել-ցատկոտելով հասավ գետը:
Նա ցատկեց ալիքների մեջ լողացող տերևի վրա:
Տերևից ցատկեց քարի վրա:
Քարից ցատկեց ափ:
Ոլորուն արահետով մտավ անտառ:
Մերթ մի ծառի շուրջը պտտվեց, մերթ՝ մյուսի...
Նա մոտեցավ փոքրիկ խրճիթին ու թակեց, բայց ոչ ոք չպատասխանեց:
Կետը նայեց խրճիթի ներսը:
Նա տեսավ սեղանի վրա մաքուր թղթի թերթիկ, ցատկեց վրան ու նկարեց իր արկածը:

- Ի՞նչ նկարեց կետը:
- Դու ևս նկարի՛ր կետի արկածները:
- Ի՞նչ գծեր կօգտագործես կետի ճամփորդությունը նկարելու համար:

Քայլի ամփոփիչ հարցեր.

Թվարկե՛ք, թե ինչպիսի գծերի եք ծանոթացել։

Ինչպիսի՞ն է յուրաքանչյուրի բնավորությունը։

Հնարավո՞ր է տողերով փոխանցել սեփական տրամադրությունը կամ պատմությունը։

Քայլ 2. (Դաս 5)

5. Նկարում ենք երաժշտություն

Ծանոթանալ գծերի հատկանիշներին, կապել դրանք երաժշտության հետ

Նպատակային հասկացություն/հասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները։ **Ենթահասկացություն**. գիծ(տարբեր տեսակ)։
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել։
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։

Ռեսուրսներ. Դասագիրք. Վասիլի Կանդինսկու և Ժոան Միրոյի նկարների նկարազարդումներ, երաժշտության ակտիվ հղումները. տե՛ս՝ Ակտիվություն 2։

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Մի անգամ նկարիչ Վասիլի Կանդինսկին երաժշտություն էր լսում և նրա մոտ այնպիսի զգացողություն առաջացավ, կարծես նրա դեմ գծեր էին նկարվում։ Ըստ նրա՝ կետը հանգստի վիճակ է, իսկ գիծը՝ շարժում։

Վասիլի Կանդինսկին միակ նկարիչը չէր, ով նկարը «լսում էր» երաժշտության նման կամ երաժշտությունը տեղափոխում էր նկարչության մեջ։

Նկարչությունն ու երաժշտությունը շատ ընդհանրություններ ունեն։ Իսկապես, երբ երաժշտություն ենք լսում, մեղեդին երբեմն հոսում է դանդաղ, ծույլ, հաստ գծի պես, երբեմն զիգզագի պես անհանգիստ ցատկում, մերթ՝ ալիքաձև ոլորվում։ Երաժշտության մեջ հնչում է հիմնական մեղեդին, շուրջը հայտնվում են փոքր-փոքր մոտիվներ։

Եկեք փորձարկենք այս գաղափարը՝ լսե՛ք գծերին և նկարե՛ք մեղեդի։

Ակտիվություն 1. Նկարների դիտարկում, մեկնաբանում.

Դիտարկի՛ր Վասիլի Կանդինսկու նկարները.

- Գտի՛ր գլխավոր գիծը։
- Աչքով հետևի՛ր գծին։
- Պատկերացրո՛ւ, թե ինչպիսի ձայն կունենա։ Դու նույնիսկ կարող ես ձայնակցել։
- Ո՞ր գիծը կունենա ավելի գեղեցիկ մեղեդի։
- Ո՞ր գիծն է ամենալուռը։

Ենթադրյալ պատասխան. հաստ գծերն ունեն բամբ, ուժեղ, իսկ բարակ գծերը՝ ավելի լուռ, ծվծվան ձայն։

Ակտիվություն 2. Նկարների դիտարկում, մեկնաբանում.

Դիտարկի՛ր Խոան Միրոյի նկարները.

- Ինչպիսի՞ երաժշտություն կսազի նրանց:
- Արա՞գ, թե՞ դանդաղ:
- Բարձրաձա՞յն, թե՞ հանգիստ:
- Հոսո՞ւն, թե՞ ցատկոտող:

(Խոան Միրոյի աշխատության դետալ).

Ակտիվություն 3. Լսածն ըմբռնել, նկարել (միջանկյալ).

Անհրաժեշտ նյութեր. նկարչության թերթ, գունավոր մատիտներ կամ նշիչներ:

Նկարի՛ր երաժշտություն.

- Լսի՛ր մեղեդին:
- Ձեռքերդ շարժի՛ր մեղեդուն համընթաց:
- Ինչպիսի՞ գծեր են նկարվել օդում:
- Թղթի վրա նկարի՛ր այդ գծերը:

*Ակտիվության վրա աշխատելուց առաջ, ցանկալի է, որ ուսուցիչն աշակերտներին ցույց տա տեսանյութ գրաֆիկական երաժշտագրամով, օրինակ՝ Յոհան Շտրաուսի «Տրիշ-տրաշ պոլկա» (1:11 րոպե).

https://www.youtube.com/watch?v=pu50e_S4qMk;

Աշակերտները չպետք է կազմեն իրենց լսած ստեղծագործության երաժշտագրամ: Այս նմուշի նպատակն է, որ աշակերտները տեսնեն կապը մեղեդու և գծի «ընթացքի, շարժման» միջև:

«Նկարելու» երաժշտության առաջարկվող ակտիվ հղումներ (ուսուցչի/աշակերտի ընտրությամբ).

Դմիտրի Շոստակովիչ, «Մարշ» (0:47 րոպե).

https://www.youtube.com/watch?v=kT7oqohP_Nc;

դ. Շոստակովիչ, «Վալս-կատակ» (1:16 րոպե).

https://www.youtube.com/watch?v=rv26WKc21UA ;

դ. Շոստակովիչ, «Վալս N2» (3:43 ր.).

https://www.youtube.com/watch?v=wjSGiUmis-A;

Արամ Խաչատրյան, «Դաշույններով պար» (2:35ր.).

https://www.youtube.com/watch?v=mUQHGpxrz-8;

Կամիլ Սեն-Սանս, «Կարապը» (3:06 րոպե).

https://www.youtube.com/watch?v=3qrKjywjo7Q;

Ջոակինո Ռոսսինի, «Վիլհելմ Թելլ», նախերգանքի վերջը (2:05 րոպե).

https://www.youtube.com/watch?v=YIbYCOiETx0;

Եկեք լսենք երկու երաժշտական ստեղծագործություն և համեմատենք դրանք։
Հետևե՛ք մեղեդուն։ Օդում ձեռքերով նկարե՛ք, թե ինչ գծեր եք պատկերացնում այն լսելիս։

Կամիլ Սեն-Սանս, «Կարապը» (3:06 բոպե).

- Եթե կարողանայիր նկարել այս մեղեդին, ի՞նչ գծերով կնկարեիր այն։

Պատասխան. Մեղեդին հոսում է ալիքաձև գծի պես։
Օդում ձեռքերով նկարե՛ք, թե ինչպիսի գծեր պատկերացրիք այս մեղեդին լսելիս։

Դմիտրի Շոստակովիչի երթը (0:47).

- Ինչպե՞ս կնկարեիք Շոստակովիչի մեղեդին։

Պատասխան. Շոստակովիչի երթը նման է կետերի, ընդհատվող գծերի։
Օդում ձեռքերով նկարե՛ք, թե ինչպիսի գծեր պատկերացրիք այս մեղեդին լսելիս։
Ցո՛ւյց տուր նկարը ընկերներիդ և պատմի՛ր նրանց, թե ինչպիսի մեղեդի ես նկարել։

- Արա՞գ, թե՞ դանդաղ։
- Տխո՞ւր, թե՞ ուրախ։
- Ինչպիսի՞ գծեր համապատասխանեցին այս մեղեդուն։

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ իմացար գծերի մասին։
- Ի՞նչ հայտնաբերեցիր։

Քայլ 3. (Դաս 6)

6. Նկարում ենք գունավոր գծերով

Գծեր նկարել տարբեր նկարչական նյութերով

Նպատակային հասկացություն/հասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակ)։
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել։
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։

Ռեսուրսներ. դասագիրք, Պաբլո Պիկասոյի կողմից մատիտով և պաստելով կատարված նկարներ։

Գաղափարներ ակտիվության համար.

Մոտիվացիոն զրույց.

Գիծը նկարչության հիմնական գործիքներից մեկն է։ Նկարիչները գծերով արտահայտում են իրենց տրամադրությունը, պատմում են պատմություններ, ստեղծում գեղեցիկ նկարներ։

Գծեր կարելի է տանել տարբեր նյութերով՝ մատիտով, պաստելով, նշիչով և ներկոտ վրձնով։ Որոշ նյութերով գծերը հստակ են ստացվում, որոշներով՝ գունատ։ Չէ՞ որ պետք է իմանալ, թե դրանցից որն է տանում բարակ գիծ, և որը՝ հաստ։ Եթե դու դա իմանաս, կկարողանաս նկարել շատ գեղեցիկ նկարներ։

Ակտիվություն 1. Տարբեր նկարչական նյութերի փորձարկում.

Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթեր, տարբեր նկարչական նյութեր (մատիտներ, պաստելներ,

կավիճ, նշիչներ, ներկ)։

* Պարտադիր չէ օգտագործել այստեղ թվարկված բոլոր նկարչական նյութերը։ Բավական է, երեխաները ցանկացած երկու, իրենց համար հասանելի նյութով տարած գծերը համեմատեն իրար հետ։

Փորձի՛ր, թե ինչ կարող են անել նշիչները, մատիտները, պաստելը, կավիճը, վրձինը։

Թղթի վրա գծի՛ր տարբեր հաստության գծեր՝ սկզբում մատիտով, ապա՝ պաստելով, նշիչով, մատիտով, ներկոտ վրձնով։

Համեմատի՛ր նմուշները. ի՞նչ ստացվեց քեզ մոտ։

- Ո՞րն է տարբերությունը մատիտով, պաստելով և ներկոտ վրձնով տարած գծերի միջև։
- Ո՞րն է ավելի հստակ։
- Ո՞րն է ավելի նուրբ։
- Ո՞ր նյութով տարած գիծն է ստացվել ավելի հաստ/բարակ, բաց/մուգ։
- Ո՞րը քեզ պիտանի կլինի ընդարձակ տեղեր գունավորելու համար, իսկ ո՞րն է փոքր դետալներ նկարելու համար։

Պատասխան.

- Մատիտով տարած գծերը բարակ են։
- Պաստելով տարած գծերը մատիտի համեմատ հաստ են և հստակ։
- Նշիչի գիծը հստակ և հավասար գույն ունի։
- Վրձնով տարված գծերը ծուռումուռ են։ Եթե վրձինը սեղմես, գիծը կհաստանա։

Ակտիվություն 2. Նկարազարդումների դիտարկում

Դիտարկի՛ր Պաբլո Պիկասոյի նկարները։

- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում։
- Գտի՛ր գիծը՝ բարակ, հաստ, ոլորուն, զիգզագ։
- Ո՞ր գիծն է բաց, ո՞րը՝ մուգ։

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, նկարել (վարժություն).

Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ։

- Ընտրի՛ր նկարչական նյութը։
- Գունավոր գծերով նկարի՛ր զվարճալի նկար։

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ իմացար նորը նկարչական նյութերի մասին։
- Ինչպիսի՞ գիծ է նկարվում վրձնով, մարկերո՞վ, մատիտո՞վ, պաստելո՞վ։

Քայլ 4. (Դաս 7)

7. Երեք հրաշագործներ

Գույների անիվ, հիմնական գույներ

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակ), գույն (հիմնական)։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել։

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։

Ռեսուրսներ. դասագիրք, Ալեքսանդր Կալդերի նկարները։

Գաղափարներ ակտիվության համար.

Մոտիվացիոն զրույց.

Եկեք մի փոքր պատմություն լսենք գույների մասին։

Գիտնականները դիտարկել են ծիածանը և նրա գույները դասավորել շրջանագծի վրա։ Այս շրջանակն անվանել են գույների անիվ։ Ինչ եք կարծում՝ ինչո՞ւ։

Նայի՛ր գույների անիվին։

- Ի՞նչ գույներ ես տեսնում։
- Քանի՞ գույն կա գույների անիվի վրա։

Այս վեց գույներից երեքը՝ կարմիրը, դեղինը և կապույտը, հիմնականն են։

Գիտե՞ք, թե ինչու են այս գույները կոչվում հիմնական։

Փորձե՞լ եք գույները խառնել իրար։ Կարմիր, դեղին ու կապույտ չես կարող ստանալ ոչ մի այլ գույն խառնելով։ Այս երեք գույները՝ կարմիրը, դեղինը և կապույտը, խառնելով կարելի է ստանալ մնացած բոլոր գույները։

Հավանաբար նկատել եք, որ գույների անիվը չի ներառում սպիտակն ու սևը։ Այս գույները գունավոր չեն։ Հետևաբար, երբ կխոսենք գույների մասին, չենք շոշափի սպիտակն ու սևը։

Ակտիվություն 1. Գույների դիտարկում.

Ո՞ր գույներն են տեղ գտել կարմիր, դեղին և կապույտ գույների միջև։

Պատասխան. նարնջագույն, կանաչ, մանուշակագույն։

Ակտիվություն 2. Նկարազարդման դիտարկում.

Ուշադիր նայի՛ր նկարը (Ալեքսանդր Կալդերի նկարը)։

- Ի՞նչ գույներ ես տեսնում։
- Ի՞նչ տրամադրություն է այս նկարում՝ ուրա՞խ, թե՞ թախծոտ։
- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում։
- Գտի՛ր՝ օձ, թիթեռ, թռչուն։

Լրացուցիչ հարցեր տարբերակված ուսուցման համար.

- Հաշվի՛ր, թե քանի թռչուն ես տեսնում։ (4)
- Քանի՞ հատ օձ է նկարած։ (3)
- Ինչպիսի՞ գծերով են նկարած օձերը։ (ալիքաձև)
- Քանի՞ թիթեռ ես տեսնում։ (2)
- Ի՞նչ գծերով է նկարած մեծ թիթեռը։ (պարուրաձև, ոլորուն)

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, հիմնական գույներով նկարել (միջանկյալ).

Նկարի՛ր նկար երեք հիմնական գույներով և տարբեր տեսակի գծերով:

Ինչպիսի՞ տրամադրություն է քո նկարում:

Ի՞նչն է ստեղծում այս տրամադրությունը:

Ցո՛ւյց տուր նկարը քո ընկերներին և պատմի՛ր.

- Ի՞նչ ես նկարել:
- Ի՞նչ ես նկարել գծով:
- Ի՞նչ ես նկարել գույնով:
- Ի՞նչ գծեր ես օգտագործել:
- Ո՞ր գույնն ես առավել հաճախ օգտագործել:
- Ի՞նչ տրամադրություն է քո նկարում:

Ակտիվություն 4. Գործնական աշխատանք, նկարել (վարժություն).

* Այս ակտիվությունը ներառված չէ Աշակերտի գրքում:

Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ:

Ընտրի՛ր և նկարի՛ր Ալեքսանդր Կալդերի նկարներից որևէ մեկը:

- Ի՞նչ նյութով կնկարես գծերը:
- Ինչո՞վ կգունավորես նկարը:

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Գույների մասին ի՞նչ իմացար նորը:
- Ինչո՞ւ են դեղին, կարմիր և կապույտ գույները կոչվում հիմնական գույներ:

Քայլ 5. (Դաս 8)

8. Բաղադրյալ գույներ

Ծանոթանալ բաղադրյալ գույներին

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գույն (հիմնական և բաղադրյալ):

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել:

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:

Ռեսուրսներ. դասագիրք

Հեռուստադպրոց, «Գույն և ձև». https://www.youtube.com/watch?v=CXZoEIVA5hs;

Գաղափարներ ակտիվության համար.

Ակտիվություն 1. Դիտարկում, դատողություն

Նայի՛ր ծիածանին.

- Ի՞նչ գույներ ես տեսնում:
- Որո՞նք են հիմնական գույները:

Պատասխան. Գույների անիվի վրա կա վեց գույն: Դրանցից հիմնական գույներն են կարմիրը,

դեղինը, կապույտը: Այս գույները հիմնական են կոչվում, քանի որ դրանք չես կարող ստանալ ուրիշ գույներ խառնելով, իսկ դրանք (դրանցից երկուսը) խառնելով կարելի է այլ գույներ ստանալ:

Ակտիվություն 2. Դիտարկում, դատողություն

Ուշադիր դիտի՛ր նմուշը:

- Ո՞ր գույները խառնելով են ստացվում բաղադրյալ գույները:
- Ինչ ես կարծում, դրանք ինչո՞ւ են կոչվում բաղադրյալ գույներ:

Ակտիվություն 3. Փորձ

Անհրաժեշտ նյութ. գուաշի կամ ջրաներկի կարմիր, դեղին և կապույտ ներկեր, վրձին, մաքուր ջրով կիսով չափ լցված երեք հատ թափանցիկ անոթ, ջրով անոթ՝ վրձինը լվանալու համար:

Դիտարկի՛ր նմուշը: Ենթադրությո՛ւն արա.

Ի՞նչ կլինի, եթե մաքուր ջրով անոթի մեջ կաթեցնես դեղին և կարմիր ներկեր:

Պատասխան. Կստանանք մանուշակագույն:

Ի՞նչ գույնի կդառնա ջուրը, եթե անոթի մեջ դեղին և կարմիր ներկեր կաթեցնես:

Պատասխան. կստանանք նարնջագույն:

Ի՞նչ գույն կստանաս, եթե անոթի մեջ կապույտ և դեղին ներկեր կաթեցնես:

Պատասխան. Կստանանք կանաչ գույն:



Ստուգի՛ր քո ենթադրությունը՝ կատարելով փորձ.

Ջրով անոթների մեջ լցրո՛ւ հավասար քանակությամբ.

1. կարմիր և կապույտ ներկ,
2. դեղին և կարմիր ներկ,
3. կապույտ և դեղին ներկ:

Ի՞նչ տեղի ունեցավ: Ի՞նչ գույն ստացավ ջուրը:

*Եթե առաջարկվող նյութը բացակայում է, ապա այս գործողությունը կարող է իրականացվել գունավոր մատիտներով:

- Բաղադրյալ գույներ ստանալու համար օգտագործի՛ր միայն հիմնական գույնի մատիտներ՝ կարմիր, դեղին և կապույտ:
- Նկարչության թերթի մի փոքրիկ հատված գունավորի՛ր մի գույնի մատիտով: Այնուհետև վրայից քսի՛ր մեկ այլ գույնի մատիտ:
- Ի՞նչ արդյունք ստացար:

Ակտիվություն 4. Դիտարկում, խնդրի լուծում
Նայի՛ր գույների հավասարմանը և գտի՛ր սխալը.

Պատասխան.
Սխալն է՝ 2. մանուշակագույն + կանաչ, 4. կարմիր + նարնջագույն, 5. դեղին + կապույտ:

Ակտիվություն 5. Գույներով նկարել (վարժություն)
Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթ, սև նշիչ կամ մատիտ, կարմիր, դեղին և կապույտ գույնի մատիտներ:
Սև մատիտով կամ նշիչով փուչիկներ նկարի՛ր այնպես, որ նրանք հատեն իրար:

Գունավորի՛ր փուչիկները հիմնական գույնի գունավոր մատիտներով:
Ի՞նչ գույներ ես ստացել հատման տեղերում:

* Աշակերտները դիտում են հեռուստադասը վերը նշված հղումով և քննարկում իրենց տեսածը:

Քայլերի ամփոփիչ հարցեր.
Ի՞նչ իմացանք նորը գույների մասին:
Ինչո՞ւ են նարնջագույնը, կանաչը և մանուշակագույնը կոչվում բաղադրյալ գույներ:
Ի՞նչ գույներ խառնելով են ստացվում բաղադրյալ գույները:

Քայլ 6. (Դաս 9)
9. Գույների ձայնը
Գույները և երաժշտությունը
Նպատակային հասկացություններ/ենթահասկացություններ.
1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակի), գույն. հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ:

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել:

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:

Ռեսուրսներ. դասագիրք, Վասիլի Կանդինսկու ստեղծագործությունները:

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Նկարիչ Վասիլի Կանդինսկին համարում էր, որ նկարը կարելի է «լսել», ինչպես երաժշտությունը: Երբ Կանդինսկին նայում էր գույներին, լսում էր նրանց ձայները: Նա ասում էր, որ ամեն գույն ունի յուրահատուկ ձայն. որոշները լուռ են, որոշները բարձրաձայն, մի քանիսի ձայնը բարակ է, մի քանիսինը՝ բամբ:

Ինչպես երաժշտությունն, այնպես էլ նկարչությունը կարող է փոխանցել մարդկային զգացմունքները:

Նկարչության մեջ գծերն ու գույները կարող են տխուր կամ ուրախ տրամադրություն ստեղծել:

Եկեք փորձենք, գուցե մենք նույնպես լսենք գույների ձայները:

Ակտիվություն 1. Նկարազարդման դիտարկում, դատողություն

Դիտարկի՛ր Վասիլի Կանդինսկու նկարները.

- Ո՞ր գույնն է շշնջում:
- Ո՞ր գույնն է ճչում:
- Ո՞ր գույնն ունի ամենաբամբ ձայնը:
- Ի՞նչ ձայն ունեն բաց գույները:
- Ի՞նչ ձայն ունեն մուգ գույները:
- Ի՞նչ են ավելացրել գծերը նկարներին:

* Ենթադրաբար, ելնելով սեփական տպավորությունից՝ աշակերտներն այս հարցերին տարբեր պատասխաններ կունենան:

Ակտիվություն 2. Նկարազարդման դիտարկում, դատողություն

Ինչպիսի՞ն կլիներ նկարն առանց գծերի: (ոչ գրավիչ)

Ի՞նչ են ավելացրել գույները գծերին: (Տրամադրություն: Նկարում գծերը վառ են: Գույները նկարին ավելացրել են քնքշություն, հանգստություն)

Ինչպիսի՞ ձայներ են լսվում այս նկարում:

Ակտիվություն 3. Վարժություն

Նկարի՛ր նկար՝ աղաղակող կամ լուռ, բաց կամ մուգ գույներով:

Նայի՛ր քո նկարին: Ո՞ր գույնն է ճչում՝ բա՞ց գույնը, թե՞ մուգը:

Փուլ III. Համալիր առաջադրանքի կատարում և ներկայացում (ի՞նչ սովորեցի):

Նկարի՛ր զվարճալի կամ թախծոտ նկար:

Փոխանցի՛ր տրամադրություն **հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներով:**

Օգտագործի՛ր տարբեր տեսակի գծեր (ուղիղ, բեկյալ, զիգզագաձև, կոր, ոլորուն, ալիքաձև, բարակ կամ հաստ):

Ցո՛ւյց տուր աշխատանքդ ընկերներիդ և հարցրո՛ւ նրանց, թե ինչ զգացողություններ է առաջացրել աշխատանքը նրանց մոտ:

Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.

- Ի՞նչ տրամադրություն ես փոխանցել:
- Ի՞նչ գույներով (հիմնական/բաղադրյալ, բաց/մուգ) ես նկարել տրամադրությունը:
- Ո՞ր գույնն է զվարճացրել քո նկարը: Ո՞րն է ստեղծել թախծոտ տրամադրություն:
- Ինչպիսի՞ գծեր (բեկյալ, զիգզագաձև, կոր, ոլորուն, ալիքաձև, բարակ կամ հաստ) ես օգտագործել:
- Ո՞ր գիծն է ամենաուժեղը, ամենաթույլը, զվարճալին, չարաճճին, բարկացկոտը:
- Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում:
- Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր առաջադրանքի վրա աշխատանքը:

*** Ցուցում 1.**

Գունավորի՛ր թերթիկը տարբեր գույների ներկերով:

Երբ ներկը չորանա, վրձնով կամ մարկերով վրայից նկարի՛ր մի քանի տեսակի գիծ:

*** Ցուցում 2.**

Ցանկալի է, որ աշխատանքը սկսելուց առաջ ուսուցիչն աշակերտներին առաջարկի դիտարկել նկարազարդումները և արտահայտել իրենց կարծիքը իրենց հասակակիցների ստեղծագործություններում արտացոլված տրամադրության մասին. ո՞ր աշխատանքն է արտահայտում տխրություն կամ ուրախություն: Ինչո՞ւ են այդպես համարում:

Լրացուցիչ ռեսուրս.

Առաջին դասարանցիների աշխատանքներ (ԱՄՆ Մասաչուսեթսի Բերոուզ և Ջոշուա Իտոնների տարրական դպրոց, ուսուցիչ Բեթ Հարլի).

http://artwithmrshurley.blogspot.com/2011/10/lines-and-shapes-and-colorsoh-my.html;

Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման խորագրեր.

1. Ապրե՛ս։

Դու լավ ես հասկացել առաջադրանքի պայմանը։

Նկարում օգտագործված տարբեր տեսակի գծերը, հիմնական և բաղադրված, բաց և մուգ գույները ճշգրիտ են փոխանցում քո տրամադրությունը։

Դու լավ գիտես, թե ինչպես կարող ես ստանալ բաղադրյալ գույներ՝ խառնելով հիմնական գույները։

Դու արդեն կարող ես աշխատանքի մասին խոսել՝ օգտագործելով համապատասխան տերմիններ։

2. Լավ աշխատանք է։

Քո նկարը փոխանցում է քո տրամադրությունը, բայց առաջադրանքի պայմանը նախատեսում էր շատ տարբեր տեսակի գծերի օգտագործում։ Ինչպես նաև, բացի նշված գույներից, կարող էիր ինքդ նույնպես փորձել ստանալ բաղադրյալ գույներ՝ հիմնական գույներն իրար խառնելով։

Դու արդեն կարող ես խոսել ստեղծագործության մասին։ Խոսելիս նախընտրելի է օգտագործել համապատասխան բառեր։

Թեմա 1. Համալիր առաջադրանքի գնահատում՝ ըստ SOLO (ՈՒԴԱԿ) տաքսոնոմիայի

Դասարան I **Թեմատիկ բաժին 1.** Մարդիկ և արվեստը **Թեմա.** Գծերի և գույների թագավորություն Աշակերտի անուն, ազգանուն. ---------- Ամիս, ամսաթիվ, տարեթիվ. ---------- **Նպատակային հասկացություն 1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)** Ենթահասկացություններ. գիծ (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, բարակ և հաստ)։ Գույն (հիմնական/բաղադրյալ, բաց/մուգ)։ **Նպատակային հասկացություն 2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա** Ենթահասկացություն. նկարել **Նպատակային հասկացություն 3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները** Ենթահասկացություն. նկարչություն
Համալիր առաջադրանքի պայմանը. Նկարի՛ր ուրախ և թախծոտ նկար։ Փոխանցի՛ր տրամադրություն **հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներով։** Օգտագործի՛ր **տարբեր տեսակի գծեր** (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, բարակ և հաստ)։

SOLO տաքսոնոմիայի մակարդակ. վերացական Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Ենթադրություններ է արտահայտում: Ընդհանրացնում է գիտելիքը ինչպես տվյալ առարկայի կտրվածքում, այնպես էլ այլ ոլորտի հետ հարաբերության մեջ: Ունի նմանատիպ օրինակների հետ համեմատելու, վերլուծելու և գնահատելու ունակություն: Կարող է հարցը/երևույթը կապել անձնական փորձի հետ:	Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ նկարում գիտակցված և նպատակաուղղված օգտագործում է բազմաթիվ տարբեր տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներ: Դրանց համադրությամբ փոխանցում է ուրախ կամ թախծոտ տրամադրություն: Ըստ անհրաժեշտության՝ մտածված խառնում է հիմնական գույները՝ բաղադրյալ գույներ ստանալու համար: Օգտագործում է նյութին համապատասխան տեխնիկա՝ բարակ/հաստ գծեր ստանալու համար: Շնորհանդեսի ժամանակ նա ընդարձակ խոսում է ստեղծագործության ստեղծման փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է տարբեր տերմիններ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. հարաբերական Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է նրա մի քանի ասպեկտների միջև պատճառահետևանքային կապերը: Կարող է արտահայտել ենթադրություն, համեմատել, վերլուծել, գնահատել, օգտագործել տեսական գիտելիքը պրակտիկայում:	Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ նկարում գիտակցված օգտագործում է բազմաթիվ տարբեր տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներ: Գիտակցում է, թե ինչպիսի գծերի և գույների համադրությունն է համապատասխանում նկարում ուրախ կամ թախծոտ տրամադրությանը: Կարող է ստանալ բաղադրյալ գույն՝ երկու հիմնական գույներ խառնելով: Օգտագործում է նյութին համապատասխան տեխնիկա՝ բարակ/հաստ գծեր ստանալու համար: Շնորհանդեսի ժամանակ նա խոսում է աշխատանքի հիմնական փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է մի քանի տերմիններ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. բազմակառուցվածքային Աշակերտն ունի պատկերացում հարցի/երևույթի մի քանի ասպեկտների մասին առանձին-առանձին, չի հասկանում նրանց միջև կապը: Կարող է նկարագրել, թվարկել, տեսակավորել, համադրել, մեթոդներ օգտագործել, իրականացնել ընթացակարգեր և այլն:	Օգտագործում է մի քանի տեսակի գիծ, հիմնական և բաղադրյալ գույներ, սակայն չի ըմբռնում դրանց պատկերավորման հնարավորությունները: Բաղադրյալ գույները ստանում է պատահական գույներ խառնելով: Կիրառած գույների և գծերի կապը տրամադրության հետ պատահական է: Շնորհանդեսի ժամանակ նա ամբողջությամբ նկարագրում է իր աշխատանքը: Օգտագործում է մի քանի տերմիններ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. ունիկառուցվածքային Աշակերտը քննարկում է հարցի/երևույթի միայն մեկ ասպեկտ: Տեսնում է պարզ, բացահայտ/հստակ կապերը: Հասկանում է միայն մի քանի տերմինի նշանակություն: Կարող է գիտելիքը բանավոր փոխանցել (հիշել), կատարել պարզ ցուցումներ, շրջասել, ճանաչել, անվանել կամ թվարկել:	Հազվադեպ է օգտագործում երկու տեսակի գծեր, տարբեր գույներ, բայց նա չի գիտակցում դրանց պատկերավորման հնարավորությունները, չի կարող կապակցել տրամադրության հետ: Օգտագործում է միայն տրված գույները՝ առանց խառնելու: Ներկայացնելիս նկարագրում է աշխատանքի մի քանի տարրեր: Հասկանում է մի քանի տերմինների իմաստը:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. նախակառուցվածքային Աշակերտը չի ըմբռնում հարցը, կիրառում է ոչ համապատասխան տեղեկություններ կամ ընդհանրապես հեռանում է հարցից:	Աշխատանքը չի համապատասխանում առաջադրանքի պայմանին:

ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱ 2

Դասարան I

Թեմատիկ բաժին 1. Մարդիկ և արվեստը

Թեմա. Ո՞վ է մեզ նայում նկարից (Դասեր 10-19) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 10+2

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ (ընդհանրացումներ թեմայի շրջանակներում)

- Իմ արտաքինը, բնավորությունը և հետաքրքրությունները կարող եմ արտահայտել տարբեր **բնագավառների ու ժանրերի** աշխատանքներում:
- Տարբեր **բնագավառների ու ժանրերի** գործերն օգնում են մեզ ավելի լավ ծանոթանալ մեզ և ուրիշներին:
- Տարբեր **բնագավառների ու ժանրերի** աշխատանքներով կարող եմ ինչպես ինքնարտահատվել, այնպես էլ ուրիշներին ներկայացնել ինձ, ինչի համար կընտրեմ համապատասխան **գեղարվեստական պատկերավորման միջոցներ, եղանակներ, նյութ և տեխնիկա:**

1. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություններ. միջոցներ

Գիծ (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, հորիզոնական, ուղղահայաց, անկյունագծային):

Գույն (հիմնական/բաղադրյալ, բաց/մուգ):

Միջոցներ.

Աշխատանքի մեջ պատկերի բաշխում, ուղղահայաց կամ հորիզոնական ձևաչափի ընտրություն:

2. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան.

Ենթահասկացություն. նկարել

3. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ

Ենթահասկացություն. նկարչություն

4. Նպատակային հասկացություն. կերպարվեստի ժանրերը

Ենթահասկացություններ. դիմանկար

Հարցը. Աշխատության մեջ փոխանցել մարդուն բնորոշ հատկանիշներ և փոխանցել բնավորությունը:

Հանգուցային հարցեր.

- Ինչպե՞ս են արվեստագետները փոխանցում մարդկանց արտաքինը և բնավորությունը:
- Ինչպե՞ս փոխանցեմ նկարի մեջ մարդու արտաքինը, բնավորությունը, տրամադրությունը:
- Ինչպե՞ս փոխանցեմ նկարի մեջ, թե ինչ է սիրում մարդը կամ ինչ է հետաքրքրում նրան:
- Ինչպե՞ս կարող եմ իմ աշխատությամբ ուրիշներին ծանոթացնել ինձ:

Համալիր առաջադրանքի պայմանը.

Նկարի՛ր ինքնադիմանկար:

- Քեզ բնորոշ հատկանիշների, արտաքինի, սանրվածքի, հագուստի և հետաքրքրությունների փոխանցման համար ընտրի՛ր և օգտագործի՛ր տարբեր տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներ:
- Համաձայն մտահղացման, որոշի՛ր՝ դիմանկարը երկայնակի նկարես, թե լայնակի:
- Մտածի՛ր, թե ինչ կնկարես ֆոնին:
- Աշխատության հանար շրջանակ պատրաստի՛ր: Շրջանակը գեղեցկացրո՛ւ տարբեր տեսակի գծերով:

Նպատակային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ	**Գնահատման չափանիշներ (Որոշակի համալիր ակտիվության համապատասխանեցված)** Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
1. Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները ● Ասելիքը (պատմություն, զգացմունք, գաղափար, տպավորություն, տրամադրություն, դիտարկման արդյունքներ), գեղարվեստական մտահղացումը փոխանցելու համար մարդը կիրառում է արվեստի լեզուն, կամ կերպարվեստի տարրերը (գույն, գիծ, ձև) և սկզբունքները (օրինակ՝ ռիթմ, հիմնականի ընդգծում, հակադրություն և այլն)։ **2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան** ● Մարդիկ արվեստի գործ ստեղծելու համար օգտագործում են տարբեր նյութեր և տեխնիկա։ **3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ** ● Արվեստի բաժանումը տարբեր բնագավառների պայմանավորված է օգտագործված նյութով, տեխնիկայով, նպատակով։ ● Կերպարվեստի և կիրառական արվեստի յուրաքանչյուր բնագավառին բնորոշ է որևէ գեղարվեստական տարր։ ● Կերպարվեստի ստեղծագործությունները ստեղծվում են կերպարվեստի տարրերի և սկզբունքների հիման վրա, չնայած որ ցանկացած տարր ավելի կոնկրետ է յուրաքանչյուր բնագավառի համար։ **4. Կերպարվեստի ժանրերը** ● Արվեստը ժանրերի է բաժանվում՝ ըստ արտացոլված բովանդակության։	● Ի՞նչ ես նկարել։ ● Ինչպիսի՞ գծեր ես օգտագործել ինքնադիմանկարում՝ քո արտաքին նշանները փոխանցելու համար։ ● Ի՞նչ գույներ ես օգտագործել (հիմնական/բաղադրյալ, բաց/մուգ)՝ բնավորություն, տրամադրություն փոխանցելու համար։ ● Ո՞ր գույնն է զվարճացրել քո նկարը։ ● Ո՞րն է ստեղծել թախծոտ տրամադրություն։ ● Ի՞նչ տրամադրություն ես փոխանցել։ ● Ի՞նչ մանրամասներ են քեզ օգնել քո հետաքրքրությունների փոխանցման համար։ ● Ի՞նչ ես նկարել ֆոնի վրա։ ● Ինչպիսի՞ շրջանակ ես պատրաստել նկարի համար։ ● Ի՞նչն ես հավանում քո աշխատանքում։ ● Ի՞նչը կփոխեիր։ ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում

Քննարկվելիք քեյսեր համալիր առաջադրանքի իրականացման համար.

- Ի՞նչն է ամենաշատը հետաքրքրում մարդուն:

Իհարկե՛, մարդիկ:

- Նրան հետաքրքրում է, թե ինչպիսին է ինքը և ինչպիսին են մյուսները:
- Ո՞վ ես դու: Ի՞նչն ես սիրում, ի՞նչն է քեզ հետաքրքրում:
- Ովքե՞ր են քո ընկերները, ի՞նչ են նրանք սիրում:
- Արվեստը կարող է պատասխանել այս հարցերիդ:

Ռեսուրսներ համալիր առաջադրանքները կատարելու համար.

Հեռուստադպրոց, տեսադասեր.

«Դիմանկար». https://www.youtube.com/watch?v=nRZIZKV-EPo;

Նկարազարդումներ՝ Պաբլո Պիկասո, Գ.Ա.Վ. Տրաուզոտներ, Գաստոն Շեսակ, Անրի Մատիս, Մերի Կասատ, Բերտա Մորիսո, Դեյվիդ Հոքնի, Ֆրիդա Կալո, Սոնյա Դելոնե, Կիթ Հարինգ, Խոան Միրո, Մո Նոնգ, Իա Մախաթաձե:

Հարցեր, որոնք ուղղված են համալիր առաջադրանքի պայմանը հասկանալուն.

- Ինչպիսի՞ն ես դու՝ ուրախ, լուրջ, չարաճճի...
- Ինչպիսի՞ արտաքին, սանրվածք, հագուստ ունես:
- Ինչպե՞ս կնկարես, թե ինչ ես սիրում, ինչ է քեզ հետաքրքրում:
- Որո՞նք են քո սիրելի գույները:
- Ի՞նչ տրամադրություն են քեզ մոտ առաջացնում այս գույները:
- Ի՞նչ գույներ ես օգտագործում նկարում քո բնավորությունն ու տրամադրությունը փոխանցելու համար:
- Ինչպիսի՞ գծեր կօգնեն քեզ փոխանցել քո արտաքինը:

Փուլ 2. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա

Քայլ 1. (Դաս 10)

10. Ժամանակ չունեմ, ես խաղում եմ:

Ի՞նչ է մեզ պատմում արվեստը երեխաների մասին:

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակի), գույն. հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ:
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել:
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:

Ռեսուրսներ. դասագիրք, Պաբլո Պիկասոյի ստեղծագործությունները:

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Ի՞նչն է ամենաշատը հետաքրքրում մարդուն: Իհարկե՛, մարդիկ: Նրան հետաքրքրում է, թե ինչպիսին է ինքը, և ինչպիսիք են մյուսները: Ո՞վ ես դու: Ի՞նչ ես սիրում, ի՞նչն է քեզ հետաքրքրում: Ովքե՞ր են քո ընկերները, ի՞նչ են նրանք սիրում: Արվեստը կարող է պատասխանել այս հարցերին: Ինչպե՞ս:

Ակտիվություն 1. Պաբլո Պիկասոյի նկարների դիտարկում

Դիտարկի՛ր նկարները և գտի՛ր՝ նավակ, թիթեռ բռնելու ցանց, ծաղիկ, խաղալիք ձի։

Ակտիվություն 2. Պաբլո Պիկասոյի նկարների դիտարկում

- Ի՞նչ է նկարել նկարիչը։
- Ի՞նչ են անում երեխաները։
- Ինչպե՞ս է նկարիչը ցույց տվել մեզ, թե ինչ են սիրում երեխաները։
- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում։
- Ի՞նչ տրամադրություն են ստեղծում գույները։

Պատասխան. Նկարներում երեխաների ձեռքում կա՛մ խաղալիք է, կա՛մ էլ նրանք գիրք կարդալու և նկարելու գործընթացում են պատկերված։

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, նկարել, վարժություն

Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ

Խաղալը երեխաների գործն է։

Նկարի՛ր քո սիրելի զբաղմունքը, ինչ ես անում, երբ ժամանակ չունես։

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ պատմեցին քեզ Պաբլո Պիկասոյի նկարները երեխաների մասին։
- Ի՞նչն էր քեզ ծանոթ։
- Ի՞նչ ես անում դու, երբ ժամանակ չունես։
- Ի՞նչ ես նկարել։
- Ի՞նչ ես փոխանցել նկարում, ի՞նչ ես սիրում դու։

Քայլ 2. (Դաս 11)

11. Գիծ և տրամադրություն

Դիմանկարում գծով բնորոշ հատկանիշների փոխանցում

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակի)։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել։

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։

Ռեսուրսներ. դասագիրք, Պաբլո Պիկասոյի գրաֆիկական նկարները

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց (նախապես ունեցած գիտելիքների ակտիվացում)։

- Ինչպիսի՞ բնավորություն ունեն մարդիկ (հանգիստ, ուրախ, ամաչկոտ, համարձակ, խռովկան...)
- Հիշի՛ր, թե ինչպիսի գծերի ես ծանոթ։
- Դրանցից յուրաքանչյուրն ինչպիսի՞ բնույթ ունի։
- Ինչո՞վ են գծերը նման մարդկանց։ (բնավորությամբ)
- Նայե՛ք նկարազարդմանը։ Ի՞նչ եք տեսնում։

Պատասխան. Պաբլո Պիկասոն իր նկարում օգտագործել է տարբեր տեսակի գծեր՝ ոլորուն, զիգզագ, ալիքաձև, մուգ և բաց, կոպիտ և նուրբ: Այս գծերով նա մեզ ցույց է տալիս մարդու բնավորությունն ու արտաքինը:

Ակտիվություն 1. Նկարազարդման դիտարկում

Գտի՛ր գծերը.

- ուղիղ և ոլորուն,
- զիգզագ և ալիքաձև,
- նուրբ և կոպիտ:

Ակտիվություն 2. Մեկնաբանություն

Դիտարկի՛ր Պաբլո Պիկասոյի նկարները:

- Ինչպիսի՞ մարդկանց է նկարել նկարիչը:
- Ո՞րն է տխուր:
- Ո՞րն է ուրախ:
- Ո՞րն է զայրացած:
- Ինչպե՞ս կռահեցիր:
- Ի՞նչ գծերով է նկարիչը մեզ ցույց տվել նրանց բնավորությունը:

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, նկարել, (վարժություն).

Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթ, հասարակ մատիտ:

Մատիտով նկարի՛ր զայրացած և ուրախ մարդիկ:

Մտածի՛ր, թե ինչպիսի գծեր կհամապատասխանեն նման բնավորությանը:

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Պաբլո Պիկասոն ինչպե՞ս ցույց տվեց մեզ մարդու արտաքինն ու բնավորությունը:
- Ինչպե՞ս կարող ես գիծն օգտագործել՝ ցույց տալու համար մարդուն բնորոշ հատկանիշները:
- Ինչպիսի՞ գիծ կհամապատասխանի գորովալից/կռվարար/ամաչկոտ մարդուն:

Քայլ 3. (Դաս 12)

12. Երկու ընկեր

Գծի և գույնի հատկությունների օգտագործումը աշխատության մեջ

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակի): Գույն. հիմնական և բաղադրված, բաց և մուգ:

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել:

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:

Ռեսուրսներ. դասագիրք, Գ.Ա.Վ. Տրաուգոտների և Գաստոն Շեսակի նկարները:

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Գիծը երբեմն նուրբ է, երբեմն կոպիտ:

Գույնը կամ բաց է կամ մուգ, գունատ կամ վառ:

Գիծն ու գույնն ընկերներ են:

Ի՞նչ կարող են նրանք միասին անել:

Ակտիվություն 1. Նկարազարդումների դիտարկում (Տրաուգոտ եղբայրների ստեղծագործությունները)

Սրանք ջրաներկով նկարած նկարներ են։

Ակվարելը (ջրաներկը) ջրի ներկ է։

- Պատկերացրո՛ւ այս նկարներն առանց գծերի։ Ի՞նչ կտեսնեիր։
- Ինչո՞ւ նկարչին անհրաժեշտ եղան գծերը։
- Պատկերացրո՛ւ, թե ինչպիսին կլինեին այս նկարներն առանց գույների։
- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում։
- Ի՞նչ գույներ ես տեսնում։

Պատասխան. Գծերը բարակ են, փափուկ և նուրբ։ Գույները թափանցիկ են, օդային, նուրբ։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, նկարել (վարժություն)

Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթ, ներկեր, մատիտ, վրձին, նշիչ։

- Մատիտով կամ նշիչով նկարի՛ր մարդ։
- Գունավորի՛ր նկարը ներկերով։

Ակտիվություն 3. Նկարազարդման դիտարկում (Գաստոն Շեսակի աշխատանքը)

- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում։
- Ինչպիսի՞ գույներ ես տեսնում։
- Ինչպե՞ս են գծերն ու գույներն օգնում միմյանց։

Պատասխան. Գծերը շրջապատում են գույները, և մենք ավելի լավ ենք տեսնում նկարը։

Ակտիվություն 4. Գործնական աշխատանք, նկարել

Անհրաժեշտ նյութ. ստվարաթղթե գլանափաթեթներ, սև նշիչներ, գուաշի ներկեր, վրձին։

- Ստվարաթղթե գլանափաթեթը գունավորի՛ր գուաշի ներկերով։
- Գունավոր բծերը շրջագծի՛ր սև նշիչով։
- Ամենալուսավոր բծի մեջ նկարի՛ր ուրախ կամ զայրացած դեմք։

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ կարող է անել գիծը։
- Ի՞նչ կարող է անել գույնը։
- Ի՞նչ կարող են նրանք անել միասին։

Քայլ 4. (Դաս 13)

13. Դիմանկար

Ծանոթանալ դիմանկարի ժանրին

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակի)։ Գույն. հիմնական և բաղադրված, բաց և մուգ։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել։

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։

4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. դիմանկար։

Ռեսուրսներ. դասագիրք, Մերի Կասատի, Բերտա Մորիսոյի կողմից կատարված դիմանկարներ։ Հեռուստադպրոց, «Դիմանկար».
https://www.youtube.com/watch?v=nRZIZKV-EPo;

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

- Ի՞նչ է նկարել նկարիչը։ (մարդ)

Սրանք դիմանկարներ են։

Դիմանկարը մեզ պատմում է, թե ինչպիսին է մարդը։

Ակտիվություն 1. Նկարի նկարագրություն (Մարի Կասատի կողմից կատարված դիմանկարներ)

Դիտարկի՛ր Մարի Կասատի նկարները։

Նկարագրի՛ր այն, ինչ տեսնում ես։

Բնութագրի՛ր երեխաներին։

- Ի՞նչ են հագել։
- Ի՞նչ գույնի մազեր ունեն։
- Ի՞նչ սանրվածք ունեն։
- Դեմքի ինչպիսի՞ արտահայտություն ունե՞ն նրանք։ (լուրջ, հանգիստ, չարաճճի, մտախոհ)

Ակտիվություն 2. Նկարի նկարագրություն (Բերտա Մորիսոյի կատարած դիմանկար)

Ուշադիր դիտի՛ր Բերտա Մորիսոյի դիմանկարը։

- Ի՞նչ է անում աղջիկը։
- Ի՞նչ է հագել։
- Ի՞նչ գույնի մազեր ունի։
- Ինչպիսի՞ սանրվածք ունի նա։
- Դեպի ո՞ւր է նայում աղջիկը։
- Դեմքի ինչպիսի՞ արտահայտություն ունի նա։

Ենթադրյալ պատասխան.

Աղջիկը կարծես մեզ է նայում։ Նա դժգոհ է, ինչ-որ մեկը խանգարել է նրան նվագել։

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, նկարել (միջանկյալ)

Անհրաժեշտ նյութեր. նկարչության թերթ, գունավոր մատիտներ:

- Ի՞նչ է սիրում քո կերպարը: Ի՞նչ է հետաքրքրում նրան:
- Ի՞նչ գծերով և գույներով ես փոխանցում նրա տրամադրությունն ու բնորոշ հատկանիշները:

Ցո՛ւյց տուր նկարը քո ընկերներին և պատմի՛ր.

- Ի՞նչ ես նկարել: (դիմանկար)
- Ո՞ւմ ես նկարել:
- Ի՞նչ է սիրում քո հերոսը, ի՞նչ է նրան հետաքրքրում:
- Ինչպե՞ս ես պատկերել նրա հետաքրքրությունները դիմանկարում:
- Ո՞ր գույներով ես փոխանցել տրամադրությունը:
- Ինչո՞վ օգնեցին քեզ գծերը:
- Ի՞նչն է քեզ դուր գալիս քո աշխատանքում:
- Ի՞նչ կփոխեիր:

Քայլի ամփոփիչ հարց.

- Ի՞նչ է մեզ պատմում դիմանկարը մարդու մասին:

Քայլ 5. (Դաս 14)

14. Ինքնադիմանկար

Խոսել ինքնադիմանկարում արտաքին նմանության մասին

Նպատակային հասկացություն/հասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանրեր՝ **ենթահասկացություն**. դիմանկար:

Ռեսուրսներ. դասագիրք, Անրի Մատիսի, Պաբլո Պիկասոյի, Ֆրիդա Կալոյի, Դեյվիդ Հոքնիի ինքնադիմանկարները և նրանց լուսանկարչական դիմանկարները:

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Ինքնադիմանկարը քո դիմանկարն է:

Նկարիչները հաճախ նկարում են իրենց:

Երբ մարդիկ լուսանկարում են իրենց, դա նույնպես ինքնադիմանկար է:

Ակտիվություն 1. Համեմատություն

Համեմատի՛ր նկարը և լուսանկարը:

- Ի՞նչ նկատեցիր:
- Ինչո՞վ է Անրի Մատիսի ինքնադիմանկարը նման իր սեփական լուսանկարին:

Պատասխան. ակնոց, բեղ-մորուք, սանրվածք, հայացք, հագուստ:

Ակտիվություն 2. Համեմատություն

Դիտարկի՛ր նկարներն և լուսանկարները:

Գտի՛ր ինքնադիմանկարի հեղինակին:

- Ի՞նչ հատկանիշներով ես նմանեցրել լուսանկարը նկարին:

Քայլերի ամփոփիչ հարցեր.

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնել դիմանկար նկարելիս:

Ինչո՞վ են մարդիկ տարբերվում միմյանցից:

Պատասխան. Յուրաքանչյուր ոք ունի տարբեր արտաքին տեսք՝ դեմքի դիմագծեր, բնորոշ նշաններ, օրինակ. ակնոցներ, մորուք...

Ի՞նչ այլ նշաններով կարելի է նմանություն փոխանցել: (սանրվածք, հագնվածք)

Քայլ 6. (Դասեր 15, 16)

15. Տխրություն ուրախ գույներով

Ի՞նչն է ստեղծում նկարի տրամադրությունը:

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակի): Գույն. հիմնական և բաղադրված, բաց և մուգ:
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել:
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:
4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. դիմանկար:

Ռեսուրսներ. դասագիրք, Սոնյա Դելոնեի և Անրի Մատիսի կողմից կատարված դիմանկարներ:

Գաղափարներ ակտիվությունների համար.

Բառարան. ֆոն – այն, ինչ նկարված է առարկայի շուրջ:

Մոտիվացիոն հարցեր.

- Ինչպիսի՞ն կլիներ աշխարհն առանց գույների:
- Ի՞նչ գույն է երազանքը, ծիծաղը, նեղանալը:
- Ի՞նչ գույներ կընտրեիք կենսուրախ մարդուն նկարելու համար:
- Ի՞նչ գույներ կընտրեիք տխուր մարդուն նկարելու համար:
- Ի՞նչ կպատահի, եթե տխուր մարդուն վառ գույներով նկարենք:

Ըստ քեզ, նկարիչներն էլ նո՞ւյն կերպ են մտածում:

Ակտիվություն 1. Դիտարկում

Դիտարկի՛ր Սոնյա Դելոնեի նկարները:

- Ի՞նչ գույներ ես տեսնում:
- Նկարները գունագեղ են, թե՞ միագույն:
- Գույները ուրա՞խ են, թե՞ խոժոռ:
- Ի՞նչ տրամադրություն է այս դիմանկարներում:

- Տրամադրությունը գո՞ւյնն է ստեղծում, թե՞ դիմանկարներում պատկերված մարդկանց դեմքի արտահայտությունները:

Լրացուցիչ ակտիվություն. Գործնական աշխատանք, նկարել (վարժություն).
*** Այս ակտիվությունը ներառված չէ աշակերտի գրքում և նախատեսված է տարբերակված ուսուցման համար:**
Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ

Սոնյա Դելոնե, Ֆիլոմենեի դիմանկարը:

Դիտարկի՛ր Ֆիլոմենեի դիմանկարը:
Արտանկարի՛ր դիմանկարը նկարչության տետրի մեջ:
- Ինչո՞վ կնկարես նկարը:
- Ինչո՞վ կնկարես գծերը:
- Ինչպե՞ս կտեղադրես նկարչության թերթը՝ երկայնակի՞, թե՞ լայնակի: Ինչո՞ւ:

Ակտիվություն 2, 3. Նկարազարդումների դիտարկում
Դիտարկի՛ր Անրի Մատիսի դիմանկարները:
- Ի՞նչ գույներ ես տեսնում:
- Նկարները գունագե՞ղ են, թե՞ միագույն:
- Գույները ուրա՞խ են, թե՞ խոժոռ:
- Ի՞նչ տրամադրություն ճանաչեցիր:
- Ի՞նչ է նկարած ֆոնի վրա:
- Ո՞ր նկարում է ֆոնը խայտաբղե՞տ, որտե՞ղ՝ պարզ, մուգ կամ բաց:

16. Ի՞նչ գույն է ուրախությունը:
Ռեսուրսներ. դասագիրք, Կիտ Հարինգի և Ժոան Միրոյի աշխատությունները
Գաղափարներ ակտիվության համար.

Ակտիվություն 1, 2. Նկարազարդման դիտարկում (Կիտ Հարինգ)
Դիտարկի՛ր Կիտ Հարինգի նկարները:
- Ի՞նչ է նկարել նկարիչը:
- Ի՞նչ գույներ ես տեսնում:

- Ի՞նչ տրամադրություն է նկարներում:
- Ի՞նչն է ստեղծում այդ տրամադրությունը:

Պատասխան. Կիտ Հարինգը նկարում էր հիմնական և բաղադրյալ մաքուր գույներով: Կենսուրախ մարդուկների շարժումը նկարիչը կարճ սև գծերով է փոխանցում:

Ակտիվություն 3. Նկարազարդման դիտարկում (Խոան Միրո).

- Պատմի՛ր՝ ի՞նչ ես տեսնում:
- Ի՞նչ է նկարել նկարիչը գծերով:
- Ինչպիսի՞ դեմքեր ունեն մարդուկները:
- Ի՞նչ գույներ ես տեսնում:
- Ի՞նչ տրամադրություն են ստեղծում այդ գույները:

Ակտիվություն 4. Գործնական աշխատանք, նկարել (վարժություն).

Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ

Նկարի՛ր ուրախ արարածներ:

- Ի՞նչ են անելու նրանք:
- Ի՞նչ գույներով կնկարես:
- Դեմքի ինչպիսի՞ արտահայտություն կունենան նրանք:

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ո՞ր գույներն են ստեղծում ուրախ տրամադրություն:
- Ո՞ր գույներն են ստեղծում տխուր տրամադրություն:
- Կարո՞ղ ես տխուր տրամադրություն փոխանցել ուրախ գույներով:
- Ի՞նչ պետք է անես դրա համար:
- Կարո՞ղ եք ուրախ տրամադրություն փոխանցել տխուր գույներով:
- Ի՞նչ պետք է անես դրա համար:

Քայլ 7 (Դաս 17)

17. Արվեստանոց

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակի): Գույն. հիմնական և բաղադրված, բաց և մուգ, ֆոն, կոմպոզիցիա:
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա՝ **ենթահասկացություն**. խառը տեխնիկա:
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:
4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. դիմանկար:

Ռեսուրս. Աշակերտների աշխատանքների նմուշներ

Գաղափարներ ակտիվության համար.

Ակտիվություն 1. Գործնական աշխատանք, նկարչություն խառը տեխնիկայով (վարժություն).

*Աշակերտների հնարավորությունների նախատեսմամբ, կարելի է Ակտիվություն 1-ը և 3-ը միավորել որպես մեկ առաջադրանք և բաժանել տարբեր ունակություններ ունեցող աշակերտների միջև:

Անհրաժեշտ նյութ. նկարչության երկու թերթ, նշիչ, ներկեր, վրձին, մկրատ, սոսինձ:

Պատրաստի՛ր գունավոր ֆոն. ամբողջությամբ գունավորի՛ր թերթը ներկերով:

Առանձին թերթի վրա մարդ նկարի՛ր: Կտրի՛ր-հանի՛ր նկարը և փակցրո՛ւ ֆոնի վրա:

- Ի՞նչ գույներով ես նկարել ֆոնը:
- Ի՞նչ տրամադրություն է քո նկարում:

Ակտիվություն 2. Դիտարկում, դատողություն

Ուշադիր դիտի՛ր երեխաների նկարները:

- Դիմանկար ավելի լավ է երկայնակի նկարել, թե՞ լայնակի:
- Այս երեք նմուշներից ո՞րը կընտրեիր և ինչո՞ւ:
- Ի՞նչ կփոխեիր այս դիմանկարների դասավորության մեջ և ինչո՞ւ:

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, նկարել.

Անհրաժեշտ նյութեր. նկարչության երկու թերթ, նշիչներ, ներկեր, վրձին, մկրատ, սոսինձ:

- Առանձին թղթի վրա նկարի՛ր քո ընկերոջ դիմանկարը:
- Փորձի՛ր նմանությունը փոխանցել նրա բնորոշ նշաններով:
- Հիշի՛ր, թե ի՞նչ գույնի են նրա աչքերը: Մազերն ի՞նչ գույնի են:
- Ուրիշ ի՞նչ ունի առանձնահատուկ:
- Քո սիրելի գույներով պատրաստի՛ր ֆոն:
- Կտրի՛ր-հանի՛ր դիմանկարը և տեղադրի՛ր այն ֆոնի վրա:

Ակտիվություն 4. Գործնական աշխատանք, խառը տեխնիկա (միջանկյալ).
Անհրաժեշտ նյութեր. մեկ նկարչության թերթ, մեկ մեծ չափի նկարչական թերթ, ջրաներկ, գուաշի ներկեր, պաստել, վրձին, մատիտներ և նշիչներ, մկրատ, սոսինձ:

1) Պատրաստի՛ր ֆոնը՝ պաստելով գծեր գծի՛ր:

- Նկարի վրա քսի՛ր ջրաներկ:
- Ի՞նչ տեղի ունեցավ:
- Սպասի՛ր, որ ֆոնը չորանա:

2) Առանձին թղթի վրա նկարի՛ր ուրախ դեմք և կտրի՛ր-հանի՛ր այն:

- Ներկերով պատրաստի՛ր երկու ձեռքերի դրոշմվածքներ և կտրի՛ր-հանի՛ր:
- Նախապես պատրաստված ֆոնի վրա փակցրո՛ւ դեմք և ձեռքի դրոշմվածքներ:

Ցույց տո՛ւր աշխատանքդ քո ընկերներին և պատմի՛ր նրանց.

- Ի՞նչ ես նկարել: (դիմանկար)
- Ո՞ւմ ես նկարել:
- Ի՞նչ տրամադրություն է քո նկարում:
- Ինչպե՞ս ես բաշխել պատկերը թերթի վրա:
- Ի՞նչ է նկարած ֆոնի վրա:
- Ի՞նչ նյութեր և տեխնիկա ես օգտագործել:
- Ի՞նչ ես նկարել սկզբից և ի՞նչը՝ վերջում: Ինչո՞ւ:

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ ես նոր սովորել:
- Ինչի՞ համար կօգտագործես այս փորձառությունդ:
- Քեզ դո՞ւր եկավ աշխատել խառը տեխնիկայով:
- Ի՞նչ է ֆոնը:
- Ի՞նչ է ավելացնում ֆոնը նկարին:
- Ինչո՞ւ են որոշ նկարներ նկարված երկայնակի, իսկ որոշ նկարներ՝ լայնակի:

Քայլ 8. (Դասեր 18, 19)
18. Փոքրիկ ընկերները
Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ ենթահասկացություն. գիծ (տարբեր տեսակի): Գույն (հիմնական և բաղադրված, բաց և մուգ):
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ ենթահասկացություն. նկարել:
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ ենթահասկացություն. նկարչություն:

Ռեսուրսներ. դասագիրք. չինացի նկարիչ Մո Նոնգի և Իա Մախաթաձեի նկարները:

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Դուք տեսաք շատ տարբեր նկարներ, որոնցում երևում է, թե ինչ է այս մարդկանց հետաքրքրում, ինչ են նրանք սիրում՝ կարդալ, նկարել, խաղալ, փաթաթվել սիրելի մարդուն, պարել... որոշ մարդկանց գրկում սիրելի կենդանի է նստած:

Դասագրքում գտեք այսպիսի նկարներ (Պաբլո Պիկասո (Դաս 10), Գ.Ա.Վ.Տրաուգոտներ և Գաստոն Շեսակ (Դաս 12), Մերի Կասատ և Բերտա Մորիսո (Դաս 13), Անրի Մատիսի ինքնադիմանկար՝ ձեռքին վրձիններ, մոլբերտի մոտ (Դաս 14), Կիտ Հարինգ, Խոան Միրո (Դաս 16): Դուք ի՞նչ եք սիրում: Ե՞րբ և ո՞ւմ հետ եք ձեզ զգում ամենալավ:

Ուշադիր նայի՛ր նկարներին. Ի՞նչ են մեզ պատմում դրանք:

Ակտիվություն 1. Նկարազարդումների քննարկում (Մո Նոնգ)

Դիտարկի՛ր նկարները.

- Ի՞նչ պատմեց մեզ նկարիչը: (Մարդու և նրա կենդանիների բարեկամության մասին)
- Ի՞նչ տրամադրություն է այս նկարներում: (հարմարավետ, ընկերական)
- Ի՞նչ տրամադրություն առաջացավ քեզ մոտ:
- Ո՞ր գույնն է գլխավորը: (կարմիր):
- Ի՞նչ գույնի է ֆոնը: (դեղին, կանաչ, նարնջագույն, կարմիր):

Ակտիվություն 2. Նկարազարդումների մասին դատողություն (Իա Մախաթաձե)

Դիտարկի՛ր նկարները.

- Ի՞նչ է նկարել նկարիչը:
- Ինչպիսի՞ գույներով:
- Ինչպիսի՞ գծերով:
- Ո՞րն է գլխավոր՝ գո՞ւյնը, թե՞ գիծը:
- Ի՞նչն է ստեղծում տրամադրությունը՝ զվարճալի գույնե՞րը, նկարված պատմությո՞ւնը, թե՞ երկուսն էլ:

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, նկարել (վարժություն).

Նկարի՛ր քեզ քո սիրելի կամ երազած կենդանու հետ:

19. Շրջանակ, գործնական աշխատանք

Անհրաժեշտ նյութեր. բարակ ստվարաթուղթ կամ նկարչության թերթեր, նշիչներ, սոսինձ:

Պատրաստի՛ր նկարի շրջանակ։

- Ընտրի՛ր քո նկարներից որևէ մեկը։
- Ինչպիսի՞ շրջանակ կսազի նրան։
- Նկարին գեղեցիկ շրջանակ պատրաստի՛ր։
- Քո նկարը փակցրո՛ւ համեմատաբար մեծ չափի գունավոր թերթի վրա։
- Զարդանկարի՛ր շրջանակը մատիտներով կամ նշիչներով։
- Օգտագործի՛ր տարբեր տեսակի գծեր։

III փուլ. Համալիր առաջադրանքի կատարում և ներկայացում (ի՞նչ սովորեցի)։

Նկարի՛ր ինքնադիմանկար.

- Քեզ բնորոշ հատկանիշները, արտաքին տեսքը, սանրվածքը, հագուստը և հետաքրքրությունները փոխանցելու համար ընտրի՛ր և օգտագործի՛ր **տարբեր տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ,** բաց և մուգ **գույներ։**
- Ըստ մտահղացման՝ որոշի՛ր, թե դիմանկարը երկայնակի կնկարես, թե՞ լայնակի։
- Աշխատանքի համար շրջանակ նկարի՛ր։ Շրջանակը գեղեցկացրո՛ւ տարբեր տեսակի գծերով։

Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.

- Ի՞նչ ես նկարել։ (ինքնադիմանկար)
- Ի՞նչ գծեր ես օգտագործել ինքնադիմանկարում քո արտաքին հատկանիշները փոխանցելու համար։
- Ի՞նչ գույներ ես օգտագործել (հիմնական/բաղադրյալ, բաց և մուգ) բնավորությունը, տրամադրությունը փոխանցելու համար։
- Ո՞ր գույնն է զվարճալի դարձրել քո նկարը։
- Ո՞րն է թախծոտ տրամադրություն ստեղծել։
- Ի՞նչ մանրամասներ օգնեցին քեզ փոխանցել քո հետաքրքրությունները։
- Ի՞նչ եք նկարել ֆոնի վրա։
- Ի՞նչ շրջանակ ես պատրաստել նկարի համար։
- Ի՞նչն է քեզ դուր գալիս քո աշխատանքում։
- Ի՞նչը կփոխեիր։
- Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։
- Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր առաջադրանքի վրա աշխատանքը։

Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման խորագրեր.

1. Ապրե՛ս։
   Դու լավ ես հասկացել առաջադրանքի պայմանը։
   Ինքնադիմանկարում ճշգրիտ ես փոխանցել քեզ բնորոշ հատկանիշները՝ սանրվածքը, հագուստը։
   Լրացուցիչ մանրամասներով ցույց ես տվել քո հետաքրքրությունները։
   Օգտագործել ես տարբեր տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ գույներ։
   Նկարը գեղեցիկ բաշխված է թերթի վրա։
   Աշխատանքի մասին խոսելիս ճիշտ տերմիններ ես օգտագործում։

2. Լավ գործ է։
   Ինքնադիմանկարում դու կարող էիր քեզ բնորոշ նշանները ճշտել սանրվածքով, հագուստի մանրամասներով։
   Դու կարող էիր նկարել այս մանրամասները տարբեր տեսակի գծերով և գունավորել հիմնական և/կամ բաղադրյալ գույներով։
   Աշխատանքի մասին խոսելիս կարող էիր օգտագործել ավելի շատ համապատասխան տերմիններ։

Թեմա 2. Համալիր առաջադրանքի գնահատում՝ ըստ SOLO (ՈՒԴԱԿ) տաքսոնոմիայի

<table>
<tr><td colspan="2">Թեմատիկ բաժին. Մարդիկ և արվեստը
Թեմա. Ո՞վ է մեզ նայում նկարից։
Աշակերտի անուն, ազգանուն. ----------
Ամիս, ամսաթիվ, տարեթիվ. ----------

Նպատակային հասկացություն 1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)
Ենթահասկացություններ. գիծ (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, բարակ և հաստ)։ Գույն (հիմնական/բաղադրյալ, բաց/մուգ)։

Նպատակային հասկացություն 2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա
Ենթահասկացություն. նկարել

Նպատակային հասկացություն 3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները
Ենթահասկացություն. նկարչություն

Նպատակային հասկացություն 4. Կերպարվեստի ժանրերը
Ենթահասկացություն. դիմանկար</td></tr>
<tr><td colspan="2">Համալիր առաջադրանքի պայմանը.
Նկարի՛ր ինքնադիմանկար։ Քո բնավորությունը, բնորոշ նշանները՝ արտաքին տեսքը, սանրվածքը, հագուստը և հետաքրքրությունները փոխանցելու համար ընտրի՛ր և օգտագործի՛ր տարբեր տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներ։ Մտածի՛ր, թե ինչ ես նկարելու ֆոնին։ Մտահղացմանը համապատասխան որոշի՛ր՝ դիմանկարը երկայնակի ես նկարելու, թե՞ լայնակի։</td></tr>
<tr><td>SOLO տաքսոնոմիայի մակարդակ. վերացական
Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս։ Ենթադրություններ է արտահայտում։ Ընդհանրացնում է գիտելիքը ինչպես տվյալ առարկայի կտրվածքում, այնպես էլ այլ ոլորտի հետ հարաբերության մեջ։ Ունի նմանատիպ օրինակների հետ համեմատելու, վերլուծելու և գնահատելու ունակություն։ Կարող է հարցը/երևույթը կապել անձնական փորձի հետ։</td><td>Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ ստեղծում է ինքնադիմանկար։ Նկարում փոխանցում է բնավորություն, բնորոշ նշաններ՝ արտաքին տեսքը, սանրվածքը, հագուստը։ Լրացուցիչ մանրամասներով փոխանցում է սեփական հետաքրքրությունները։ Դրա համար գիտակցված և նպատակաուղղված օգտագործում է բազմաթիվ տարբեր տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներ։
Մտահղացմանը համապատասխան՝ մտածված բաշխում է պատկերը, ընտրում է թերթի համապատասխան ուղղություն։
Շնորհանդեսի ժամանակ նա ընդարձակ խոսում է իր մտահղացման և ստեղծագործական գործընթացի փուլերի մասին։ Պատշաճ կերպով օգտագործում է տարբեր տերմիններ։</td></tr>
</table>

SOLO տաքսոնոմիայի մակարդակ. հարաբերական Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է նրա մի քանի ասպեկտների միջև պատճառահետևանքային կապերը: Կարող է արտահայտել ենթադրություն, համեմատել, վերլուծել, գնահատել, օգտագործել տեսական գիտելիքը պրակտիկայում:	Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ ստեղծում է ինքնադիմանկար: Նկարում փոխանցում է մի քանի բնորոշ նշան՝ արտաքին տեսքի, սանրվածքի, հագուստի մի քանի դետալ: Մի քանի մանրամասնով փոխանցում է իր հետաքրքրությունը: Դրա համար օգտագործում է մի քանի տեսակի գծեր, հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ գույներ: Ընտրում է թերթի համապատասխան ուղղություն: Շնորհանդեսի ժամանակ խոսում է իր մտահղացման և ստեղծագործական գործընթացի մի քանի փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է մի քանի տերմիններ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. բազմակառուցվածքային Աշակերտն ունի պատկերացում հարցի/երևույթի մի քանի ասպեկտների մասին առանձին-առանձին, չի հասկանում նրանց միջև կապը: Կարող է նկարագրել, թվարկել, տեսակավորել, համադրել, մեթոդներ օգտագործել, իրականացնել ընթացակարգեր և այլն:	Ստեղծում է դիմանկար: Օգտագործում է մի քանի տեսակի գիծ, հիմնական և/կամ բաղադրյալ գույներ, սակայն չի փոխանցում իր բնութագրերը: Չի հասկանում պատկերի բաշխման նշանակությունը: Շնորհանդեսի ժամանակ նա ամբողջությամբ նկարագրում է իր աշխատանքը: Իր աշխատության մասին խոսում է՝ օգտագործելով մի քանի տերմիններ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. ունիկառուցվածքային Աշակերտը քննարկում է հարցի/երևույթի միայն մեկ ասպեկտ: Տեսնում է պարզ, բացահայտ/հստակ կապերը: Հասկանում է միայն մի քանի տերմինի նշանակություն: Կարող է գիտելիքը բանավոր փոխանցել (հիշել), կատարել պարզ ցուցումներ, շրջասել, ճանաչել, անվանել կամ թվարկել:	Ստեղծում է դիմանկար: Կիրառում է մեկ տեսակի գիծ, չի կարող փոխանցել իր բնութագրիչները: Չի հասկանում պատկերի բաշխման նշանակությունը: Շնորհանդեսի ժամանակ նկարագրում է իր աշխատանքի մի քանի տարրեր: Հասկանում է մի քանի տերմինի իմաստ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. նախակառուցվածքային Աշակերտը չի ըմբռնում հարցը, կիրառում է ոչ համապատասխան տեղեկություններ կամ ընդհանրապես հեռանում է հարցից:	Աշխատանքը չի համապատասխանում առաջադրանքի պայմանին:

ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱ 3

Դասարան I

Թեմատիկ բաժին 1. Արվեստն իմ շուրջը

Թեմա. Ձմեռ պապի արվեստանոցը (Դասեր 20-26) **Ժամերի ենթադրյալ քանակը՝ 10+2**

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ (ընդհանրացումներ թեմայի շրջանակներում)

- Ես կարող եմ ստեղծել արվեստի տարբեր ոլորտների գործեր, որոնք կգեղեցկացնեն իմ և իմ հարազատների միջավայրը և կստեղծեն համապատասխան տրամադրություն:
- Տոնական տրամադրություն ստեղծելու համար ես կարող եմ ստեղծել տարբեր գործեր, որոնց մեջ կարող եմ ընտրել և օգտագործել համապատասխան գեղարվեստական միջոցներ, մեթոդներ, նյութ և տեխնիկա:

1. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություններ. միջոցներ

Գիծ (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, զիգզագ, կոր, գալարագիծ, հորիզոնական, ուղղահայաց, անկյունագիծ):

Ձև (երկրաչափական և բնական):

2. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան

Ենթահասկացություն. նկարել, կառուցքավորում, մոդելավորում, ապլիկացիա, համակարգչային նկարչական ծրագիր:

3. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի բնագավառներ

Ենթահասկացություն. կիրառական արվեստ

Հարցը. Արվեստն օգնում է մեզ ստեղծել տոնական միջավայր:

Հանգուցային հարցեր.

- Ինչպես ստեղծեմ արվեստի տարբեր բնագավառների նմուշներ, որպեսզի գեղեցկացնեմ իմ ու իմ մերձավորների միջավայրը և տոնական տրամադրություն ստեղծեմ:
- Ինչպես ընտրեմ և օգտագործեմ համապատասխան գեղարվեստական պատկերավորման միջոցներ, նյութ և տեխնիկա, որպեսզի գեղեցկացնեմ շրջակա միջավայրը:

Համալիր առաջադրանքի պայմանը.

Պատրաստի՛ր ամանորյա զարդարանքներ՝ դրասանգ, տոնածառի խաղալիք և այլն:

Օգտագործի՛ր տարբեր նյութեր (կոներ, ճյուղեր, տերևներ, գունավոր թղթեր, ստվարաթուղթ, պլաստիլին, կավ կամ ծեփելու խմոր, ժապավեններ, ուլունքներ, կոճակներ) և **տեխնիկա** (նկարել, ապլիկացիա, կառուցքավորում, ծեփակերտում):

Աշխատանքին տո՛ւր երկրաչափական կամ բնության մեջ գոյություն ունեցող **ձև**:

Գեղեցկացրո՛ւ պատրաստվածքը տարբեր տեսակի **գծերով** (ուղիղ, զիգզագ, ալիքաձև, ընդհատվող և այլն):

Քո և քո ընկերների կողմից պատրաստված զարդարանքներով գեղեցկացրե՛ք դպրոցի միջավայրը՝ միջանցքը կամ դասասենյակը:

Նպատակային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ Աշակերտը պետք է գիտակցի, որ	**Գնահատման չափանիշներ (Որոշակի համալիր ակտիվության համապատասխանեցված)** Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.
1. Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները ● Ասելիքը (պատմություն, զգացմունք, գաղափար, տպավորություն, տրամադրություն, դիտարկման արդյունքներ), գեղարվեստական մտահղացումը փոխանցելու համար մարդը կիրառում է արվեստի լեզուն կամ կերպարվեստի տարրերը (գույն, գիծ, ձև) և սկզբունքները (օրինակ՝ ռիթմ, հիմնականի ընդգծում, հակադրություն և այլն)։ **2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան** ● Մարդիկ արվեստի գործ ստեղծելու համար օգտագործում են տարբեր նյութեր և տեխնիկա։ **3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ** ● Արվեստի բաժանումը տարբեր բնագավառների պայմանավորված է օգտագործված նյութով, տեխնիկայով, նպատակով։ ● Կերպարվեստի և կիրառական արվեստի յուրաքանչյուր բնագավառին բնորոշ է որևէ գեղարվեստական տարր։ ● Կերպարվեստի ստեղծագործությունները ստեղծվում են կերպարվեստի տարրերի և սկզբունքների հիման վրա, չնայած որ ցանկացած տարր ավելի կոնկրետ է յուրաքանչյուր բնագավառի համար։ **4. Կերպարվեստի ժանրերը** ● Արվեստը ժանրերի է բաժանվում՝ ըստ արտացոլված բովանդակության։	● Ի՞նչ ես պատրաստել։ ● Ի՞նչ նյութ և տեխնիկա ես օգտագործել զարդարանքներ պատրաստելու համար։ ● Ի՞նչ ձևեր ես օգտագործել։ ● Ինչո՞վ ես գեղեցկացրել աշխատանքդ։ ● Ինչի՞ համար ես օգտագործել գիծը։ ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում

Քննարկվելիք քեյսեր համալիր առաջադրանքի իրականացման համար.

Այն ամենը, ինչ մեր շուրջն է, մեր շրջակա միջավայրն է:

Մարդը գեղեցկացրել ու իր մտածողությանը համապատասխան կարգավորել է իր միջավայրը:

Ինչո՞վ և ինչպե՞ս է արվեստը զարդարում շրջակա միջավայրը:

- Դու նույնպես կարող ես գեղեցկացնել քո միջավայրը:
- Ինչպե՞ս են մարդիկ պատրաստվում տոնի համար:
- Ինչո՞ւմ է նրանց օգնում արվեստը:
- Ինչպե՞ս եք դուք պատրաստվում Ամանորին:
- Դուք պատրաստե՞լ եք ամանորյա նվերներ և զարդարանքներ:

Ռեսուրսներ համալիր առաջադրանքի իրականացման համար.

Ժոան Միրոյի, Սալվադոր Դալիի, Պաբլո Պիկասոյի, Էնդի Ուորհոլի, Պիտ Մոնդրիանի, Վասիլի Կանդինսկիի գործերը:

Տեսառեսուրս, ձյան փաթիլ պատրաստելու տեխնիկա.

https://www.youtube.com/watch?v=p6XmvKvgU_k;

Ամանորյա շնորհավորական բացիկի տեսառեսուրսներ.

https://www.youtube.com/watch?v=EYAlTYqAKQg;

https://www.youtube.com/watch?v=EYAlTYqAKQg;

https://www.youtube.com/watch?v=8NsxFZPTdBg;

https://www.youtube.com/watch?v=ASIPJeZaUNo;

https://www.youtube.com/watch?v=cA48nTVoDUw;

Համալիր առաջադրանքի ըմբռնմանը միտված հարցեր.

- Ինչպե՞ս ենք գեղեցկացնում միջավայրը Ամանորի համար:
- Ինչպե՞ս կարելի է ամանորյա տրամադրություն ստեղծել արվեստի միջոցով:
- Ի՞նչ զարդարանքներ կան:
- Ի՞նչ նյութերով և տեխնիկայով կարելի է զարդարանքներ պատրաստել:

Փուլ 2. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա

«Զմեռ պապի արվեստանոցը» (Դասեր 20-26)

Քայլ 1. (Դաս 20)

20. Ամանորն է գալիս:

Աշխարհի տարբեր երկրների ամանորյա զարդարանքների ավանդույթների ծանոթացում:

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները: **Ենթահասկացություն**. դեկորատիվ-կիրառական արվեստ:

Ռեսուրսներ. դասագիրք, ամանորյա զարդարանքի լուսանկարներ

Գաղափարներ ակտիվության համար.

Մոտիվացիոն զրույց.

Ո՞վ է ամենաշատը ուրախանում Ամանորը գալու համար:

Իհարկե՛, երեխաները:

Սա արձակուրդների, անակնկալների, նվերների, զվարճանքի ժամանակ է։

Ամենուր տոնական տրամադրություն է, բոլորն ուրախ են։

Զարդարում ենք տոնածառը։ Մեր շուրջը զարդարում ենք լամպերով, դրասանգներով։

Ամբողջ աշխարհը նշում է Ամանորի տոնը։ Տարբեր մարդիկ տարբեր կերպ են նշում այն և իրենց շրջապատն էլ տարբեր կերպ զարդարում։

Աշխարհի երկրների մեծ մասում Ամանորը դիմավորում են զարդարված տոնածառով։

Վրաստանում Ամանորը նշում ենք տոնածառով ու չիչիլակով։

Հնդկաստանում, որտեղ եղևնիներ չեն աճում, խաղալիքներով զարդարում են ադամաթզենին։

Հույները տոնածառը զարդարում էին նռով։ Դանիայում տոնածառի վրա թղթե սրտեր են կախում, իսկ Ֆրանսիայում՝ խնձորներ։ Չինացիները Ամանորը դիմավորում են կարմիր լապտերներով ու թղթե վիշապներով։

Ճապոնացիները օրիգամիով դեկորացիաներ են պատրաստում։

Եվրոպական շատ երկրներում տան դռան վրա եղևնու ճյուղի ծաղկեպսակ են կախում, ինչը նշանակում է, որ այստեղ ուրախ են հյուր ընդունելու համար։

Ակտիվություն 1. Պատասխանի՛ր

Դու ինչպե՞ս ես պատրաստվում տոնին։

Տոնի համար ինչպե՞ս ես զարդարում միջավայրը։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, նկարել

Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ։

Մտածի՛ր և նկարի՛ր տարօրինակ իրերով զարդարված տոնածառ։

- Ինչպիսի՞ տոնածառ ես նկարել։
- Ինչո՞վ է տարօրինակ քո տոնածառը։
- Ինչպիսի՞ ձևեր և գծեր ես օգտագործել։

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ինչպե՞ս եք պատրաստվում Ամանորին։
- Դուք պատրաստե՞լ եք ամանորյա նվերներ և զարդարանքներ ձեր մերձավորների համար։
- Ի՞նչ նյութ եք օգտագործել դրա համար։

Քայլ 2. (Դասեր 21, 22)

21. Զվարճալի ձևեր

Ծանոթանալ երկրաչափական պատկերներին և դրանք ճանաչել շրջակա միջավայրում։

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություններ**. ձև (երկրաչափական), գիծ (տարբեր տեսակի)։ Գույն։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություններ**. նկարել, ապլիկացիա։

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություններ**. նկարչություն, դեկորատիվ-կիրառական արվեստ։

Ռեսուրսներ. դասագիրք

*Այս և հաջորդ դասերին տրված երկրաչափական պատկերների անվանումներին պետք է տիրապետել ոչ թե մեկ դասի ընթացքում, այլ ամբողջ թեմայի ուսումնասիրության ընթացքում:

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Ձմեռ պապի արվեստանոցում հատուկ նախապատրաստություն է՝ չէ՞ որ այստեղ են Ամանորի նվերներ ու տոնածառի խաղալիքներ պատրաստվում:

Իսկ դու գիտեի՞ր, որ տոնածառի խաղալիքներ պատրաստելը արվեստ է:

Այս արվեստը կոչվում է կիրառական արվեստ:

Կիրառական արվեստի նմուշներ են այն բոլոր գեղեցիկ իրերը, որոնք մարդիկ օգտագործում են կյանքում:

Դուք էլ կարող եք ամանորյա զարդարանքներ պատրաստել և գեղեցկացնել ձեր դպրոցական միջավայրը: Դրա համար մեզ անհրաժեշտ կլինեն տարբեր ձևեր:

Այսօր դուք կծանոթանաք երկրաչափական ձևերին:

Յուրաքանչյուր երկրաչափական ձև ունի իր անունը:

Քառակուսին, շրջանը, եռանկյունին, քառանկյունին, հնգանկյունին, օվալը, աստղը երկրաչափական պատկերներ են:

Շատ առարկաներում դուք կճանաչեք երկրաչափական ձևեր:

Ակտիվություն 1, 2. Երկրաչափական պատկերների ճանաչում առարկաների ձևերում

- Ի՞նչ ես տեսնում:
- Ո՞ր երկրաչափական ձևերն ես ճանաչել այս առարկաներում:
- Լուսանկարը համապատասխանեցրո՛ւ համապատասխան ձևի հետ, անուն տո՛ւր:

Պատասխան. Նվերների տուփն ունի քառակուսու ձև, ձյան փաթիլը՝ աստղի, տոնածառի զարդարման գնդակը նման է շրջանակի, Ձմեռ պապի նկարը բաղկացած է երեք շրջանից, պսակն օվալաձև է, տոնածառը եռանկյունաձև է, տունը նման է հնգանկյունու:

* Երկրորդ ակտիվության ընթացքում աշակերտները պետք է նկարը զույգեն համապատասխան ուրվագծային նկարի հետ:

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, վարժություն

Անհրաժեշտ նյութեր. նկարչության թերթ կամ բարակ ստվարաթուղթ, ներկեր և նշիչներ, մկրատ, քուղ:

- Նկարի՛ր տոնածառի խաղալիք:
- Կտրի՛ր-հանի՛ր նկարը:
- Գունավորի՛ր երկու կողմերից:
- Զարդանկարի՛ր գծերով:

- Նրան կախիչ կպցրո՛ւ։
- Կախի՛ր խաղալիքը տոնածառի վրա։

22. Արվեստանոց

Ռեսուրսներ. դասագիրք, Պիտ Մոնդրիանի և Վասիլի Կանդինսկու ստեղծագործությունները։

Գաղափարներ ակտիվությունների համար.

Ակտիվություն 1. Նկարազարդման դիտարկում, դատողություն երկրաչափական պատկերների մասին

Ուշադիր դիտի՛ր Պիտ Մոնդրիանի նկարը.

- Ի՞նչ գույներ և ինչպիսի՞ գծեր ես տեսնում։
- Ի՞նչ ձևեր են նկարած գծերով։
- Այս ձևերը երկրաչափակա՞ն են, թե՞ բնական։

Պատասխան. Պիտ Մոնդրիանի նկարն ունի հիմնական գույներ, քառանկյուն երկրաչափական ձևեր։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, ըստ Պիտ Մոնդրիանի գործի տոնածառի խաղալիքի պատրաստում (միջանկյալ)

Անհրաժեշտ նյութեր. ստվարաթղթի կտորներ, նշիչներ կամ գուաշի ներկեր, մկրատ, քուղ։

Պատրաստի՛ր տոնածառի գնդակներ.

- Կտրի՛ր-հանի՛ր ստվարաթղթե շրջան։
- Ներսում ուղղանկյուններ նկարի՛ր։
- Շրջանը երկու կողմերից գունավորի՛ր հիմնական գույներով։
- Խաղալիքին կախիչ կպցրո՛ւ։

Ի՞նչ այլ ձևի խաղալիք կպատրաստես։

Ցույց տո՛ւր խաղալիքը ընկերներիդ ու նրանց պատմի՛ր։

- Ի՞նչ արեցիր։
- Ի՞նչ ձև ես կտրել։
- Ի՞նչ ձևեր ես նկարել ներսում։
- Սրանք երկրաչափակա՞ն ձևեր են, թե՞ բնական։
- Ի՞նչ գույներով ես գունավորել։
- Ինչպե՞ս ենք անվանում նման գույները։
- Ինչո՞ւ են դրանք կոչվում հիմնական գույներ։
- Ինչո՞վ օգնեցին քեզ գծերը։
- Ի՞նչը լավ ստացվեց քեզ մոտ։
- Ի՞նչը կփոխեիր։

Ակտիվություն 3. Նկարազարդման դիտարկում (Վասիլի Կանդինսկի), գործնական աշխատանք

Անհրաժեշտ նյութեր. նկարչության թերթ կամ բարակ ստվարաթուղթ, գունավոր մատիտներ կամ նշիչներ, մկրատ, քուղ կամ ժապավեն՝ կախիչի համար։

- Ի՞նչ ձևեր ես տեսնում։
- Ո՞րն է նման տոնածառի։
- Ո՞րն է նման մարդու։

Եռանկյունի ձևերով նկարի՛ր մարդ կամ տոնածառ
Կտրի՛ր-հանի՛ր նկարը և նրան կախիչ ամրացրո՛ւ:

Ակտիվություն 4. Նկարազարդման դիտարկում (Վասիլի Կանդինսկի), գործնական աշխատանք.
Անհրաժեշտ նյութեր. նկարչության թերթ կամ բարակ ստվարաթուղթ, գունավոր մատիտներ կամ նշիչներ, մկրատ, քուղ կամ ժապավեն՝ կախիչի համար:

- Պատրաստի՛ր Կանդինսկու շրջանների նման խաղալիք:
- Կտրի՛ր-հանի՛ր տարբեր չափերի գունավոր շրջաններ: Սոսնձի՛ր շրջաններն իրար:
- Խաղալիքին կախիչ ամրացրո՛ւ:

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ սովորեցիր պատրաստել:
- Ինչո՞վ են քեզ օգնել նկարիչների աշխատանքները:
- Վերանայի՛ր դասագիրքը: Նկարչության ո՞ր նմուշը քեզ գաղափար կտա նոր զարդարանք պատրաստելու համար:

Քայլ 3. (Դաս 23)
23. Թվային նկար
Համակարգչային նկարչական ծրագրով երկրաչափական պատկերներ նկարել
Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություններ**. ձև (երկրաչափական), գիծ (տարբեր տեսակի):
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. համակարգչային նկարչական ծրագիր

Ռեսուրսներ. դասագիրք, Աշակերտի բուկի:
Գաղափարներ ակտիվության համար.
Ակտիվություն 1. Գործնական աշխատանք, թվային աշխատանք.
*Տարբերակված ուսուցման նպատակով կամ բուկի բացակայության դեպքում այս ակտիվությունը կարող է իրականացվել թերթի վրա, մատիտներով կամ նշիչներով:
Համակարգչային նկարչական ծրագրում երկրաչափական ձևերով նկարի՛ր տոնածառի խաղալիքներ.

- «Ձև» գործիքով նկարի՛ր երկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն, օվալ, քառանկյուն:
- «Ներկ լցնել» գործիքով գունավորի՛ր ձևերը հիմնական գույներով:
- «Վրձին» գործիքով գեղեցկացրո՛ւ ձևերը տարբեր գծերով:
- Հենց «վրձնով» խաղալիքների վրա նկարի՛ր կախիչներ:



Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ սովորեցիր:
- Ի՞նչ ձևեր ես նկարել:
- Ինչպիսի՞ գծեր ես օգտագործել ձևերը գեղեցկացնելու համար:

Քայլ 4. (Դաս 24)

24. Ամանորյա զարդարանքներ

Երկրաչափական ձևերով զարդարանքների պատրաստում

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. ձև (երկրաչափական):
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. կառուցքավորում:
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. դեկորատիվ-կիրառական արվեստ:

Ռեսուրսներ. դասագիրք

Տեսառեսուրս. ձյան փաթիլ պատրաստելու տեխնիկա. https://www.youtube.com/watch?v=p6XmvKvgU_k;

Գաղափարներ ակտիվության համար.

Մոտիվացիոն զրույց, նախապես ունեցած գիտելիքների ակտիվացում.

- Դիտարկի՛ր դասագրքում տրված նմուշները:
- Ինչպե՞ս կարելի է նման զարդարանքներ պատրաստել:
- Ի՞նչ ձևեր կօգտագործես և ինչո՞ւ:
- Ի՞նչ նյութ կպահանջվի:
- Ինչպե՞ս կամրացնես առանձին մասերը:
- Ինչի՞ համար անհրաժեշտ կլինեն նմանատիպ զարդարանքները:

Ակտիվություն 1. Գործնական աշխատանք, դրասանգ (խմբակային).

*Տարբերակված ուսուցման նպատակով հնարավոր է տարբեր կարողություններով աշակերտներին հանձնարարել պատրաստել տարբեր տեսակի դրասանգներ:

Անհրաժեշտ նյութ. գունավոր թղթի շերտեր, քուղ, սոսինձ, մկրատ:

Թղթե շերտերով և երկրաչափական ձևերով պատրաստի՛ր ամանորյա դրասանգներ.

1. Գունավոր թուղթը ծալի՛ր երկու կեսի և կտրի՛ր-հանի՛ր տարբեր երկրաչափական ձևեր (եռանկյուն, քառանկյուն)։ Ձևերը դասավորի՛ր մեկ շարքով։ Յուրաքանչյուր ձևի վրա սոսինձ քսի՛ր։ Վրան դի՛ր քուղը և դրան սոսնձի՛ր ձևի երկրորդ կեսը։

2. Գունավոր թղթերը կտրատի՛ր նեղ շերտերի։ Շերտերի մի մասը կապի՛ր աղեղի նման և ծայրերն իրար սոսնձի՛ր։ Մատներով ծալի՛ր աղեղները և նրանց տո՛ւր ցանկալի (եռանկյուն, քառանկյուն և այլն) ձև։ Յուրաքանչյուր երկու աղեղի մեջ անցկացրո՛ւ մեկ այլ գույնի թղթի շերտ և նրա ծայրերը սոսնձի՛ր իրար։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք (խմբային)

*Տարբերակված ուսուցման նպատակով հնարավոր է անձեռոցիկների ծալերը և կտրել-հանելու դետալների քանակը փոփոխել։

Անհրաժեշտ նյութեր. սպիտակ թուղթ և/կամ անձեռոցիկներ, մատիտ, մկրատ։

Զարդարե՛ք դասասենյակը ձյան փաթիլների դրասանգով։

1.
2.
3.
4.
5.
6.

Ըստ նմուշի ձյան փաթիլներ պատրաստե՛ք.

- Մի քանի տակ ծալե՛ք թղթե անձրևոցիկը (1, 2, 3)։
- Անձեռոցիկի ծալված եզրերին մատիտով նշե՛ք կտրել-հանելու տեղերը (4)։
- Կտրե՛ք նշված դետալները (5)։
- Բացե՛ք անձեռոցիկը և փաթիլները միացրե՛ք իրար։

Ակտիվություն 3. Տոնածառի ուլունքներ, գործնական աշխատանք (խմբային)

Անհրաժեշտ նյութեր. գունավոր ամսագրեր, գունավոր թուղթ, մկրատ, թղթի սոսինձ, քուղ։

- Գունավոր թերթերը կտրի՛ր եռանկյունաձև շերտերի։
- Լայն ծայրից սկսելով՝ շերտերը փաթաթի՛ր փայտյա ձողիկի վրա։
- Ծայրը կպցրո՛ւ։
- Քաշի՛ր-հանի՛ր ձողիկը։
- Ուլունքները շարի՛ր քուղի վրա։

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ սովորեցիր նորը։
- Ի՞նչ տարբեր ձևերի զարդարանքներ ես պատրաստել։
- Ուրիշ ի՞նչ կարող ես պատրաստել նման կերպ։

Քայլ 5 (Դաս 25)

25. Տոնածառ

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող)։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. ապլիկացիա, կառուցքավորում։

Ռեսուրսներ. դասագիրք

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

Ամանորին շատ եղևնիներ են հատվում միայն այն պատճառով, որ մի քանի շաբաթով մեր միջավայրը գեղեցկացնեն։

Ի՞նչ է պատահում կտրված ծառերին։ Դրանք չորանում են։ Չոր փայտը դեն են նետում։ Մենք տեսել ենք, թե որքան գեղեցիկ են անտառով պատած լեռները։

Մի՞թե ափսոս չէ, որ ոչնչացնում ենք այսպիսի գեղեցկության կյանքը։ Պատկերացրե՛ք, եթե այսպես շարունակվի, անտառները կհատվեն, սկյուռներն ու փայտփորիկները տուն չեն ունենա, իսկ մենք՝ մաքուր օդ։

Մենք կարող ենք հոգ տանել բնության մասին և մեր ձեռքերով գեղեցիկ տոնածառեր պատրաստել։ Եկե՛ք ահա այստեղ՝ դասասենյակում, գունավոր թղթերով, ապլիկացիայի տեխնիկայով պատրաստած զվարճալի տոնածառեր «տնկենք»։

- Ի՞նչ է նշանակում ապլիկացիա։ (սոսնձել, ամրացնել)
- Ի՞նչ ձև ունի տոնածառը։ (եռանկյուն)
- Քանի՞ անկյուն ունի եռանկյունը։ (երեք)
- Քանի՞ կողմ ունի եռանկյունը։ (երեք)
- Եռանկյունաձև ձևերով կարող եք պատրաստել տարբեր տեսակի տոնածառեր։

Ակտիվություն 1. Սեղանին դնելու թղթե տոնածառ, գործնական աշխատանք (խմբային)

* Աշակերտների հմտությունների նախատեսմամբ՝ տոնածառի կողքերը կարելի է ուղիղ կտրել, առանց հատած ներս թափանցած մասերի։

Ինչպես նաև, ուսուցիչը կարող է աշակերտներին բաժանել տոնածառի ձևվածքներ, որոնք աշակերտները կեզրագծեն և այդպես կկտրեն-կհանեն։

Անհրաժեշտ նյութեր. երեք հատ կանաչ գույնի թուղթ, այլ գույների գունավոր թղթերի կտորտանք, հասարակ մատիտ, մկրատ, չոր սոսինձ։

Ըստ նմուշի պատրաստի՛ր սեղանի վրա դնելու թղթից տոնածառ։

- Երեք հատ կանաչ գույնի ուղղանկյունաձև թղթերը ծալի՛ր մեջտեղից երկայնքով։

- Ծալված տեղից դեպի եզրը նկարի՛ր տոնածառի կեսը։
- Կտրի՛ր բոլոր երեք ձևվածքները գծի երկայնքով։
- Բացի՛ր կտրված ձևվածքները։
- Յուրաքանչյուրի մի կողմին սոսինձ քսի՛ր։
- Երկու ձևվածքների մեկական կողմը սոսնձի՛ր իրար։
- Տոնածառին սոսնձի՛ր գունավոր թղթերի մնացորդներից կտրված սիսեռանախշեր։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք (խմբային)

Անհրաժեշտ նյութեր. գունավոր թուղթ, մկրատ, թղթի սոսինձ, կպչուն ժապավեն, մեծ չափի ֆորմատ։

Ընկերներիդ հետ մեծ տոնածառ պատրաստի՛ր։

- Գունավոր թերթերի վրա շրջագծե՛ք ձեր ձեռքի ափերը։
- Կտրե՛ք-հանե՛ք և դրանք իրար սոսնձեք այնպես, ինչպես ցույց է տրված նմուշում։
- Սկսե՛ք սոսնձել ներքևի շարքից։
- Որքան շատ դրոշմվածք կտրեք, այնքան ավելի մեծ և փարթամ կստացվի տոնածառը։

Ակտիվություն 3. Դատողություն, գործնական աշխատանք.

* Այս ակտիվությունների նպատակն այն է, որ աշակերտն ինքը կռահի, թե ինչպես, ինչ նյութով և հերթականությամբ են պատրաստվում դասագրքում ցույց տրված պատրաստվածքները։

- Ուշադիր դիտարկե՛ք յուրաքանչյուր նմուշ և ենթադրությո՛ւն արտահայտեք, թե ինչ եղանակներով կարելի է պատրաստել նմանատիպ պատրաստվածք։
- Ի՞նչ նյութեր և գործիքներ կպահանջվեն։

Անհրաժեշտ նյութ.

1. Կանաչ թուղթ, լվացքի ամրակներ, կոճակներ կամ թղթյա սիսեռանախշեր, մկրատ, սոսինձ:

2. Մեկանգամյա օգտագործման ափսե, գունավոր թղթեր, մկրատ, կանաչ գուաշի ներկ, նշիչ, թել:

3. Ստվարաթղթի եռանկյունաձև կտորներ, գունավոր թղթեր, հասարակ մատիտ, քանոն, մկրատ, սոսինձ:

Կանաչ թուղթ, լվացքի ամրակներ, կոճակներ կամ թղթյա սիսեռանախշեր, մկրատ, սոսինձ:

1.

2.

3.

- Գունավոր թղթի վրա (լայնակի) մատիտով և քանոնով գծի՛ր զոլեր և կտրի՛ր-հանի՛ր:
- Սոսինձ քսի՛ր ստվարաթղթե եռանկյունու վրա: Ստվարաթղթի վրա սոսնձի՛ր (լայնակի) գունավոր թղթի շերտեր:
- Երբ եռանկյունու ձևը կծածկվի շերտերով, կտրե՛ք-հեռացրե՛ք ավելորդ մասերը:
- Ստվարաթղթե մնացորդներից տակդիրի համար կտրի՛ր-հանի՛ր մի փոքրիկ եռանկյունի:
- Տակդիրի վրա կտրվածք արա՛ մինչև կեսը: Կտրվածքի մեջ ամրացրո՛ւ տոնածառը:
- Տոնածառի հետևի մասում գրի՛ր քո անունը:

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ սովորեցիր նորը:
- Ի՞նչ ձև ունի քո ձեռքով պատրաստած իրը:
- Ի՞նչ եղանակով ստացար այսպիսի ձև:
- Ինչպե՞ս է կոչվում այս տեխնիկան:
- Ուրիշ ի՞նչ կարող եք անել նման կերպ:

Քայլ 6. (Դաս 26)

26. Շնորհավորական բացիկ

Ոչ ավանդական տեխնիկայի ծանոթացում

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գիծ (տարբեր տեսակի), գույն, ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող)։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան՝ **ենթահասկացություն**. նկարել։

Ռեսուրսներ. դասագիրք, Սալվադոր Դալիի, Պաբլո Պիկասոյի, Էնդի Ուորհոլի, Ալեքսանդր Քոլդերի կողմից նկարված ամանորյա շնորհավորական բացիկներ։

Տեսառեսուրսներ.

https://www.youtube.com/watch?v=EYAlTYqAKQg;

https://www.youtube.com/watch?v=EYAlTYqAKQg;

https://www.youtube.com/watch?v=8NsxFZPTdBg;

https://www.youtube.com/watch?v=ASIPJeZaUNo;

https://www.youtube.com/watch?v=cA48nTVoDUw;

Գաղափարներ ակտիվությունների համար.

Մոտիվացիոն զրույց.

- Դուք պատրաստե՞լ եք շնորհավորական բացիկ։
- Ի՞նչ կարող ենք նկարել Ամանորի բացիկի վրա (Ձմեռ պապ, տոնածառ, զանգ, ձյան փաթիլ...)։

Ուշադիր դիտի՛ր նկարները։

Սրանք նկարիչների կողմից ստեղծված շնորհավորական բացիկներ են։

- Ի՞նչ են նկարել նկարիչները։
- Ի՞նչ եք նկարելու ձեր ընկերների համար։

Ակտիվություն 1. Գործնական աշխատանք, շնորհավորական բացիկ նկարել

Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ։

Նկարի՛ր ամանորյա շնորհավորական բացիկներ քո ընկերների համար։

- Մտածի՛ր, թե ում համար ես բացիկ նկարելու։
- Ի՞նչ ես նկարելու բացիկի վրա։
- Ի՞նչ կավելացնես բացիկի վրա։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, շնորհավորական բացիկ նկարել

Անհրաժեշտ նյութ. հաստ թուղթ, գուաշի ներկեր, հասարակ մատիտ, վրձին, սև նշիչ։

Նկարի՛ր տոնածառ գունավոր ձևերով և սև շերտերով.

- Թերթի մեջտեղում հասարակ մատիտով նկարի՛ր եռանկյունաձև պատկեր։
- Եռանկյան ներսում մատիտով երկայնակի և լայնակի տար ուղիղ գծեր։
- Գունավորի՛ր որոշ վանդակներ հիմնական գույներով։
- Երբ ներկը չորանա, սև նշիչով անցի՛ր գծերի վրայով։

Ակտիվություն 3. Դատողություն, գործնական աշխատանք, ոչ ավանդական տեխնիկա։

Անհրաժեշտ նյութեր. սպիտակ և գունավոր թղթեր, գուաշի ներկեր, բամբակով փայտիկներ, մկրատ, սոսինձ։

Նայի՛ր նմուշներին.

- Ինչպիսի՞ եղանակով է նկարված տոնածառերով բացիկը։

Պատասխան. Տոնածառի շուրջ դրված մատների դրոշմերով։

- Ինչո՞վ ես նկարելու Ձմեռ պապին։ (մատների դրոշմերով)։
- Ինչպե՞ս կնկարես եղևնու փշատերևները։ (ներկոտ պատառաքաղով)։

III փուլ. Համալիր առաջադրանքի կատարում և ներկայացում (ի՞նչ սովորեցի):

Պատրաստի՛ր ամանորյա զարդարանքներ. դրասանգ, տոնածառի խաղալիք և այլն:

- Օգտագործի՛ր տարբեր նյութեր (կոներ, ճյուղեր, տերևներ, գունավոր թղթեր, ստվարաթուղթ, պլաստիլին, կավ կամ ծեփելու խմոր, ժապավեններ, ուլունքներ, կոճակներ) և տեխնիկա (գեղանկարչություն, ապլիկացիա, կառուցքավորում, ծեփակերտում):
- Աշխատանքին տուր երկրաչափական պատկերի կամ բնության մեջ գոյություն ունեցող ձև:
- Պատրաստվածքը գեղեցկացրո՛ւ տարբեր տեսակի գծերով (ուղիղ, զիգզագ, ալիքաձև, ընդհատվող և այլն):

Գեղեցկացրե՛ք քո և քո ընկերների կողմից պատրաստված զարդարանքներով դպրոցի միջավայրը՝ միջանցքը կամ դասասենյակը:

Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.

- Ի՞նչ ես պատրաստել:
- Ի՞նչ նյութ և տեխնիկա ես օգտագործել զարդարանք ստեղծելու համար:
- Ինչպիսի՞ ձևեր ես օգտագործել :
- Ինչո՞վ ես գեղեցկացրել զարդարանքը:
- Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում:
- Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր առաջադրանքի վրա աշխատանքը:

Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման խորագրեր.

1. Ապրե՛ս:
   Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Քո ստեղծած աշխատանքը գեղեցկացնում է դպրոցական միջավայրը և ստեղծում տոնական տրամադրություն: Դու օգտագործել ես տարբեր նյութեր և տեխնիկա: Երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող ձևերի համադրությամբ դու ստեղծել ես հետաքրքիր աշխատանք: Զևավորել ես այն տարբեր տեսակի գծերով: Ներկայացնելիս ճիշտ ես օգտագործել տերմիններ:

2. Լավ աշխատանք է:
   Քո զարդարանքը գեղեցկացնում է դպրոցական միջավայրը: Դու կարող էիր օգտագործել ավելի համապատասխան նյութ: Դու արդեն գիտես, թե ինչպես ճանաչել երկրաչափական պատկերները և բնության մեջ գոյություն ունեցող ձևերը: Դու կարող էիր աշխատանքդ ձևավորել տարբեր տեսակի գծերով: Դո արդեն հասկանում ես որոշ տերմինների իմաստը, կարող էիր օգտագործել դրանք ներկայացնելու ժամանակ:

Թեմա 2. Համալիր առաջադրանքի գնահատում՝ ըստ SOLO (ՈՒԴԱԿ) տաքսոնոմիայի

<table>
<tr><td colspan="2">

Թեմատիկ բաժին . Արվեստը մեր շուրջը

Թեմա. Ձմեռ պապի արվեստանոցը

Աշակերտի անուն, ազգանուն. ----------

Ամիս, ամսաթիվ, տարեթիվ. ----------

Նպատակային հասկացություն 1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություններ. ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող), տարբեր տեսակի գծեր

Նպատակային հասկացություն 2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա

Ենթահասկացություն. նկարել, ապլիկացիա, կառուցքավորում, մոդելավորում, ծեփակերտում

Նպատակային հասկացություն 3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները

Ենթահասկացություն. դեկորատիվ-կիրառական արվեստ:

</td></tr>
<tr><td colspan="2">

Համալիր առաջադրանքի պայմանը.

Պատրաստի՛ր ամանորյա զարդարանք. դրասանգ, տոնածառի խաղալիք և այլն:

Օգտագործի՛ր տարբեր նյութեր (կոներ, ճյուղեր, տերևներ, գունավոր թղթեր, ստվարաթուղթ, պլաստիլին, կավ կամ ծեփելու խմոր, ժապավեններ, ուլունքներ, կոճակներ) և **տեխնիկա** (նկարել, ապլիկացիա, կառուցքավորում, կերտում):

Աշխատանքին տուր երկրաչափական կամ բնության մեջ գոյություն ունեցող **ձև**:

Գեղեցկացրո՛ւ պատրաստվածքը տարբեր տեսակի **գծերով** (ուղիղ, զիգզագ, ալիքաձև, ընդհատվող և այլն):

Քո և քո ընկերների **կողմից պատրաստված** զարդարանքներով գեղեցկացրե՛ք դպրոցի միջավայրը՝ միջանցքը կամ դասասենյակը:

</td></tr>
<tr><td>

SOLO տաքսոնոմիայի մակարդակ. վերացական

Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Ենթադրություններ է արտահայտում: Ընդհանրացնում է գիտելիքը ինչպես տվյալ առարկայի կտրվածքում, այնպես էլ այլ ոլորտի հետ հարաբերության մեջ: Ունի նմանատիպ օրինակների հետ համեմատելու, վերլուծելու և գնահատելու ունակություն: Կարող է հարցը/երևույթը կապել անձնական փորձի հետ:

</td><td>

Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ գեղեցկացնում է դպրոցի միջավայրը և ստեղծում տոնական տրամադրություն: Զարդարանքները ստեղծելու համար գիտակցված և նպատակաուղղված օգտագործում է բազմաթիվ տարբեր տեսակի նյութեր և տեխնիկա: Աշխատանքի մեջ օգտագործում է բազմազան ձևերի (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող) համադրություն: Աշխատանքը ձևավորված է տարբեր տեսակի գծերով:

Աշխատանքը ներկայացնելիս ընդարձակ խոսում է իր մտահղացման և ստեղծագործական գործընթացի փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է տարբեր տերմիններ:

</td></tr>
</table>

SOLO տաքսոնոմիայի մակարդակ. հարաբերական Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է նրա մի քանի ասպեկտների միջև պատճառահետևանքային կապերը: Կարող է արտահայտել ենթադրություն, համեմատել, վերլուծել, գնահատել, օգտագործել տեսական գիտելիքը պրակտիկայում:	Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ գեղեցկացնում է դպրոցական միջավայրը և ստեղծում տոնական տրամադրություն: Աշխատանքը ստեղծելիս օգտագործում է համապատասխան նյութ և տեխնիկա, տարբեր ձևերի (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող) համադրություն: Աշխատանքը ձևավորում է գծերով: Շնորհանդեսի ժամանակ խոսում է ստեղծագործական գործընթացի հիմնական փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է մի քանի տերմիններ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. բազմակառուցվածքային Աշակերտն ունի պատկերացում հարցի/երևույթի մի քանի ասպեկտների մասին առանձին-առանձին, չի հասկանում նրանց միջև կապը: Կարող է նկարագրել, թվարկել, տեսակավորել, համադրել, մեթոդներ օգտագործել, իրականացնել ընթացակարգեր և այլն:	Զարդարանք ստեղծելու համար կիրառում է պատահական նյութ և տեխնիկա: Շատ քիչ է օգտագործում ձևեր (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող): Շնորհանդեսի ժամանակ ամբողջությամբ նկարագրում է իր աշխատանքը: Հասկանում է մի քանի տերմինի իմաստ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. ունիկառուցվածքային Աշակերտը քննարկում է հարցի/երևույթի միայն մեկ ասպեկտ: Տեսնում է պարզ, բացահայտ/հստակ կապերը: Հասկանում է միայն մի քանի տերմինի նշանակություն: Կարող է գիտելիքը բանավոր փոխանցել (հիշել), կատարել պարզ ցուցումներ, շրջասել, ճանաչել, անվանել կամ թվարկել:	Զարդարանք ստեղծելու համար կիրառում է անհամապատասխան նյութ և տեխնիկա: Շատ քիչ և չգիտակցված է օգտագործում ձևեր (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող): Շնորհանդեսի ժամանակ նկարագրում է իր աշխատանքի մի երկու տարր: Հասկանում է մի քանի տերմինի իմաստ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. նախակառուցվածքային Աշակերտը չի ըմբռնում հարցը, կիրառում է ոչ համապատասխան տեղեկություններ կամ ընդհանրապես հեռանում է հարցից:	Աշխատանքը չի համապատասխանում առաջադրանքի պայմանին:

ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱ 4

Թեմատիկ բաժին 1. Ես և շրջակա միջավայրը

Թեմա. Բնությունն իմ շուրջը (Դասեր 27-33) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 6+2

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ (ընդհանրացումներ թեմայի շրջանակներում)

- Շրջակա միջավայրից ստացած տպավորություններն ու գաղափարները կարող եմ արտահայտել տարբեր ոլորտների և ժանրերի աշխատությունների մեջ։
- Շրջակա միջավայրի նկատմամբ իմ վերաբերմունքը, գաղափարները կամ շրջակա միջավայրից ստացած տպավորությունները կարող եմ փոխանցել տարբեր պատկերավորման միջոցներով, մեթոդներով, նյութերով ու տեխնիկայով։

1. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություններ. միջոցներ։

Ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող)։

Գիծ (տարբեր տեսակի՝ ուղիղ, ալիքաձև, ընդհատվող, կոր, հաստ, բարակ)։

Գույն (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ)։

Եղանակները. աշխատության մեջ պատկերի բաշխում, ուղղահայաց և հորիզոնական ձևաչափի ընտրություն։

2. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա

Ենթահասկացություն. խառը տեխնիկա (նկարել, ապլիկացիա)։

3. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի բնագավառներ

Ենթահասկացություն. նկարչություն։

Հարցը. Աշխատության մեջ բնության բազմազանության և գեղեցկության փոխանցում

Հանգուցային հարցեր.

- Ո՞ր բնագավառի և ժանրի աշխատության մեջ կարող եմ արտահայտել շրջակա միջավայրից ստացած տպավորություններս։
- Ի՞նչ պատկերավորման միջոցներ, եղանակներ, նյութ և տեխնիկա կօգնի ինձ բնության բազմազանությունը փոխանցելու հարցում։

Համալիր առաջադրանքի պայմանը.

Քո սիրելի **տեխնիկայով** ստեղծի՛ր **բնապատկեր։** Օգտագործի՛ր մտահղացմանը համապատասխան ձևեր (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող), **գույներ** (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ) և տարբեր տեսակի գծեր (ուղիղ, ալիքաձև, ընդհատվող, կոր, հաստ, բարակ)։

Նպատակային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ	**Գնահատման չափանիշներ (Որոշակի համալիր ակտիվության համապատասխանեցված)**
Աշակերտը պետք է գիտակցի, որ	Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.

1. Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները ● Ասելիքը (պատմություն, զգացմունք, գաղափար, տպավորություն, տրամադրություն, դիտարկման արդյունքներ), գեղարվեստական մտահղացումը փոխանցելու համար մարդը կիրառում է արվեստի լեզուն կամ կերպարվեստի տարրերը (գույն, գիծ, ձև) և սկզբունքները (օրինակ՝ ռիթմ, հիմնականի ընդգծում, հակադրություն և այլն)։ **2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան** ● Մարդիկ արվեստի գործ ստեղծելու համար օգտագործում են տարբեր նյութեր և տեխնիկա։ **3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ** ● Արվեստի բաժանումը տարբեր բնագավառների պայմանավորված է օգտագործված նյութով, տեխնիկայով, նպատակով։ ● Կերպարվեստի և կիրառական արվեստի յուրաքանչյուր բնագավառին բնորոշ է որևէ գեղարվեստական տարր։ ● Կերպարվեստի ստեղծագործությունները ստեղծվում են կերպարվեստի տարրերի և սկզբունքների հիման վրա, չնայած որ ցանկացած տարր ավելի կոնկրետ է յուրաքանչյուր բնագավառի համար։ **4. Կերպարվեստի ժանրերը** ● Արվեստը ժանրերի է բաժանվում՝ ըստ արտացոլված բովանդակության։	● Ի՞նչ ես պատրաստել։ ● Ի՞նչ նյութ և տեխնիկա ես օգտագործել բնապատկեր պատրաստելու համար։ ● Ինչպե՞ս ես օգտագործել տարբեր տեսակի գծերը, ձևերը և գույները բնապատկեր փոխանցելու համար։ ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)
I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում

Քննարկվելիք քեյսեր համալիր առաջադրանքի իրականացման համար.
Լեռ, ծով, անտառ ու դաշտ, ավազոտ ու սառցե անապատ... սա մեր մոլորակն է։
Բնությունը միշտ փոխվում է։
Բնությունը բազմազան է։ Յուրաքանչյուր արվեստագետ յուրովի է փոխանցում այս բազմազանությունը։
Դիտարկե՞լ ես բնությանը։
Գիտե՞ս, թե ինչ է բնապատկերը։

Ռեսուրսներ համալիր առաջադրանքի իրականացման համար.
Դասագիրք. դասեր
Նկարազարդումներ՝ տարբեր նկարիչների բնանկարներ՝ Անտոն Բալանչիվաձե, Գիորգի Միրզաշվիլի, Մարտիրոս Սարյան, Էլենե Ախվլեդիանի, Գոգի Չագելիշվիլի, Կլոդ Մոնե, Վինսենթ վան Գոգ, Լուիզ Բուրժուա, Ջոն Բեյթս, Դեյվիդ Հոքնի, Գուստավ Կլիմտ։

Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանն ուղղված հարցեր.
- Ինչպե՞ս է փոխվում բնությունը տարվա տարբեր եղանակներին։
- Ի՞նչ է տեղի ունենում գույների հետ այդ ժամանակ։
- Հիշի՛ր սարերը, ամպերը, ծառերը... ի՞նչ ձևեր ես հիշում։ Ուրիշ ի՞նչ ձևեր ես տեսնում բնության մեջ։
- Հիշի՛ր ալիքները, ծառերի ճյուղերը... ի՞նչ գծերով կնկարեիր դրանք։
- Ինչպե՞ս կարող ես քո աշխատանքում փոխանցել բնության բազմազանությունը։

II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի վրա
Քայլ 1. (Դասեր 27, 28)
27. Բնապատկեր
Բնապատկերի ժանրի ծանոթացում

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.
1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություններ**. գույն (հիմնական և բաղադրված, բաց և մուգ), գիծ (տարբեր տեսակի), ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող)։
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա՝ **ենթահասկացություն**. նկարել։
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։
4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. բնապատկեր։

Ռեսուրսներ. դասագիրք. Գիորգի Միրզաշվիլիի, Մարտիրոս Սարյանի, Անտոն Բալանչիվաձեի և Էլենե Ախվլեդիանիի բնապատկերները.

Գաղափարներ ակտիվության համար.
Մոտիվացիոն զրույց.
Բնությունը բազմազան է։ Յուրաքանչյուր մարդ յուրովի է ընկալում նրա գեղեցկությունը։
Նկարիչները նույնպես տարբեր կերպ են նկարում բնությունը։

Շրջակա միջավայրի տեսարանը կոչվում է բնապատկեր։
Նկարել ե՞ք բնապատկեր։
Դուք արդեն շատ բան եք սովորել՝ տարբեր նյութերով նկարել, ապլիկացիաներ պատրաստել...
Ժամանակն է սովորել նաև նոր տեխնիկա։
Տեսնենք, թե ուրիշ ինչ կերպ կարող ենք նկարել բնության տեսարանը։

Ակտիվություն 1. Դիտարկում (Գիորգի Միրզաշվիլիի և Մարտիրոս Սարյանի բնապատկերները)
Դիտարկի՛ր նկարները.

- Ի՞նչ ես տեսնում
- Ի՞նչ գույներ ես տեսնում։
- Ի՞նչ ձևեր ես տեսնում։
- Ո՞ր բնապատկերն է նկարված գծերով։

Պատասխան. Գծերով նկարած է Մարտիրոս Սարյանի բնապատկերը։ Գիորգի Միրզաշվիլիի բնապատկերը նկարված է մուգ ու բաց գույներով և շրջանի նման ձևերով։

Ակտիվություն 2. Դիտարկում (Անտոն Բալանչիվաձեի բնանկար)

- Ի՞նչ է նկարել նկարիչը։
- Այստեղ ցերե՞կ է, թե՞ գիշեր։
- Ո՞ր գույնն է գլխավորը։
- Ո՞ր գույնն է ամենամուգը/ամենաբացը։

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, նկարել
Անհրաժեշտ նյութ. աշակերտի ընտրությամբ

Ընտրի՛ր որևէ նկարչի բնապատկեր և նկարի՛ր նմանատիպ նկար։

- Ի՞նչը կփոխես։
- Ի՞նչ կավելացնես։

Ակտիվություն 4. Դիտարկում (հասակակիցների աշխատանքների)
Դիտարկի՛ր երեխաների նկարները։

- Գուշակի՛ր, թե որ նկարչին են ընդօրինակել նրանք։

28. Գիշերային բնապատկեր
Ակտիվություն 1. Նկարազարդման դիտարկում (Էլենե Ախվլեդիանի)
Դիտարկի՛ր նկարը

- Ի՞նչ ես տեսնում։
- Ո՞ր գույնն է գլխավորը։ Ինչո՞ւ։
- Ի՞նչ գույնի թղթի վրա է նկարված այս բնապատկերը։
- Ինչո՞ւ է նկարը նկարած սև թղթի վրա։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, փորձ

Անհրաժեշտ նյութ. սև կամ մուգ կապույտ թուղթ, պաստել, կավիճ:

Երբևէ նկարե՞լ ես սև թղթի վրա:

Սև կամ մուգ կապույտ թղթի վրա գունավոր պաստելներով կամ կավիճով նկարի՛ր բնապատկեր:

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, փորձ

Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթ, սև պաստել, սրածայր ձողիկ:

Կատարի՛ր փորձ.

Թերթը գունավորի՛ր մուգ գույնի պաստելի հաստ շերտով:

Սրածայր ձողիկով քերծի՛ր գծեր:

- Ի՞նչ կնկարես երկար գծերով: Ի՞նչ կնկարես կարճ գծերով:
- Ուրիշ ի՞նչ կնկարեիր նման եղանակով:

Քայլի ամփոփիչ հարցեր.

Ի՞նչ է նշանակում բնապատկեր բառը:

Քայլ 2. (Դաս 29)

29. Զմեռային բնապատկեր

Մեկնաբանություն

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գույն (հիմնական և բաղադրված, բաց և մուգ):

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա՝ **ենթահասկացություն**. խառը տեխնիկա (ապլիկացիա):

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:

4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. բնապատկեր:

Ռեսուրս. դասագիրք՝ Գոգի Չագելիշվիլիի բնապատկերներ

Հրահանգ Ակտիվություն 4-ի համար.

http://bit.ly/3KUaS0j

Գաղափարներ ակտիվության համար.

Ակտիվություն 1. Նախապես ունեցած գիտելիքների ակտիվացում, մեկնաբանում

- Ինչպե՞ս է ձմռանը փոխվում շրջակա միջավայրը:
- Ի՞նչ գույներ են գերակշռում:

Դիտի՛ր Գոգի Չագելիշվիլիի նկարները.

Պատմի՛ր, թե ինչ ես տեսնում:

- Ինչի՞ մասին է մտածում աքլորը:
- Ինչի՞ մասին են խոսում կատուն և ագռավը:

Ակտիվություն 2. Մեկնաբանություն.

Դիտարկի՛ր նկարը և պատասխանի՛ր.

- Տարվա ո՞ր ժամանակն է:
- Ի՞նչ նշանով հասկացար:
- Առավո՞տ է, թե՞ երեկո:
- Ի՞նչ են անում երեխաները:
- Ի՞նչ ձայներ են լսվում:
- Ի՞նչ են սպասում ագռավները:
- Ինչպե՞ս կարող է ավարտվել պատմությունը:

Ակտիվություն 3. Դիտարկում, գործնական աշխատանք, նկարչություն ոչ ավանդական տեխնիկայով (միջանկյալ)

Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթեր, գուաշի ներկեր, վրձին, բամբակով փայտիկներ, սպունգ, ներկապնակ:

Նկարի՛ր ձմեռվա բնապատկեր:

- Ի՞նչ գույնի ֆոն կընտրես:
- Ինչպե՞ս կնկարես ձյունը:
- Ինչո՞վ կնկարես ձյան փաթիլները:

Դիտարկի՛ր նմուշը.

- Ի՞նչ կավելացնեիր նկարին:

Ակտիվություն 4. Դիտարկում, գործնական աշխատանք, նկարչություն խառը տեխնիկայով

https://bit.ly/3KUaS0j;

Սովորողի ընտրությամբ նյութեր. նկարչության թերթեր, գունավոր թղթեր, գուաշի ներկեր, գունավոր մատիտներ կամ պաստելներ, վրձին, բամբակով փայտիկներ, ներկապնակ, սոսինձ, մկրատ:

Դիտարկի՛ր նմուշը։

Նմանատիպ աշխատանք կատարի՛ր խառը տեխնիկայով։

Վերհիշի՛ր, թե ինչ է նշանակում **խառը տեխնիկան։**

- Գունավոր ֆոնի վրա սոսնձի՛ր թղթի նեղ շերտեր. դրանք կլինեն ճյուղերը։
- Մեկ այլ թերթիկի վրա նկարի՛ր թռչուն և գունավորի՛ր այն։
- Կտրի՛ր-հանի՛ր թռչունը և սոսնձի՛ր ճյուղերի վրա։
- Սպիտակ ներկի մեջ թաթախի՛ր բամբակով ձողիկը և ճյուղերին կցանկարի՛ր ձյուն։
- Գծերով նկարի՛ր փշատերևներ։

Քայլ 3. (Դաս 30)

30. Նկարենք ծով

Ոչ ավանդական տեխնիկայի ծանոթացում

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գույն (հիմնական և բաղադրված, բաց և մուգ)։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա՝ **ենթահասկացություն**. նկարել, խառը տեխնիկա։

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։

4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. բնապատկեր։

Ռեսուրսներ. դասագիրք, Կլոդ Մոնեի, Վինսենթ վան Գոգի, Գոգի Չագելիշվիլիի ծովանկարները։

Գաղափարներ ակտիվության համար.

Ակտիվություն 1. Դիտարկում, դատողություն։

Դիտարկի՛ր ծովի բնապատկերները։

- Ո՞ր գույնն է հիմնական գույնը և ինչո՞ւ։
- Ի՞նչն է ձեր ուշադրությունը գրավել Գոգի Չագելիշվիլիի բնապատկերում և ինչո՞վ։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, նկարել (միջանկյալ)

Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթ, կապույտ և սպիտակ գուաշի ներկեր, վրձին, պատառաքաղ կամ սպունգ։

Նկարի՛ր ծովի բնապատկեր՝ ծովանկար։

- Նկարի՛ր ֆոնը սպիտակ և կապույտ ներկով։
- Դիտարկի՛ր նմուշները։
- Ինչպե՞ս կնկարես ալիքներ և ամպեր։

Պատասխան. պատառաքաղով ներկի հաստ շերտ քսել, սպիտակ ներկոտ սպունգով նկարել ալիքներ։

Քայլ 4. (Դաս 31)

31. Նկարենք սար

Թվային արվեստի գործ

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գույն (բաց և մուգ), գիծ (տարբեր տեսակի), ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող)։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա՝ **ենթահասկացություն**. համակարգչային նկարչական ծրագիր։

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։

4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. բնապատկեր։

Ռեսուրսներ. դասագիրք՝ Լուիզ Բուրժուայի, Ջոն Բեյթսի և Դեյվիդ Հոքնիի բնանկարներ։ Աշակերտի բուկի։

Գաղափարներ ակտիվությունների համար.

Ակտիվություն 1. Դիտարկում (Լուիզ Բուրժուայի և Ջոն Բեյթսի բնապատկերներ)

Դիտարկի՛ր նկարները.

- Ի՞նչ ձևեր ես ճանաչել։
- Ի՞նչ են նկարած այս ձևերով։
- Ի՞նչ գույներ ես տեսնում։
- Ո՞ր նկարում են լեռները ուրվագծված գծերով, իսկ որում՝ միայն գույներով։

Պատասխան. Լուիզ Բուրժուայի բնանկարում հստակ երևում են լեռների շուրջ ուրվագծերը, իսկ Ջոն Բեյթսի բնանկարում ձևերը նկարված են միայն գույներով)։

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, թվային աշխատանք

* Եթե չունեք բուկի, ապա այս աշխատանքը կարելի է նշիչներով և/կամ ներկերով կատարել թղթի վրա։

Օգտվի՛ր համակարգչից։ Նկարի՛ր Դեյվիդ Հոքնիի բնապատկերի նման նկար։

Նկարչական ծրագրում գտի՛ր վրձինը, մատիտը և գրիչը։

Փորձի՛ր, թե ինչպիսի գծեր են նկարում դրանք։

- Նկարի՛ր բնության մեջ եղած ձևերը։
- Գունավորի՛ր ձևերը հիմնական և բաղադրյալ գույներով։
- Գեղեցկացրո՛ւ ձևերը գծերով։

Փորձի՛ր, էլ ի՞նչ կարող է անել համակարգչային նկարչական ծրագիրը։

Քայլ 5. (Դաս 32)

32. Նկարենք անտառ

Ոչ ավանդական տեխնիկայի ծանոթացում

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գույն (բաց և մուգ)։

2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա՝ **ենթահասկացություն**. խառը տեխնիկա։

3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ **ենթահասկացություն**. նկարչություն։

4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. բնապատկեր:

Ռեսուրսներ. դասագիրք՝ Գուստավ Կլիմտի բնապատկեր:

Գաղափարներ ատիվությունների համար.

Ակտիվություն 1. Դիտարկում

Դիտարկի՛ր Գուստավ Կլիմտի նկարները.

- Ի՞նչ է նկարել նկարիչը:
- Տարվա ո՞ր եղանակն է:
- Ի՞նչ հատկանշով հասկացար:
- Ի՞նչ գույներով է նկարիչը նկարել աշունը:

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, խառը տեխնիկա (միջանկյալ)

Անհրաժեշտ նյութ. նկարչության թերթ, ստվարաթուղթ, գուաշի ներկեր, մարկեր, գործելու թել, սպունգ, կպչուն ժապավեն:

Նկարի՛ր թավախիտ անտառ:

- Թուղթը ծալի՛ր ստվարաթղթի վրա:
- Հետին մասում կպչուն ժապավենով ամրացրո՛ւ թերթը:
- Շուրջը երկայնքով փաթաթի՛ր գործելու հաստ թել:
- Գունավորի՛ր թերթը ներկոտ սպունգով:
- Հեռացրո՛ւ թելը աշխատանքից:
- Նշիչով նկարի՛ր նուրբ մանրամասները (ճյուղեր կամ տերևներ):
- Տարվա ո՞ր ժամանակը կնկարես:
- Ի՞նչ գույներով կներկես ամառային անտառ:
- Ո՞ր գույներն են գերակշռում աշնանային անտառում:
- Ի՞նչ գույն կունենա ձմեռային անտառը:

Քայլ 6. (Դաս 33)

33. Արվեստանոց

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցներն ու եղանակները՝ **ենթահասկացություն**. գույն (բաց և մուգ), գիծ (տարբեր տեսակի), ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող):
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա՝ **ենթահասկացություն**. խառը տեխնիկա:
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառ՝ **ենթահասկացություն**. նկարչություն:
4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանր՝ **ենթահասկացություն**. բնապատկեր:

Ռեսուրսներ. դասագիրք

Գաղափարներ ակտիվությունների համար.

Ակտիվություն 1. Գործնական աշխատանք, ապլիկացիա (միջանկյալ)

Անհրաժեշտ նյութ. գունավոր թղթեր, նկարչության թերթ, սև նշիչ, մկրատ, սոսինձ:

Պատրաստի՛ր բնապատկեր ապլիկացիայի տեխնիկայով.

- Գունավոր թղթերից կտրի՛ր բնության մեջ գոյություն ունեցող ձևեր:
- Ձևերի վրա նշիչով ճյուղեր նկարի՛ր:
- Առանձին թերթի վրա պատրաստի՛ր ֆոն:
- Նկարի՛ր երկնքի և երկրի բաժանարար գիծը:
- Սոսնձի՛ր ձևերը գունավոր ֆոնի վրա:
- Ծառերին բուն նկարի՛ր:
- Նկարին շրջանակ նկարի՛ր:

Ցո՛ւյց տուր աշխատանքդ ընկերներիդ:

- Ի՞նչ արեցիր:
- Ի՞նչ գույներ ես օգտագործել:
- Ի՞նչ ձևեր ես կտրել-հանել:
- Ի՞նչ գծեր ես նկարել:
- Ի՞նչ տեխնիկայով ես աշխատել:

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, ապլիկացիա

Անհրաժեշտ նյութ. գունավոր թղթեր, նկարչության թերթ, գուաշի ներկեր, սև նշիչ, մկրատ, սոսինձ:

Դիտարկի՛ր նմուշը:

Ապլիկացիայով պատրաստի՛ր բնապատկեր:

- Կտրի՛ր գունավոր օվալի, շրջանի կամ եռանկյունի ձևեր:
- Նկարազարդի՛ր ձևերը՝ սիսեռանախշերով կամ գծերով դրանց վրա նկարի՛ր ծառի ճյուղեր:
- Նկարչության թերթի վրա պատրաստի՛ր բնապատկերի համար ֆոն՝ նկարի՛ր երկինք, հող, սարեր...
- Սոսնձի՛ր նկարազարդած ձևերը ֆոնի վրա:
- Ծառերին բուն նկարի՛ր:

III փուլ. Համալիր առաջադրանքի կատարում և ներկայացում (ի՞նչ սովորեցի):

Քո սիրելի տեխնիկայով ստեղծի՛ր բնապատկեր: Օգտագործի՛ր մտահղացմանդ համապատասխան ձևեր (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող), գույներ (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ) և տարբեր տեսակի գծեր (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, ընդհատվող, կոր, հաստ, բարակ):

- Մտածի՛ր, թե բնության ինչ տեսարան ես պատկերելու (լեռ, ծով, անտառ, դաշտ...):
- Ի՞նչ նյութ կպահանջվի այս տեխնիկայով աշխատանք պատրաստելու համար:
- Ի՞նչ կպատրաստես ապլիկացիայով:
- Ինչպիսի՞ ձևերով կփոխանցես բնապատկերը:
- Ի՞նչ կանես երկրաչափական ձևերով և ի՞նչ՝ բնության մեջ գոյություն ունեցող ձևերով:
- Ո՞ր գույները կընտրես քո բնապատկերի համար: Ինչո՞ւ:
- Ի՞նչ կնկարես գծերով:
- Հիշի՛ր, թե ինչ կարող ես անել պատառաքաղով, սպունգով, բամբակով ձողիկով:
- Ի՞նչ կանես առաջին հերթին, ինչո՞վ կշարունակես աշխատանքը և ի՞նչ կավելացնես վերջում:

Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.

- Ի՞նչ ես պատկերել քո աշխատանքով:
- Ի՞նչ նյութեր և տեխնիկա ես օգտագործել:
- Ինչպե՞ս ես օգտագործել տարբեր տեսակի գծերը, ձևերը և գույները բնապատկեր փոխանցելու համար:
- Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում:
- Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել համալիր առաջադրանքի վրա:

Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման խորագրեր.

1. Ապրե՛ս:

   Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը, խառը տեխնիկայով բնապատկեր ես ստեղծել: Հասկանում ես տարբերությունը բնանկարի տեսակների (ծով, լեռ, անտառ...) միջև, քո աշխատանքում երևում են շրջակա միջավայրին համապատասխան բազմազան ձևեր (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող) և գույներ (բաղադրյալ և հիմնական): Մանրամասները փոխանցվում են տարբեր տեսակի գծերով: Աշխատանքը ներկայացնելիս ճիշտ ես օգտագործում տերմինները:

2. Լավ գործ է:

   Խառը տեխնիկայով նկարած բնապատկերում երևում են շրջակա միջավայրին համապատասխան մի քանի ձևեր: Դու կարող էիր օգտագործել ավելի շատ երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող ձևեր, իսկ մանրամասները փոխանցել տարբեր տեսակի գծերով:

   Դու ճիշտ ես հասկանում մի քանի տերմինների իմաստը, բայց ցանկալի է դրանք օգտագործել աշխատանքը ներկայացնելիս:

Թեմա 4. Համալիր առաջադրանքի գնահատում՝ ըստ SOLO (ՈՒԴԱԿ) տաքսոնոմիայի

Թեմատիկ բաժին. Ես և շրջակա միջավայրը

Թեմա. Բնությունն իմ շուրջը

Աշակերտի անուն, ազգանուն. ----------

Ամիս, ամսաթիվ, տարեթիվ. ----------

Նպատակային հասկացություն 1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություններ. գույն (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ), գիծ (տարբեր տեսակի), ձև (բնության մեջ գոյություն ունեցող):

Նպատակային հասկացություն 2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա

Ենթահասկացություն. խառը տեխնիկա (ապլիկացիա, նկարել):

Նպատակային հասկացություն 3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները

Ենթահասկացություն. նկարչություն:

Նպատակային հասկացություն 4. Կերպարվեստի ժանրերը

Ենթահասկացություն. բնապատկեր:

Համալիր առաջադրանքի պայմանը.

Քո սիրելի տեխնիկայով ստեղծի՛ր **բնապատկեր:** Օգտագործի՛ր մտահղացմանդ համապատասխան **ձևեր** (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող), **գույներ** (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ) և տարբեր տեսակի գծեր (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, ընդհատվող, կոր, հաստ, բարակ):

SOLO տաքսոնոմիայի մակարդակ. վերացական	Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ ստեղծում է երևակայական բնապատկեր: Տարբերում է բնանկարի տեսակները (ծով, լեռ, անտառ ...) և կապում է սեփական փորձառության հետ (ուր է եղել, ինչ է տեսել ...): Գիտակցված և նպատակաուղղված օգտագործում է բազմազան ձևեր (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող), գույներ (հիմնական և բաղադրյալ, բաց և մուգ) և տարբեր տեսակի գծեր (ուղիղ, ալիքաձև, բեկյալ, ընդհատվող, կոր, հաստ, բարակ): Մտահղացմանը համապատասխան, իմաստային առումով իրար հետ կապում և ամբողջացնում է պատկերները: Մտածված օգտագործում է բազմաթիվ տարբեր տեսակի նյութեր և խառը տեխնիկայով աշխատանք է ստեղծում: Աշխատանքը ներկայացնելիս ընդարձակ խոսում է իր մտահղացման և ստեղծագործական գործընթացի փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է տարբեր տերմիններ:
Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Ենթադրություններ է արտահայտում: Ընդհանրացնում է գիտելիքը ինչպես տվյալ առարկայի կտրվածքում, այնպես էլ այլ ոլորտի հետ հարաբերության մեջ: Ունի նմանատիպ օրինակների հետ համեմատելու, վերլուծելու և գնահատելու ունակություն: Կարող է հարցը/երևույթը կապել անձնական փորձի հետ:	

SOLO տաքսոնոմիայի մակարդակ. հարաբերական Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է նրա մի քանի ասպեկտների միջև պատճառահետևանքային կապերը: Կարող է արտահայտել ենթադրություն, համեմատել, վերլուծել, գնահատել, օգտագործել տեսական գիտելիքը պրակտիկայում:	Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ ստեղծում է երևակայական բնապատկեր: Տարբերում է բնանկարի մի տեսակ (ծով, լեռ, անտառ ...) և կապում է սեփական փորձառության հետ (ուր է եղել, ինչ է տեսել ...): Օգտագործում է շրջակա միջավայրի համապատասխան ձև (երկրաչափական և բնության մեջ գոյություն ունեցող), գույն (հիմնական և բաղադրյալ) և գիծ (օրինակ՝ուղիղ, ալիքաձև, բեկյալ, ընդհատվող, կոր, անկյունագիծ, հաստ, բարակ): Մտահղացմանը համապատասխան, իմաստային առումով կապակցում է դրանցից մի քանիսը: Տարբեր նյութերով խառը տեխնիկայով աշխատանք է ստեղծում է: Շնորհանդեսի ժամանակ խոսում է իր մտահղացման և ստեղծագործական գործընթացի մի քանի փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է մի քանի տերմիններ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. բազմակառուցվածքային Աշակերտն ունի պատկերացում հարցի/երևույթի մի քանի ասպեկտների մասին առանձին-առանձին, չի հասկանում նրանց միջև կապը: Կարող է նկարագրել, թվարկել, տեսակավորել, համադրել, մեթոդներ օգտագործել, իրականացնել ընթացակարգեր և այլն:	Արտացոլում է բնապատկերի մի քանի տարր, բայց չի կարող իմաստային առումով կապակցել դրանք իրար հետ: Գների, գույների և գծերի համադրությունն ունի պատահական բնույթ: Հասկանում է նյութի և խառը տեխնիկայի կիրառման առանձնահատկությունը, սակայն ունի ուսուցչի ցուցումների կարիք: Շնորհանդեսի ժամանակ ամբողջությամբ նկարագրում է իր աշխատանքը: Հասկանում է մի քանի տերմինի իմաստ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. ունիկառուցվածքային Աշակերտը քննարկում է հարցի/երևույթի միայն մեկ ասպեկտ: Տեսնում է պարզ, բացահայտ/հստակ կապերը: Հասկանում է միայն մի քանի տերմինի նշանակություն: Կարող է գիտելիքը բանավոր փոխանցել (հիշել), կատարել պարզ ցուցումներ, շրջասել, ճանաչել, անվանել կամ թվարկել:	Արտահայտում է բնապատկերի մեկ տարր: Գների, գույների և գծերի համադրությունն ունի պատահական բնույթ: Չի կարողանում կապել նյութի օգտագործումը տեխնիկայի հետ: Շնորհանդեսի ժամանակ նկարագրում է իր աշխատանքի մի քանի տարր: Հասկանում է մի քանի տերմինի իմաստ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. նախակառուցվածքային Աշակերտը չի ըմբռնում հարցը, կիրառում է ոչ համապատասխան տեղեկություններ կամ ընդհանրապես հեռանում է հարցից:	Աշխատանքը չի համապատասխանում առաջադրանքի պայմանին:

ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱ 5

Դասարան I

Թեմատիկ բաժին 1. Ես և շրջակա միջավայրը

Թեմա. Կենդանի բնություն (Դասեր 34-38) Ժամերի ենթադրյալ քանակը՝ 5+3

Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ (ընդհանրացումներ թեմայի շրջանակներում)

- Շրջակա միջավայրից ստացած տպավորություններն ու գաղափարները կարող եմ արտահայտել տարբեր ոլորտների և ժանրերի աշխատանքների մեջ։
- Շրջակա միջավայրից ստացած տպավորությունները կարող եմ փոխանցել տարբեր **արտահայտչական միջոցներով, մեթոդներով, նյութերով ու տեխնիկայով։**

1. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություններ. միջոցներ

Ձև. բնական, ծավալային։

2. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա

Ենթահասկացություններ. կառուցքավորում, մոդելավորում, կերտում, ապլիկացիա։

3. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի բնագավառներ

Ենթահասկացություններ. քանդակագործություն, նկարչություն։

4. Նպատակային հասկացություն. Կերպարվեստի ժանրեր

Ենթահասկացություններ. անիմալիստական, բնապատկեր

Հարցը. Կենդանական աշխարհի բազմազանությունն արվեստում։

Հանգուցային հարցեր.

- Ո՞ր բնագավառի և ժանրի աշխատանքի մեջ կարող եմ արտահայտել աշխարհի բազմազանությունը։
- Ինչպե՞ս ստեղծեմ տարբեր միջավայրեր արտացոլող դիորամա տարբեր նյութերով, տեխնիկայով, գեղարվեստական միջոցներով և եղանակով։

Համալիր առաջադրանք

Առաջադրանքի պայմանը.

Ստեղծի՛ր դիորամա. Կենդանիները և միջավայրը, որում նրանք ապրում են։

Կենդանիների փոքրիկ **քանդակներ** ստեղծելու համար օգտագործի՛ր քեզ համար ցանկալի նյութ (ստվարաթուղթ, թուղթ, պլաստիլին, կավ կամ ծեփելու խմոր) և **տեխնիկա** (ծեփակերտում, մոդելավորում), կենդանու քանդակի մեջ փոխանցի՛ր դրան բնորոշ ձևը (բնության մեջ գոյություն ունեցող)։

Դիորամայում կենդանուն համապատասխան միջավայր ստեղծելիս օգտագործի՛ր երկրաչափական կամ բնության մեջ գոյություն ունեցող **ձևեր**, նյութ (ստվարաթուղթ, թուղթ, ներկեր), ապլիկացիայի և նկարելու **տեխնիկա**.

Նպատակային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ	**Գնահատման չափանիշներ (Որոշակի համալիր ակտիվության համապատասխանեցված)**
Աշակերտը պետք է գիտակցի, որ	Աշխատանքում/աշխատանքի ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր.

1. Կերպարվեստի գեղարվեստական պատկերավորման տարրերն ու սկզբունքները ● Ասելիքը (պատմություն, զգացմունք, գաղափար, տպավորություն, տրամադրություն, դիտարկման արդյունքներ), գեղարվեստական մտահղացումը փոխանցելու համար մարդը կիրառում է արվեստի լեզուն կամ կերպարվեստի տարրերը (գույն, գիծ, ձև) և սկզբունքները (օրինակ՝ ռիթմ, հիմնականի ընդգծում, հակադրություն և այլն)։ **2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկան** ● Մարդիկ արվեստի գործ ստեղծելու համար օգտագործում են տարբեր նյութեր և տեխնիկա։ **3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ** ● Արվեստի բաժանումը տարբեր բնագավառների պայմանավորված է օգտագործված նյութով, տեխնիկայով, նպատակով։ ● Կերպարվեստի և կիրառական արվեստի յուրաքանչյուր բնագավառին բնորոշ է որևէ գեղարվեստական տարր։ ● Կերպարվեստի ստեղծագործությունները ստեղծվում են կերպարվեստի տարրերի և սկզբունքների հիման վրա, չնայած որ ցանկացած տարր ավելի կոնկրետ է յուրաքանչյուր բնագավառի համար։ **4. Կերպարվեստի ժանրերը** ● Արվեստը ժանրերի է բաժանվում՝ ըստ արտացոլված բովանդակության։	● Ի՞նչ ես պատրաստել։ ● Ի՞նչ նյութ և **տեխնիկա** ես օգտագործել կենդանիների արձանիկներ պատրաստելու համար։ ● Ի՞նչ նյութով և տեխնիկայով ես ստեղծել միջավայր (բնապատկեր) քո կենդանիների համար։ ● Ինչպիսի՞ **ձևեր** ես օգտագործել **կենդանիների արձանիկների մեջ** և ինչպիսին՝ **բնապատկերում։** ● Ի՞նչ քայլեր ես ձեռնարկել առաջադրանքի վրա աշխատելու տարբեր փուլերում։ ● Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե նորից սկսեիր աշխատել համալիր առաջադրանքի վրա։

Համալիր առաջադրանքի իրականացման փուլերը (ակտիվություններ, ռեսուրսներ, հարցեր)

I փուլ. Համալիր առաջադրանքի պայմանի ծանոթացում

Քննարկվելիք քեյսեր համալիր առաջադրանքի իրականացման համար.

Բնությունը բազմաթիվ կենդանի արարածների տունն է։

Որոշ արարածներ շատ փոքրիկ են, որոշները՝ հսկայական, որոշները՝ բարի, որոշները՝ կատաղի։

Դրանցից յուրաքանչյուրն ապրելու համար ընտրել է իրեն հարմար միջավայր։

Անհիշելի ժամանակներից մինչև մեր օրերը մարդը դիտարկում և ուսումնասիրում է այս աշխարհը։

Ի՞նչ է մեզ պատմում արվեստը նրանց մասին։

Ի՞նչ և ինչպե՞ս կպատմես դու մեզ։

Ռեսուրսներ համալիր առաջադրանքների իրականացման համար.

Նկարազարդումներ՝ նախապատմական նկարչություն, հնագույն աշխարհ, Պաբլո Պիկասոյի անիմալիստական քանդակներ, Անրի Մատիսի դեկուպաժ։

<u>Համալիր առաջադրանքի պայմանի ըմբռնմանը միտված հարցեր.</u>

- Դիտարկե՞լ ես, թե որքան հետաքրքիր և տարբեր ձևեր ունեն կենդանիները, թռչունները կամ ծովաբնակները։
- Ինչպե՞ս և ի՞նչ նյութով կարող ես փոխանցել դրանց ձևերը։

Քայլ 1. (Դասեր 34 – 35)

34. Նախնիների պատմությունները

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա՝ **ենթահասկացություններ**. ծեփում, կերտում:
2. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ՝ **ենթահասկացություններ**. նկարչություն, քանդակագործություն:
3. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանրեր՝ **ենթահասկացություն**. անիմալիստական ժանր:

Ռեսուրսներ. դասագիրք, նախապատմական նկարներ, հին աշխարհի քանդակներ:

Գաղափարներ ակտիվությունների համար.

Նախնական գիտելիքների ակտիվացում.

- Հիշի՛ր, թե որտեղ են հայտնվել մարդու առաջին նկարները:
- Ինչո՞ւ էին նախնադարյան մարդիկ նկարում քարանձավի պատերի վրա:

Ակտիվություն 1. Դիտարկում, դատողություն

Դիտարկի՛ր նկարները և պատմի՛ր, թե ինչ ես տեսնում:

- Ո՞ր կենդանիներն են ծանոթ:
- Առաջին պատկերը, որ ստեղծել է մարդը, եղել է կենդանու պատկերը:
- Ինչո՞ւ ես այդպես մտածում:

Պատասխան. Երբ մարդիկ դեռ գրել չգիտեին, միմյանց հետ իրենց տպավորություններով կիսվում էին նկարների միջոցով:

Այն ժամանակ նրանք դեռ թուղթը չէին հորինել: Դրա համար նրանք նկարել են քարանձավի պատերի վրա: Նախնադարյան մարդիկ չէին նկարում բնության գեղեցիկ տեսարաններ կամ միմյանց դիմանկարներ: Նրանց միջավայրը վտանգներով լի վայրի բնությունն էր: Մարդը դիտարկում էր նրանց, ուսումնասիրում, հնազանդեցնում իրեն, հենց դա էր անհանգստացնում մարդուն: Այդ պատճառով նա նկարում էր կենդանիներին, որոնց նա որսում էր, որոնց ընտելացնում էր և որոնցից վախենում էր:

Ակտիվություն 2. Քանդակում

Պլաստիլինով ծեփակերտի՛ր տարօրինակ կենդանու քանդակ:

- Ի՞նչ ես կերտել:
- Ի՞նչն ունի այս կենդանին անսովոր:

35. Քանդակ

Մոտիվացիոն զրույց.

Քանդակը կարող է պատրաստվել ցանկացած նյութից՝ պլաստիլին, կավ, փայտ, երկաթ, քար, ապակի և նույնիսկ սառույց:

Ուշադիր դիտի՛ր նկարները. գուշակի՛ր, թե ինչ նյութերից են պատրաստված կենդանիների քանդակները:

Ակտիվություն 1. Դատողություն

- Ո՞րն է տարբերությունը նկարի և քանդակի միջև:

Պատասխան. Նկարը հարթ է: Քանդակն ունի կլորություն: Այն կարելի է դիտարկել բոլոր կողմերից:

Ակտիվություն 2. Դիտարկում, գործնական աշխատանք, քանդակում:

Մոտիվացիոն զրույց

Վրաստանում ոսկու վերամշակումը սկսվել է հազարավոր տարիներ առաջ: Այս փոքրիկ առյուծն այն ժամանակ է ստեղծվել, երբ խոշորացույցը դեռ հորինված չէր: Տեսնում եք, թե ինչ լավ արհեստավորներ են եղել մեր նախնիները՝ ինչպիսի գանգուր բաշ ունի առյուծը: Ինչ եք կարծում, որքան մեծ կարող է լինել այս առյուծը: Այս առյուծը տեղավորվում է ձեռքի ափի մեջ: Գիտնականները դա գտել են հողի խորքերում թաղված: Դուք կարող եք պատկերացնել, թե որքան են ուրախացել, երբ հայտնաբերել են այս առյուծը: Ուշադրությո՛ւն դարձրեք առյուծի վզի սիսեռանախշերին: Սա բաշն է:

Անհրաժեշտ նյութեր. դեղին գույնի պլաստիլին (կավ կամ ծեփելու խմոր), ծեփակերտման տախտակ, գրիչի կաղապար:

Կերտի՛ր առյուծի քանդակ: Դիտարկի՛ր առյուծի քանդակը:

- Ի՞նչ բնորոշ հատկանիշ ունի նա:

Մարմնի վրա գրիչով սիսեռանախշեր արա՛:

Ակտիվություն 3. Դիտարկում, գործնական աշխատանք, քանդակում (միջանկյալ)

Մոտիվացիոն զրույց

Հունարենում հիպո նշանակում է ձի, պոտամի՝ գետ: Հին հույները «բեհեմոտը»՝ գետաձին, հիպոպոտամ կամ գետի ձի էին անվանում:

- Ինչո՞ւ են հույները բեհեմոտն անվանել գետի ձի կամ գետաձի: (գետաձին ժամանակի մեծ մասը ջրի մեջ է անցկացնում):

Եգիպտացիներն աստվածացնում էին այս կենդանուն և հաճախ էին քանդակում: Քանի որ քանդակը նկար չէ և գետաձիու կողքին չէին կարող ջրային բույսեր պատկերել, այդ պատճառով այն ջրի գույն՝ երկնագույն էին ներկում և բույսերը անմիջապես մարմնի և գլխի վրա էին նկարում՝ ասես սիրելի միջավայրը միշտ գետաձիու հետ էր:

Տեսե՛ք, թե ինչ ձևեր ունի: (գեր, խոշորագլուխ, կարճ ոտքերով, անճոռնի, անճկուն): Գետաձիու եգիպտական արձանիկները երկնագույնի և մարմնի վրա ծաղիկների պատճառով շատ հրապուրիչ և գեղեցիկ են:

Տարբերակ 1.

Անհրաժեշտ նյութ. պլաստիլին, սրածայր ձողիկներ:

- Կերտի՛ր գետաձի և նրա վրա ծաղիկ նկարի՛ր:
- Դիտարկի՛ր, թե ինչպիսի ձև ունի գետաձին:
- Գետաձիու մարմնի վրա սրածայր ձողիկով ծաղիկ քերծի՛ր:

Հրահանգ.

- Պլաստիլինի բրիկետը պլաստմասսայից դանակով լայնակի կտրի՛ր երկու մասի և յուրաքանչյուրը բաժանի՛ր երկու, բթամատի հաստությամբ կտորների: Սրանք կլինեն ոտքերը:

- Կանգնեցրո՛ւ ոտքերը և մի փոքր սեղմի՛ր՝ թաթերը հարթեցնելու համար։
- Թաթերի վրա հաստ մատները նշելու համար թաթի մեջ խրի՛ր ծեփելու համար հատկացված դանակի ծայրը։ Քանի՞ կտրվածք պետք է անես դանակով, որպեսզի ստացվի հինգ մատ։
- Չորս ոտքերից յուրաքանչյուրի մեջ խրի՛ր լուցկու մեկական հատիկ այնպես, որ հատիկի կեսը դուրս ցցված լինի։
- Պլաստիլինի մի մեծ կտորի տո՛ւր կարտոֆիլի նման կլորացված ձև։
- Մատներդ եզրի մոտ այնպես սեղմի՛ր, որ գետաձիու պարանոցը ճմրթվի։ Այն մի փոքր ավելի բարակ պետք է ստացվի, քան գետաձիու մարմինը։
- Մատներով մշակի՛ր գլուխը (ականջները, քիթը, աչքերը)։
- Հագցրո՛ւ մարմինը ոտքերից դուրս ցցված լուցկու հատիկների վրա։ Սեղմի՛ր այնպես, որ մարմինը սերտորեն միանա ոտքերին։
- Միացման հատվածները լղոզի՛ր մատով։

Ցո՛ւյց տուր քո աշխատանքը ընկերներիդ և նրանց պատմի՛ր.

- Ի՞նչ ես պատրաստել։
- Ի՞նչ նյութով ես պատրաստել։
- Ինչպե՞ս ես ամրացրել մասերն իրար։
- Ի՞նչ ձևեր ունի քո գետաձին։
- Ի՞նչ եք վրան նկարել գծերով։

Տարբերակ 2.

Գունավորի՛ր գետաձին։

*Այս ակտիվությունը օգտակար է տարբերակման համար։ Գունավորելու տարբերակը տե՛ս հավելվածում։

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ է քանդակը։
- Ի՞նչ նյութեր են օգտագործվում քանդակի պատրաստման համար։
- Ինչո՞վ է քանդակագործությունը տարբերվում նկարչությունից։
- Ինչո՞ւ են մարդիկ կենդանիների արձաններ պատրաստում։

Քայլ 2. (Դաս 36)

36. Ինչի՞ց է պատրաստված քանդակը։

Քանդակագործական նյութերի ծանոթացում

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություն. ձև (բնության մեջ գոյություն ունեցող)

2. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա

Ենթահասկացություն. կերտում։

3. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ. **Ենթահասկացություն**. քանդակ։

4. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանրեր. **Ենթահասկացություն**. անիմալիստական ժանր։

Ռեսուրսներ. դասագիրք. Պաբլո Պիկասոյի անիմալիստական քանդակներ

Գաղափարներ ակտիվության համար.

Մոտիվացիոն զրույց.

Քանդակները պատրաստում են քանդակագործները։

Պաբլո Պիկասոն և՛ նկարիչ էր, և՛ քանդակագործ։

Նա քանդակը ստեղծել է տարբեր նյութերով։

Ակտիվություն 1. Պաբլո Պիկասոյի քանդակների դիտարկում

- Դիտարկի՛ր կապիկի քանդակը։ Ինչի՞ց է պատրաստված նրա գլուխը։ (խաղալիք մեքենայի)
- Ի՞նչ ձև ունի բվի գլուխը։ (շրջանի ձև)
- Ի՞նչ ձև ունեն ցլի ոտքերը։ (գլանի ձև)

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, քանդակում, վարժություն

Անհրաժեշտ նյութ. պլաստիլին, տախտակ ծեփակերտելու, պլաստմասսայե դանակ։

- Պլաստիլինով կենդանու արձանիկ կերտի՛ր։
- Մանր դետալների համար օգտագործի՛ր ուրիշ գույնի պլաստիլին։

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, քանդակում, վարժություն

Անհրաժեշտ նյութ. կավ կամ կերտելու խմոր, քանդակման տախտակ, պլաստմասսայե դանակ։

- Կավով կամ կերտելու խմորով կենդանի կերտի՛ր։
- Տարբեր ձևի կտրվածքներով կերտի՛ր մանր դետալներ։
- Գունավորի՛ր քանդակը գուաշի ներկով։

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ի՞նչ կենդանիներ ես կերտել։
- Ի՞նչ նյութով ես կերտել։
- Ի՞նչ ձևեր անհրաժեշտ եղան այս կենդանիներին կերտելու համար։
- Ի՞նչ մանրամասներով արձանին իսկական կենդանու տեսք տվեցիր։

Քայլ 3. (Դաս 37)

37. Ապլիկացիա

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություն. ձև (բնության մեջ գոյություն ունեցող), գույն՝ մուգ և բաց։

2. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա

Ենթահասկացություն. ապլիկացիա։

3. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ.

Ենթահասկացություն. նկարչություն։

Ռեսուրսներ. դասագիրք, Անրի Մատիսի դեկուպաժը:

Գաղափարներ ակտիվության համար.

Մոտիվացիոն զրույց, նախապես ունեցած գիտելիքների ակտիվացում.

Ծեր նկարիչ Անրի Մատիսը դժվարանում էր երկար կանգնել մոլբերտի մոտ, բայց չէր կարող անգործ մնալ: Նա նստած էր բազկաթոռի մեջ, գունավոր թղթերից տարբեր ձևեր էր կտրում և փակցնում թերթի վրա: Մատիսի մոտ շատ գեղեցիկ ապլիկացիաներ էին ստացվում:

Վերհիշե՛ք, թե ինչ է ապլիկացիան:

Ակտիվություն 1. Դիտարկում

Դիտարկի՛ր Անրի Մատիսի նկարները.

- Ի՞նչ նկատեցիր:
- Ի՞նչ տեխնիկայով է պատրաստել Անրի Մատիսն այս նկարները: (ապլիկացիայով)
- Ի՞նչ ձևեր ես տեսնում:
- Գտի՛ր երկրաչափական և բնական ձևերը: Ի՞նչ են նրանք հիշեցնում քեզ:

Պատասխան. Անրի Մատիսը ֆոնի համար օգտագործում է երկրաչափական պատկերներ, իսկ պատկերների համար՝ բնության մեջ գոյություն ունեցողները: Մատիսի անկանոն ձևերը՝ խխունջը, աղվեսը, ջրիմուռները, թռչունները նման են ծովաստղերի:

Ակտիվություն 2. Դիտարկում, դատողություն

Մոտիվացիոն զրույց.

Մի անգամ Անրի Մատիսը ճանապարհորդել է դեպի հեռավոր կղզիներ: Կղզու բնությունը, թռչունները և ծովի բնակիչները մեծ տպավորություն են գործել քաղաքի նկարչի վրա: Վերադառնալով հայրենիք՝ կարոտում էր կրկին այնտեղ լինելուն: Նա անընդհատ պատկերացնում էր ծովային տեսարանները, ջրի վրա ճայերը և ջրի մեջ ձկները, մեդուզաները, ծովային աստղերը և կապույտ ջրիմուռները: Այս կարոտը նրան հանգիստ չի տվել, և նա վերցրել և մի մեծ չափի ապլիկացիա է պատրաստել: Մեկն անվանել է «Երկինք», մյուսը՝ «Ծով»: Գուշակե՛ք, թե որն է «Երկինքը» և ո՞րը՝ «Ծովը»: Ի՞նչ նշանով կռահեցիք:

Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչ շրջանակ է նկարիչն արել ապլիկացիային: Ի՞նչ է պատկերված շրջանակի վրա: (ջրիմուռներ):

Դիտարկի՛ր Անրի Մատիսի ապլիկացիան:

- Ի՞նչ ձևերով է նկարիչը պատրաստել ֆոնը: (Ֆոնը պատրաստված է քառանկյունաձև երկրաչափական պատկերներով:)
- Ի՞նչ գույնի է ֆոնը: (երկնագույն և կապույտ)
- Ինչո՞ւ է նկարիչը ֆոնի համար ընտրել երկնագույն և կապույտ գույնի թերթերը: (երկինք, ծով):
- Ինչ եք կարծում, ի՞նչը կփոխվեր, եթե կապույտ ձևերը կպցնեիր կապույտ ֆոնի վրա: Կերևայի՞ն ձևերը, թե՞ կկորչեին:
- Ո՞ր գույնի թղթից է նկարիչը կտրել-հանել ձևերը:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է նա ընտրել սպիտակ գույնը ֆիգուրների համար:
- Ինչի՞ ես նմանեցնում սպիտակ ձևերը: (ձուկ, ծովաստղ, մեդուզա, ջրիմուռներ...):

Ակտիվություն 3. Գործնական աշխատանք, ապլիկացիա «Ստորջրյա աշխարհ»

Անհրաժեշտ նյութեր. գունավոր թղթեր, հասարակ մատիտ, մկրատ, սոսինձ:

Ստեղծի՛ր ապլիկացիա «Ստորջրյա աշխարհ»:

- Ի՞նչ է ապրում ծովում:
- Գունավոր թղթերի վրա հասարակ մատիտով նկարի՛ր և կտրի՛ր-հանի՛ր բնական ձևեր:
- Ձևերը նմանեցրո՛ւ ծովի բնակիչներին:
- Դասավորի՛ր ձևերը ֆոնի վրա, դրանց համար ընտրի՛ր լավագույն տեղը:
- Երբ պատկերների դասավորությունը քեզ դուր կգա, սոսնձի՛ր դրանք մուգ ֆոնի վրա:

* Երեխաները, որպես կանոն, ձևեր են նկարում թղթի մեջտեղում և հետո կտրում-հանում: Այս ժամանակ մնում են շատ մանր-մունր մնացորդներ: Ուսուցիչը պետք է բացատրի աշակերտներին, որ ձևերը սկսեն եզրերից նկարել, որպեսզի հաջորդ ձևի համար ավելի շատ թուղթ մնա: Մնացորդ թղթերի վրա կարող են նկարել և հետո ձևել-հանել այլ, ավելի փոքր ձևեր:

Քայլի ամփոփիչ հարցեր.

- Ո՞րն է տարբերությունը բնական և երկրաչափական ձևերի միջև:
- Ո՞ր ձևերը ձեզ պետք կգան, եթե ցանկանաք ծովում ապրող արարածներ նկարել:
- Ի՞նչ տեխնիկա եք օգտագործել ստորջրյա աշխարհը պատկերելու համար:
- Ի՞նչ այլ նյութ կարող եք օգտագործել ջրային արարածներին պատկերելու համար:

Քայլ 4. (Դաս 38)

38. Թղթե քանդակ

Նպատակային հասկացություն/ենթահասկացություններ.

1. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություն՝ ձև (բնության մեջ գոյություն ունեցող):

2. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա **Ենթահասկացություններ՝** մոդելավորում, կառուցքավորում:

3. **Նպատակային հասկացություն՝** Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառներ **Ենթահասկացություն՝** քանդակագործություն;

4. **Նպատակային հասկացություն**. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանրեր **Ենթահասկացություն՝** անիմալիստական:

Ռեսուրսներ. դասագիրք, նմուշներ

Գաղափարներ ակտիվության համար.

Մոտիվացիոն զրույց. նախապես ունեցած գիտելիքների ակտիվացում.

- Հիշե՛ք, թե ինչ նյութով և տեխնիկայով եք ստեղծել կենդանիների պատկերներ:
- Ի՞նչ է քանդակը:
- Ինչի՞ց է պատրաստվում քանդակը:
- Գիտեի՞ք, որ կարելի է թղթով և այլ տարօրինակ նյութերով քանդակ պատրաստել:

Ակտիվություն 1. Գործնական աշխատանք, մոդելավորում, վարժություն

Անհրաժեշտ նյութեր. ստվարաթուղթ, հասարակ մատիտ, նշիչներ, սոսինձ, մկրատ, փայտե ձողիկներ, շշի խցան, կոճակներ, ուլունքներ և այլն:

Ուշադիր դիտի՛ր նմուշները.

Պատրաստի՛ր կենդանիների ստվարաթղթե ֆիգուրներ:

- Մտածի՛ր, թե ինչպես են պատրաստված այս կենդանիները:
- Որի՞ն է պետք ձևվածք:
- Ինչպե՞ս են նրանց ոտքերն ամրացված:
- Ի՞նչ նյութեր կպահանջվեն նման կենդանիներ պատրաստելու համար:

1. Վագր

Անհրաժեշտ նյութեր. ստվարաթուղթ, ներկեր, նշիչներ, շշի խցան, սոսինձ, մկրատ:

Առանձին-առանձին նկարի՛ր վագրի գլուխը, առջևի և հետևի ոտքերը: Նախ իրար կպցրո՛ւ գլուխը և առջևի ոտքերը: Այնուհետև առջևի և հետևի ոտքերը կսոսնձվեն շշի խցանի երկու կողմերում:

2. Կատու

Անհրաժեշտ նյութեր. գունավոր թղթի վրա տպված ձևվածք, ստվարաթղթի փոքր կտոր, մկրատ, սոսինձ:

Կատվի ձևվածքը տե՛ս հավելվածում

3. Առյուծ.

Անհրաժեշտ նյութեր. գունավոր թուղթ կամ ստվարաթուղթ, մկրատ։

- Թուղթը ծալի՛ր մեջտեղից։
- Առյուծն այնպես նկարի՛ր, որ նրա մեջքը և գլուխը համընկնեն ծալքի հետ։
- Գունավորի՛ր առյուծի պատկերը երկու կողմից։
- Առանց թուղթը բացելու կտրի՛ր-հանի՛ր նկարված առյուծը։
- Առանձին նկարի՛ր և կտրի՛ր-հանի՛ր առյուծի բաշը։
- Մի փոքր կտրվածք արա՛ բաշի վրա և հագցրո՛ւ գլխի մոտ։

4. Ձի.

Անհրաժեշտ նյութեր. գունավոր թուղթ կամ ստվարաթուղթ, մկրատ։

- Մի բարակ ստվարաթղթի վրա նկարի՛ր և կտրի՛ր-հանի՛ր ձի՝ առանց ոտքերի։
- Երկու նույնական եռանկյունաձև ձևերի վրա նկարի՛ր և կտրի՛ր-հանի՛ր ձիու ոտքերը։
- Գունավորի՛ր բոլոր ձևերը։
- Ձիու փորի վրա երկու տեղից կտրվածք արա՛ և ոտքերն ամրացրո՛ւ մեջը։

* Ըստ այս նմուշի կարելի է պատրաստել ցանկացած կենդանի։

5. Կատու

Անհրաժեշտ նյութեր. ստվարաթուղթ, լուցկու հատիկներ, սոսինձ, մկրատ։

Նայի՛ր նմուշին և մտածի՛ր, թե ինչպես կպատրաստեիր այդպիսի կատու:

Ի՞նչ նյութ կպահանջվի:

Ակտիվություն 2. Գործնական աշխատանք, մոդելավորում (միջանկյալ)

Շրջակա միջավայրի փոքր մոդել, տրիորամա (եռանկյունաձև դիորամա)

Անհրաժեշտ նյութեր. գունավոր թուղթ, մկրատ, սոսինձ, պլաստիլին:



Պատրաստի՛ր կենդանիների երկու կամ երեք ֆիգուր:

Կենդանուն տեղավորի՛ր իրեն համապատասխան միջավայրում:

- Ըստ նմուշի, կտրի՛ր-հանի՛ր և նկարազարդի՛ր փոքրիկ մոդել՝ տրիորամա, համապատասխան միջավայրն արտահայտող բնապատկերով:
- Կպցրո՛ւ մոդելի հիմքի երկու մասերն իրար:
- Վրան դասավորի՛ր պլաստիլինից կամ ստվարաթղթից պատրաստած կենդանիներ:

Ցո՛ւյց տուր աշխատանքը ընկերներիդ և պատմի՛ր նրանց.

- Ի՞նչ ես պատրաստել:
- Ո՞ր կենդանիներին ես ընտրել քո աշխատանքի համար:
- Ի՞նչ նյութեր և տեխնիկա ես ընտրել կենդանիների ֆիգուրներ պատրաստելու համար:
- Ինչպիսի՞ ձևեր ես օգտագործել կենդանիների ֆիգուրներ պատրաստելու համար:
- Ինչպե՞ս ես դրանց մասերը միացրել իրար:
- Ինչպիսի՞ միջավայրում են ապրում քո կենդանիները:
- Ինչպե՞ս ես արտացոլել նրանց համապատասխան բնապատկերը:
- Ի՞նչ նյութեր և տեխնիկա ես օգտագործել բնապատկերը ստանալու համար:

III փուլ. Համալիր առաջադրանքի կատարում և ներկայացում (ի՞նչ սովորեցի):

Դիորամա «Կենդանիների աշխարհ».

Ստեղծի՛ր դիորամա՝ կենդանիներ և միջավայրը, որտեղ նրանք ապրում են:

Կենդանիների փոքրիկ ֆիգուրներ ստեղծելու համար օգտագործի՛ր քո ընտրած նյութը (ստվարաթուղթ, թուղթ, պլաստիլին, կավ կամ ծեփելու խմոր) և տեխնիկան (քանդակում, մոդելավորում);

Կենդանու քանդակում փոխանցի՛ր նրան բնորոշ ձևը (բնության մեջ գոյություն ունեցող):

Դիորամայում կենդանիներին համապատասխան միջավայր ստեղծելու համար օգտագործի՛ր երկրաչափական կամ բնության մեջ գոյություն ունեցող ձևեր, նյութ (ստվարաթուղթ, թուղթ, ներկեր), ապլիկացիայի և նկարելու տեխնիկա:

Աշխատանքը ներկայացնելիս խոսի՛ր.

- Ի՞նչ նյութեր և **տեխնիկա** ես ընտրել կենդանիների ֆիգուր պատրաստելու համար:
- Ի՞նչ նյութերով և **տեխնիկայով** ես ստեղծել քո կենդանիների համար միջավայր (բնապատկեր):
- Ի՞նչ ձևեր ես օգտագործել կենդանիների **ֆիգուրներում** և ի՞նչ ձևեր ես օգտագործել **բնապատկերում**:
- Ի՞նչ քայլեր ես կատարել առաջադրանքի տարբեր փուլերում:
- Ի՞նչն այլ կերպ կանեիր, եթե նորից սկսեիր աշխատել համալիր առաջադրանքի վրա:

***Միջավայրի նմուշներ.**

Համալիր առաջադրանքի զարգացնող գնահատման խորագրեր.

1. Ապրե՛ս:
   Քո դիորաման պատկերում է կոնկրետ միջավայր՝ համապատասխան բույսերով և կենդանիներով: Դու օգտագործել ես բազմազան նյութեր և նյութերին համապատասխան տեխնիկա: Քո կենդանու ֆիգուրն ունի իրեն բնորոշող ձևեր, իսկ բնապատկերը՝ բնորոշ բազմազան տարրեր: Ներկայացնելիս ճիշտ ես օգտագործում տերմինները:

2. Լավ աշխատանք է:
   Քո դիորաման պատկերում է բնության տեսարան, բայց նրանում խառնված են շրջակա միջավայրի տարբեր տարրեր (ասենք՝ ձյան վրա կակտուսներ կամ ավազոտ անապատում պինգվիններ...): Դու կարող էիր օգտագործել ավելի բազմազան նյութեր և տեխնիկա: Քո կենդանու ֆիգուրն ունի մի երկու բնորոշ մանրամասն: Դու կարող էիր ավելի շատ բնորոշ տարրեր ներառել բնապատկերի մեջ: Դու հասկանում ես մի քանի տերմինների իմաստը, սակայն աշխատանքը ներկայացնելիս ցանկալի է դրանք օգտագործել:

Թեմա 4. Համալիր առաջադրանքի գնահատում՝ ըստ SOLO (ՈՒԴԱԿ) տաքսոնոմիայի

<table>
<tr><td colspan="2">

Թեմատիկ բաժին. Ես և շրջակա միջավայրը

Թեմա. Կենդանի բնություն

Աշակերտի անուն, ազգանուն. ----------

Ամիս, ամսաթիվ, տարեթիվ. ----------

Նպատակային հասկացություն 1. Կերպարվեստի և կիրառական արվեստի գեղարվեստական պատկերավորման միջոցները (տարրերը) և եղանակները (սկզբունքները)

Ենթահասկացություն. ձև (բնության մեջ գոյություն ունեցող)

Նպատակային հասկացություն 2. Կերպարվեստի և կիրառական արվեստի տեխնիկա

Ենթահասկացություններ. նկարել, ապլիկացիա, կառուցքավորում

Նպատակային հասկացություն 3. Կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները

Ենթահասկացություն. քանդակ

Նպատակային հասկացություն 4. Կերպարվեստի և կիրառական արվեստի ժանրերը

Ենթահասկացություններ. բնապատկեր, անիմալիստական ժանր.

</td></tr>
<tr><td colspan="2">

Համալիր առաջադրանքի պայմանը.

Ստեղծել ես դիորամա՝ կենդանիներ և միջավայրը, որտեղ նրանք ապրում են:

Կենդանիների փոքրիկ ֆիգուրներ ստեղծելու համար օգտագործել ես քո ընտրած նյութը (ստվարաթուղթ, թուղթ, պլաստիլին, կավ կամ ծեփելու խմոր) և տեխնիկա (քանդակում, մոդելավորում);

Կենդանու ֆիգուրում փոխանցել ես նրան բնորոշ ձևը (բնության մեջ գոյություն ունեցող):

Դիորամայում կենդանիներին համապատասխան միջավայր ստեղծելու համար օգտագործել ես երկրաչափական կամ բնության մեջ գոյություն ունեցող ձևեր, նյութ (ստվարաթուղթ, թուղթ, ներկեր), ապլիկացիայի և նկարելու տեխնիկա.

</td></tr>
<tr><td>

SOLO տաքսոնոմիայի մակարդակ. վերացական

Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Ենթադրություններ է արտահայտում: Ընդհանրացնում է գիտելիքը ինչպես տվյալ առարկայի կտրվածքում, այնպես էլ այլ ոլորտի հետ հարաբերության մեջ: Ունի նմանատիպ օրինակների հետ համեմատելու, վերլուծելու և գնահատելու ունակություն: Կարող է հարցը/երևույթը կապել անձնական փորձի հետ:

</td><td>

Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ ստեղծում է դիորամա, որում արտացոլում է որոշակի միջավայր (հաբիտատ)՝ համապատասխան բույսերով և կենդանիներով: Տարբերում է բնության բազմազանությունը և կապում է իր գիտելիքի և փորձառության հետ (այն, ինչ նա գիտի, ինչ է տեսել է...): Նպատակաուղղված կերպով օգտագործում է բազմազան նյութեր և նյութերին համապատասխան տեխնիկա: Կարող է առանձին տարրերին համարժեք համադրություններով ստեղծել ամբողջություն: Գիտակցաբար կենդանիների ֆիգուրներ է պատրաստում դրանց բնորոշ ձևերով և ստեղծում բնապատկեր՝ դրանց բնորոշ բազմազան տարրերով:

Աշխատանքը ներկայացնելիս ընդարձակ խոսում է իր մտահղացման և ստեղծագործական գործընթացի փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է տարբեր տերմիններ:

</td></tr>
</table>

SOLO տաքսոնոմիայի մակարդակ. հարաբերական Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է նրա մի քանի ասպեկտների միջև պատճառահետևանքային կապերը: Կարող է արտահայտել ենթադրություն, համեմատել, վերլուծել, գնահատել, օգտագործել տեսական գիտելիքը պրակտիկայում:	Առաջադրանքի պայմանին համապատասխան՝ ստեղծում է դիորամա, որում արտացոլում է որոշակի միջավայր (հաբիտատ)՝ համապատասխան բույսերով և կենդանիներով և կապում է իր գիտելիքի և փորձառության հետ (այն, ինչ նա գիտի, ինչ է տեսել է...): Տարբերում է շրջակա միջավայրի մի քանի տեսակ (անապատ, ջունգլի, Արկտիկա ...) և ստեղծում է դրանց համապատասխան կենդանիների ֆիգուրներ: Օգտագործում է նյութեր և նյութին համապատասխան մի քանի տեխնիկա: Կարող է առանձին տարրերի պատշաճ համադրությամբ ստեղծել ամբողջ: Պատրաստում է կենդանու ճանաչելի քանդակ և ստեղծում է բնապատկեր՝ դրան բնորոշ տարրերով: Շնորհանդեսի ժամանակ խոսում է իր մտահղացման և ստեղծագործական գործընթացի փուլերի մասին: Պատշաճ կերպով օգտագործում է մի քանի տերմիններ:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. բազմակառուցվածքային Աշակերտն ունի պատկերացում հարցի/երևույթի մի քանի ասպեկտների մասին առանձին-առանձին, չի հասկանում նրանց միջև կապը: Կարող է նկարագրել, թվարկել, տեսակավորել, համադրել, մեթոդներ օգտագործել, իրականացնել ընթացակարգեր և այլն:	Համաձայն առաջադրանքի՝ ստեղծում է դիորամա, որում արտացոլում է որոշակի միջավայր (հաբիտատ)՝ համապատասխան մի քանի բույսերով և կենդանիներով: Տարբերում է միջավայրի մի քանի տեսակ և ստեղծում համապատասխան մի քանի կենդանու ֆիգուր, սակայն կա մի փոքր անհամապատասխանություն: Ուսուցչի ցուցումով կիրառում է նյութին համապատասխան տեխնիկա: Շնորհանդեսի ժամանակ ամբողջությամբ նկարագրում է իր աշխատանքը, թվարկում է նրա բոլոր տարրերը: Կիրառում է մի քանի տերմին:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. ունիկառուցվածքային Աշակերտը քննարկում է հարցի/երևույթի միայն մեկ ասպեկտ: Տեսնում է պարզ, բացահայտ/հստակ կապերը: Հասկանում է միայն մի քանի տերմինի նշանակություն: Կարող է գիտելիքը բանավոր փոխանցել (հիշել), կատարել պարզ ցուցումներ, շրջասել, ճանաչել, անվանել կամ թվարկել:	Համաձայն առաջադրանքի՝ ստեղծում է դիորամա, որում ոչ համապատասխանաբար է արտացոլում միջավայրը (հաբիտատը): Չի տարբերում միջավայրի տեսակները: Կենդանիների ֆիգուրները ճանաչելի չեն: Կա անհամապատասխանություն կենդանիների և միջավայրի միջև: Չի կարող հետևել ուսուցչի ցուցումներին: Շնորհանդեսի ժամանակ նկարագրում է իր աշխատանքի մի քանի տարր: Հասկանում է մի քանի տերմինի իմաստ, սակայն չի կարող դրանք կիրառել ներկայացնելիս:
SOLO տաքսոնոմիայի մակարդակ. նախակառուցվածքային Աշակերտը չի ըմբռնում հարցը, կիրառում է ոչ համապատասխան տեղեկություններ կամ ընդհանրապես հեռանում է հարցից:	Աշխատանքը չի համապատասխանում առաջադրանքի պայմանին:

ԱՄՓՈՓԻՉ ԴԱՍ «ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ»

Ցանկալի է ուսումնական տարվա ավարտին հիշեցնել սովորած նյութը և տալ հարցեր՝ աշակերտների կողմից իրենց պորտֆոլիոն վերջնական կարգավորելու գործընթացում, որպեսզի նրանք կարողանան մեկտեղված տեսնել տարվա ընթացքում ձեռք բերված արդյունքները։

Կամ՝ կարելի է այս դասն անցկացնել խաղ-վիկտորինայի տեսքով։

- Դու արդեն գիտես, թե ինչպես աշխատել տարբեր նյութերով և տեխնիկայով։
- Սովորել ես պատրաստել ապլիկացիա։
- Պատրաստել ես պլաստիլինե և ստվարաթղթե կենդանիներ։
- Նկարել ես դիմանկարներ և բնապատկերներ։
- Պատրաստել ես ամանորյա զարդարանքներ։
- Ի՞նչն է քեզ ամենաշատը դուր եկել։ Ի՞նչն է քեզ մոտ լավ ստացվում։

Հարցեր.

- Ի՞նչ կարող է անել մատիտը։
- Ինչպե՞ս է մատիտը գծեր գծում։
- Ինչո՞վ կարող եմ ջնջել մատիտի հետքերը։

Ես կարող եմ մատիտով տարբեր գծեր տանել։

Ես կարող եմ նկարը գունավորել գունավոր մատիտներով։

Մատիտը գծում է կարճ, երկար, մուգ և թույլ գծեր։

Ես կարող եմ ջնջել մատիտի գծերը ռետինով։

- Ի՞նչ կարող է անել պաստելը։

Պաստելը նման է գունավոր կավիճների, այն գծում է հաստ գծեր, գունավորում է մեծ ձևեր։

Պաստելի հետքերը չեն կարող ջնջվել ռետինով։

- Ի՞նչ կարող է անել ներկը։
- Ի՞նչ կպահանջվի ներկերով ներկելու համար։

Գուաշն ու ջրաներկը ջրային ներկեր են։ Ներկերով նկարելու համար ինձ անհրաժեշտ կլինի վրձին, գունապնակ և ջուր։

Ներկը կարող է նկարել գունավոր բծեր և գծեր, գունավորել մեծ ձևեր և նուրբ սիսեռահատիկներ անել։

- Ի՞նչ կարող են անել նշիչները՝ մարկերները։

Ես կարող եմ նկարել և գունավորել նկարը նշիչներով։

Նշիչներով նկարված նկարը հստակ է և պարզ։

Նշիչի հետքերը չեն կարող ջնջվել ռետինով։

Մատիտով, պաստելով կամ ներկով նկարված ձևերի շուրջ կարող եմ նշիչով հստակ գիծ գծել։

------ ------ ------ ------ ------

- Ինչպիսի՞ գծեր գոյություն ունեն։
- Ի՞նչ կարող են անել գծերը։

Գիծը լինում է ուղիղ ու կոր, ընդհատված, բեկյալ, ալիքաձև...

Գիծը կարող է լինել փշոտ, զայրացած և բարի, չարաճճի և հանգիստ...

Գծերը կարող են նկարել այն ամենը, ինչ ես ուզում եմ։

- Ի՞նչ գույներ գոյություն ունեն։

- Ի՞նչ կարող են անել գույները:

Կարմիրը, կապույտը և դեղինը հիմնական գույներն են:
Այս երեք գույները խառնելով կարող եմ այլ գույներ ստանալ:
Նարնջագույնը, կանաչը և մանուշակագույնը բաղադրյալ գույներ են:
Գույները կարող են գունավորել նկարը, ստեղծել տխուր կամ ուրախ տրամադրություն:

- Ինչո՞ւմ է մեզ օգնում ֆոնը:

Ֆոնն ընդգծում է հիմնականը՝ ցույց տալով, թե ինչ է կատարվում հետևում:

- Ի՞նչ կարող եմ անել գունավոր թղթերով:

Գունավոր թղթերով կարող եմ ապլիկացիա պատրաստել:

------ ------ ------ ------ ------

- Ի՞նչ է մեզ պատմում դիմանկարը:

Դիմանկարը մեզ պատմում է, թե ինչպիսին է մարդը:

- Ի՞նչ է արտացոլում բնապատկերը:

Բնապատկերը բնության տեսարան է:

Եզրափակիչ ակտիվություն (խմբային աշխատանք)

- Ընկերներով պայմանավորվե՛ք, թե ով ինչ կնկարի:
- Նկարե՛ք մարդ, տուն, բույս կամ կենդանի:
- Գունավորե՛ք և կտրե՛ք-հանե՛ք ձեր նկարածները:

- Նկարները կոկիկ դասավորե՛ք մեծ թղթի վրա:
- Փակցրե՛ք այնպես, որ մեկ մեծ պատկեր ստացվի:
- Նկարի համար վերնագիր մտածե՛ք: